

Ս. Յ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ  
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐԸ**

Ուսումնամեթոդական ձեռնարկ

Երևան 2018

ՀՏԴ 351/354(07

ԳՄԴ 67.401g7

Դ 171

Երաշխավորվել է հրատարակման Հայաստանի Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Դ 171 Դանիելյան Ս. Հ.  
Միջազգային որոնողափրկարարական աշխատանքների մարտավարության հիմնահարցերը: Ուսումնամեթոդական ձեռնարկ/ Ս. Հ. Դանիելյան - Եր.: Հեղ.հրատ, 2018.- 126 էջ:

Գրախոսներ՝ Ս.Ն. Ազարյան - Ռուս-հայկական փրկարարական կենտրոնի համանախագահ, միջազգային կարգի փրկարար, գեներալ լեյտենանտ Ս. Շահմուրադյան – ԱԻՆ ՃԿՊԱ փրկարարական ֆակուլտետի ղեկանի տեղակալ, ՓԾ գնդապետ, միջազգային կարգի փրկարար

Ուսումնամեթոդական ձեռնարկում ընդհանրացված է աղետների դեպքում համաշխարհային խմբակցությունների կողմից մարդասիրական կազմակերպությունների արդյունավետ օգնության ցուցաբերման և աղետների արձագանքման համակարգի գործունեությունը:

Աշխատանքը նախատեսված է փրկարարական ստորաբաժանումների ղեկավարների, բարձրագույն հատուկ ուսումնական հաստատությունների ուսանողների, միջազգային կարգի փրկարարների, աղետների գոտում ՄԱԿ-ի ստորաբաժանումների կազմում աշխատող կորդինատորների և փորձագետների համար:

ՏԴ 351/354 (07)

ԳՄԴ 67.99(2)1y7

Դ171

Գիրքը նվիրվում է «Սպիտակ» 88-ի երկրաշարժի 30 ամյակին:

Շնորհակալական խոսքս եմ հղում՝ ՀՖԿՍՊԻ «Փրկարարական գործ» մասնագիտության հիմնադիր և մեծ մանկավարժ Ա.Ա. Չատինյանին, ինչպես նաև աշխատանքի կայացմանը աջակցած միջազգային կարգի փրկարարներ՝ Ս. Շահմուրադյանին, Ս. Բիձյանին:

**ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ**

Ուշացած, բայց հիմնավոր դասեր պետք է քաղել մեծ ողբերգությունից, քանի որ թույլ տրված սխալներն անթիվ են, իսկ սխալներ թույլ տվողները՝ աններելիորեն շատ:

Ս. Հ. Դանիելյան

## ԽՈՍՔ ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

1988 թ. Սպիտակի երկրաշարժից դասեր քաղեցին ոչ միայն հայ ժողովուրդը, այլև ամբողջ աշխարհը: Երկիրը վերափոխվեց Սպիտակի երկրաշարժից հետո:

ՖԿՅՊԻ-ը հասկանալով բարձրակարգ մասնագետների անհրաժեշտությունը նախաձեռնեց և իրականացրեց «Փրկարարական գործ» մասնագիտության ստեղծումը: Արդեն 1995թ.-ին ԱԻՎ համալրվեց առաջին բարձրագույն կրթությամբ փրկարարներով:

Այժմ գործող ԱԻՆ-ը իր հարկի տակ է հավաքել տարբեր հզոր ստորաբաժանումներ՝ փրկարար ծառայություն, սեյսմիկ պաշտպանության ծառայություն, տեխնիկական անվտանգություն, հիդրոմետ ծառայություն և այլն:

Այս կառույցում 3000-ից ավելի հրշեջ-փրկարարներ կատարելագործվել են, վերապրոֆիլավորվել, տեխնիկապես ապահովվել և ուսուցանվել: Արտակարգ իրավիճակների նախարարության ՓԾ փրկարաները անցել են բազմաթիվ քննություններ, փորձառություն են ձեռք բերել, և 2015 թ. սեպտեմբերից հանդիսանում են Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) անդամ: Այս կառույցում ընդգրկված են զարգացած երկրների՝ աշխարհի լավագույն փրկարարները: Մեր փրկարարների այդ խմբի անդամները տիրապետում են անգլերեն լեզվին, հանդերձանքն ու տեխնիկական հագեցվածությունը, պրոֆեսիոնալիզմը թույլ են տալիս նրանց յուրաքանչյուր երկրում գործել, հավասարը-հավասարի պես:

Արտակարգ իրավիճակների նախարարությունը, ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնները և 911 ծառայությունը կարողացել է մեր բնակչության համար ապահովել վստա-

հուլթյան մի կառույց, որ յուրաքանչյուր պահի ամեն ոք կարող է զանգել 911 և նրան կօգնեն հաղթահարել կենցաղային ամենապարզից մինչև ամենաբարդ դեպքերը:

Համաշխարհային փորձը վկայում է, որ մեծածավալ աղետների դեպքում որևէ պետություն ի վիճակի չէ զուտ իր ուժերով և կարողություններով արձագանքելու ստեղծված իրավիճակին և վերացնելու առաջացած հետևանքները: Հետևաբար, անչափ կարևոր է այս գործում տեղական ու միջազգային կազմակերպությունների դերը, որոնք իրենց գործունեությամբ նպաստում են պետության առջև ծառայած խնդիրների լուծմանը: Այս տեսանկյունից Հայաստանը կարելի է դասել միջազգային հանրության կողմից շոշափելի աջակցություն ստացող երկրների շարքը, քանզի ներկայումս երկրում գործում են նման կազմակերպություններ և շատերը ծրագրեր են իրականացնում աղետների կառավարման ոլորտում:

Հայաստանը Սպիտակի աղետալի երկրաշարժից հետո դարձել է ոչ միայն տարածաշրջանի, այլև աշխարհի առաջատար պետություններից մեկը՝ արտակարգ իրավիճակների ոլորտում պատրաստվածության տեսանկյունից:

Հայաստանն օգնություն ներմուծող երկրից դարձել է օգնություն արտահանող երկիր և պատրաստ է աջակցել բոլորին:

Աշխատանքում յուրահատուկ շեշտադրումները արված են միջազգային փրկարարական գործողությունների իրականացման առավել կարևոր տարրերի վրա՝ Ռ.Փ. աշխատանքների անցկացման տակտիկայի և ռազմավարության, արդյունավետ կապի հաստատման, գործողությունների ընթացքում վերականգնման միջոցառումների հարցերի և այլն:

*Մ.գ.թ., դոցենտ՝ Ս.Յ. Դանիելյան*

## ОТЗЫВ

Среди людей самых гуманных профессий, необходимых обществу независимо от его социально-политического устройства, заслужено почетное место занимают спасатели – люди, всегда готовые прийти на помощь и предотвратить беду.

Природные и техногенные чрезвычайные ситуации приводят к возникновению стихийных бедствий, аварий, катастроф с многочисленными человеческими жертвами, огромными материальными потерями.

Противодействие чрезвычайным ситуациям различного характера путем создания устойчивой инфраструктуры населенных пунктов является первоочередной задачей всех органов власти. В связи с этим все более возрастает значение подготовки специалистов с высшим образованием, способных грамотно и умело контролировать обстановку на территориях, предотвращать возникновение экстремальных ситуаций и обучать действиям население.

За последние годы увеличился как масштаб природных катастроф, так и количество жертв. чтобы улучшить потенциал государств и помочь им в подготовке и реагировании, Организация Объединенных Наций и Международная федерация Красного Креста недавно пересмотрели свои стратегии, директивы, а также инструменты.

Международная консультативная группа по вопросам поисково-спасательных операций (ИНСАРАГ) представляет собой межправительственную сеть, занимающуюся вопросами поисково-спасательных работ (ПСР) в городах и реагированием на возникающие чрезвычайные ситуации. Группа ИНСАРАГ была создана в 1991 году по следам инициативы международных поисково-спасательных команд, пришедших в 1988 году на помощь Армении, пострадавшей от землетрясения.

Для оказания помощи в случае стихийных бедствий гуманитарным организациям требуется согласие соответствующего государства.

В данной работе автор очень четко представил роль пострадавших государств и международных гуманитарных структур.

**Рецензент** - Межправительственный “Российско – Армянский центр гуманитарного реагирования”, Сопредседатель центра Полещук Ю. В.

## ԱՌԱՋԱԲԱՆ

Բնական երևույթներն ինքնին աղետ չեն: Դրանք այն ժամանակ են աղետ դառնում, երբ մարդը հայտնվում է նրանց գործունեության ոլորտում: Այսինքն, եթե ուժեղ երկրաշարժ կամ ջրհեղեղ է տեղի ունենում անբնակելի տարածքում, ապա այդ երևույթները վտանգ չեն ներկայացնում և մարդկային զոհերի պատճառ չեն դառնում: Երբ մարդը բնակվում է սեյսմաակտիվ կամ սողանքավտանգ գոտում, ապա ենթարկվում է այդ երևույթների ազդեցությանը և դրա հետևանքով կրում զրկանքներ: Այդ երևույթները դիտվում են որպես աղետներ:

Ժամանակակից հասարակությունում անհնարին է պատկերացնել երկրի Նորմալ կենսակերպը առանց համապատասխան օպերատիվ ծառայությունների, որոնք արտակարգ իրավիճակների դեպքում կծավալեն անհետաձգելի միջոցառումներ: Հրատապ գործողությունների արդյունավետությունը մեծամասամբ կախված է համապատասխան մասնագիտական պատրաստություն ունեցող մասնագետներից, պրոֆեսիոնալ փրկարարներից: Բոլոր փրկարարական խմբերի անդամներից պահանջվում է ճիշտ հաղթահարել տարատեսակ բնական արգելքները, արձագանքել ցանկացած տեխնածին վթարի: Իսկ նման արգելքները հաղթահարելու համար փրկարարից պահանջվում է ոչ միայն ֆիզիկական կոփվածություն և տեսական գիտելիքներ, այլև տեխնիկական և տակտիկական հնարքների, տեխնիկական միջոցների լիարժեք տիրապետում: Սա է այն հիմնական և առաջնահերթ պայմանը, որից կախված է հետագա աշխատանքների հաջողությունները:

Հաշվի առնելով 1988 թվականին Սպիտակում տեղի ունեցած աղետալի երկրաշարժի դասերը՝ միջազգային փրկարարական կառույցները գիտակցեցին, որ անհրաժեշտ է ունենալ արտակարգ իրավիճակներում մարդասիրական արձագանքման

համակարգ՝ հստակ նպատակներով, գործառույթներով, դերակատարներով և ընթացակարգերով: Այս համակարգը հիմնելու և կատարելագործելու հիմնախնդիրը իրականացվել է ՄԱԿ-ի կողմից:

Արդյունքում հիմնվեց Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խումբ (INSARAG), որի նպատակը տուժած երկրներին միջազգային փրկարարական օգնության տրամադրումն է, միջազգային որոնողափրկարարական խմբերին ներկայացվող նվազագույն պահանջների սահմանումը և լայնածավալ երկրաշարժերի դեպքում միջազգային օգնության համակարգման եղանակների մշակումն է:

Մինչև 2015 թվականը Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) անդամ էին ՄԱԿ-ի 194 անդամ երկրներից 33-ը: 2015 թվականին Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը գերազանց հանձնելով ՄԱԿ-ի Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG) որակավորումը և Հայաստանի Հանրապետությունը ՄԱԿ-ի 194 անդամ երկրների շարքում դարձավ Միջազգային որոնողափրկարարական խորհրդատվական խմբի (INSARAG-ի) 34-րդ անդամը:

Միջազգային փրկարարական գործողություններն ավելի ու ավելի հաճախ են կիրառվում որպես երկրներին արդյունավետ օգնության ցուցաբերման միջոց, որտեղ աղետների հանդեպ արձագանքման համակարգը անբավարար է զարգացած, կամ էլ արտակարգ իրավիճակների մասշտաբը գերազանցում է սեփական ուժերով և միջոցներով վերացման հնարավորությունը: Այդ մարդասիրական դրական միտումը կրում է օբյեկտիվ բնույթ: Առաջին՝ մարդու և բնության փոխհարաբերություններում հսկա-



յական ճգնաժամի աճը բերում է բնական համադետոնների մասշտաբների և ուժի ավելացման: Երկրորդ՝ բնածին և տեխնածին աղետները դառնում են ավելի փոխկապակցված, աճում է մարդու և բնության կախվածությունը տեխնոլոգիայի վիճակից: Երրորդ՝ մարդկությունը ավելի հստակ է գիտակցում, որ սեփական անվտանգության համար կարելի է պայքարել միայն միջազգային հանրության համաձայնեցված ուժերով: Չորրորդ՝ աղետների կանխարգելման և նրանց հետևանքների վերացման տեխնիկայի և տեխնոլոգիաների անհավասարաչափ զարգացումը թույլ չի տալիս նույնիսկ առավել զարգացած երկրներին իրենց հանգիստ զգալ այդ առումով թույլ հարևանների առկայության դեպքում:

Ստեղծված է մարդասիրական կազմակերպությունների մի ամբողջ գունապնակ, նախատեսված աղետների դեպքում օգնության ցուցաբերման համար: Նրանցից առավել հզոր և հեղինակային է համարվում Միացալ Ազգերի Կազմակերպությունը (ՄԱԿ), որն իր կազմում ունի հումանիտար համակարգի ստորաբաժանումներ: Արդյունքում կարելի է արձանագրել, որ XXI –րդ դարի սկզբին, գոյություն չունի ոչ մի խոշոր աղետ, երբ դոկոր պետությունները, միջազգային կազմակերպությունները օգնություն չեն ցուցաբերել տուժած երկրներին:

ՀՀ ԱԻՆ ստեղծումից հետո նրա ստորաբաժանման անձնակազմը բազմիցս մասնակցել է միջազգային փրկարարական գործողությունների: Նման գործողությունների անցկացման փորձը կարիք ունի իմաստավորման և որոնողափրկարարական աշխատանքների տեխնոլոգիաների և կառավարման առավել ռացիոնալ հնարքների գործնական կիրառման:

Ձեռնարկում յուրահատուկ շեշտադրումները արված են միջազգային փրկարարական գործողությունների իրականացման առավել կարևոր տարրերի վրա՝ որոնողափրկարարական աշխատանքների անցկացման տակտիկայի և ռազմավարության, արդյունավետ կապի հաստատման, գործողությունների ընթացքում վերականգնման միջոցառումների հարցերի և այլն:

Ուսումնական ձեռնարկը նախատեսված է փրկարարական ստորաբաժանումների ղեկավարների, բարձրագույն հատուկ ուսումնական հաստատությունների ուսանողների, միջազգային կարգի փրկարարների, աղետների գոտում ՄԱԿ-ի ստորաբաժանումների կազմում աշխատող կոորդինատորների և փորձագետների համար:

# ԳԼՈՒԽ 1

## ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

### ***1.1. Որոնման և փրկման հարցերով միջազգային խորհրդատվական խումբ***

Որոնման և փրկման հարցերով խորհրդակցական խումբը ձևավորվել է 1991թ. որպես կոոպերատիվ միավոր UN(ՄԱԿ) և ազգային SAR (որոնողափրկարական) կազմակերպություն: Նրա մեջ են ընդգրվել տարբեր երկրների SAR ներկայացուցիչներ և տարբեր պատկանելիության և ենթակայության իրավական կազմակերպչական կառույցներ (պրոֆեսիոնալ, կամավորական, ասոցիատիվ, պետական, ոչ պետական և այլն): Արդյունքում փորձ է արվել ձևավորելու որոնման և փրկման միջազգային համակարգ: Առավել մոտ գտնվելով ազգային որոնողափրկարարական ռեսուրսներին INSARAG-ն այսօր հավակնում է կենտրոնի դերը, ընդունակ լինելով համախմբել տարբեր որոնողափրկարարական ռեսուրսներ: Այդ ուղղությամբ արդեն արվել են մի շարք կառուցվածքային քայլեր: Գոյություն ունեցող համակարգը դեռ կրում է խորհրդակցական, տեղեկատվական և հանձնարարական բնույթ: Ներկայումս INSARAG-ի ջանքերով ստեղծվել է միջազգային որոնողափրկարարական կառույցների տվյալների բազա, որտեղ պահվում են թիմերի կիրառման ոլորտի և հնարավորությունների տեղեկությունները:

Համոզմունք կա, որ դա թույլ կտա սեղմ ժամկետում արտակարգ իրավիճակների գոտի ներգրավել անհրաժեշտ ուժեր և միջոցներ: Մշակվել են մի շարք ուղեցույցներ և հրահանգներ, որոնց դերն է թեթևացնել ԱԻ-ի ցանկացած փուլում աշխա-

տանքներին միջազգային որոնողափրկարարական թիմերի ներգրավման գործընթացը, միջազգային փրկարարական գործողություններին մասնակից ազգային կազմավորումների տեխնիկական հագեցվածության և անձնակազմի պատրաստության պահանջների միասնականացումը:

INSARAG-ը կազմված է ղեկավարից, ղեկավարող խմբից, շրջանային և աշխատանքային խմբից: Խմբի կազմի մեջ են մտնում միջազգային գործողություններին մասնակցելու ընդունակ՝ UN OCHA-ի (մարդասիրական հարցերի կորդինացիայի գրասենյակի, միջազգային Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի / IFRC/ ներկայացուցիչները, միջազգային SAR թիմերի ղեկավարները):

Տարածաշրջանային խմբերը բաժանվում են հետևյալ բաժանմունքների՝ Աֆրիկա-Եվրոպա, Մերձավոր արևելք, Ամերիկա (Հյուսիսային, Կենտրոնական և Հարավային), Ասիական-Խաղաղօվկիանոսյան շրջանների: Աշխատանքային խմբերը ստեղծվում են առանձին, ի համապատասխան ընթացիկ խնդիրների:

## ***1.2. Տուժած երկրի կողմից օգնության վերաբերյալ խնդրարժան անցման ուղիները և ընթացակարգը***

Արտակարգ իրավիճակների պատճառով տուժած երկրի կողմից օգնության վերաբերյալ խնդրարժան անցման ուղին և ընթացակարգը մեծապես կախված է մի շարք շարժառիթներից՝ կառավարության քաղաքական ուղղվածությունից կամ ընդհանուր առմամբ տարածաշրջանում քաղաքական իրավիճակից, միջազգային կազմակերպություններին կամ դաշինքներին երկրի պատկանելիությունից, ԱԻ դեպքում նրա պաշտպանության համակարգի պատրաստության աստիճանի առկայությունից:

Ընդհանուր առմամբ միջազգային օգնության բոլոր հարցերը ըստ տեսակի կարելի է միավորել երեք խմբում.

- Արտակարգ իրավիճակների դեպքում փոխօգնության վերաբերյալ միջկառավարական համաձայնագրերի և այլ պայմանավորվածությունների հիման վրա (օգնության ապրիոր-հայտնի ձևերով և չափսերով նախօրոք խնդադրված պայմանավորվածությամբ),
- օգնության կանչ միջազգային հանրությանը «աղետի գոտու» տուժած շրջանի հայտարարությամբ («Բոլորին, բոլորին, բոլորին... Ինչով կարող եք....»),
- UN լիազոր ներկայացուցչին՝ երկրի կառավարության, UNDP-ի կոորդինատորի, UNHCR, WHO, UNEP կոմիսարների, UN-ի լիազոր ներկայացուցչի կողմից օգնության անմիջականորեն պահանջ (նպատակային, առավել հստակ ձևակերպված պահանջ):

Բոլոր նմանատիպ խնդադրումներին միավորում է այն, որ նրանք անկախ իրենց ձևից նախ և առաջ ուղղված են ՄԱԿ-ին: Եվ որպես կանոն, բոլոր տարբերակներում լինում է ՄԱԿ-ի կողմից օգնության ցուցաբերումով պատասխան գործողություն: Խնդադրման ժամանակահատվածում արդեն միանում են նաև անհետաձգելի օգնության ցուցաբերման այլ միջազգային մեխանիզմներ: Բացի այդ, վերը նշված շատ պետություններ և կազմակերպություններ սովորաբար ինքնուրույն առաջարկում են տարատեսակ օգնություններ:

### ***1.3. Միջազգային որոնողափրկարարական***

#### ***կազմակերպության արձագանքման հիմնական կարգը***

Որոնողափրկարարական աշխատանքներ իրականացնող մասնակից կողմերի ներկայացվող պահանջները (չխառնել միջազգային ԱԻ-ի հետևանքների վերացման հետ) ունեն բավականին ձևական բնույթ: Կոնկրետ կանոնակարգը որոշվում է ՍՆ ՕՇԱ-ի կողմից ստացված տեղեկատվության հիման վրա ազգային որոնողափրկարարական կազմակերպության թիմի ձևավորման փուլում, կամ փրկարարական գործողությունների անցկացման ընթացքում:

Նրանց բոլորին պայմանականորեն կարելի է բաժանել երեք ենթախմբերի.

- ՍՆ –ի կազմակերպության, պարտականությունները,
- պարտականությունների պահպանում օգնություն ցուցաբերողի կողմից,
- պարտականությունների պահպանում օգնություն ստացողի կողմից:

Ընթերցողին կարող է վիճելի թվալ մեր կողմից ստորև բերված որոշ դրույթներ: Այն անհրաժեշտ է հասկանալ որպես՝ «պատրաստության և ռեսուրսների վերաբերյալ նախնական համաձայնություն» ՍՆ-ի հովանավորության ներքո անցկացվող գործողությունների կատարման համար:

#### ***1.3.1. ՍՆ /ՕՇԱ/ Կազմակերպության պարտականությունները***

- Պահպանել և մշտապես թարմացնել միջազգային փրկա-

րարական ծառայության տվյալների տեղեկատվական բազան:

- Տարածել տեղեկատվական տեղեկագրեր, ահազանգի հաղորդագրություններ, տեղերում իրավիճակի գեկուցում, ինդրանք՝ օգնության կոչ:
- Օգնության ցուցաբերման նպատակով փնտրել ռեսուրսներ:
- Համաձայնեցնել SAR թիմերի ուղարկումը:
- Համապատասխան դեպքերում ուղարկել UNDAC (աղետների հետևանքների կորոդիխնացման և գնահատման խումբ) խումբ:
- Տուժած երկրում կազմակերպել OSOCC (գործողությունների կորոդիխնացնող կենտրոն) և ընդունման կենտրոն:
- Մինչև վերջ կատարել աղետի ենթարկված երկրի առջև ստանձնած բոլոր պարտավորությունները

### ***1.3.2. Աղետի ենթարկված երկրի պարտավորությունները***

- SAR փրկարարական ուժերի համար սեփական տարբերիչ նշաններով տրանսպորտի, պարագաների, անձնակազմի և սարքավորումների տրամադրում:
- Փոխադրամիջոցի և Էներգարտադրող սարքավորումների համար անհրաժեշտ քանակի վառելիքի ապահովում:
- SAR թիմերի համար անհրաժեշտ նյութատեխնիկական և բժշկական միջոցների առավելագույն հասանելիության ապահովում, կամ դրանց ձեռքբերման աջակցություն:

- Բազային ճամբարի տեղակայման համար տարածքի տրամադրում:
- SAR թիմերի և ռեսուրսների անվտանգության ապահովում:
- Անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անձնակազմի, թարգմանիչների, սարքավորումների և ծախսվող նյութերի տրամադրում:

*Աղետից տուժած երկիրը հրաժարվում է պահանջել՝*

- անհետաձգելի բժշկական օգնության տրամադրում: (SAR թիմերի կողմից նման օգնությունն ցուցաբերվում է իրենց հնարավորությունների սահմաններում),
- իրենց կիրառման առումով հատուկ թույլվություն պահանջող դեղամիջոցներ,
- կարանտին շների համար,
- մաքսային ընթացակարգերի, ելքի և մուտքի ռեժիմի լիարժեք պահպանում,
- կապի մասանգիտացված սարքավորումների թույլատվություն,
- փոխադրամիջոցների և սարքավորումների միջազգային հավաստագրեր:



## ԳԼՈՒԽ 2

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

#### *Հիմնական տեխնոլոգիական համակարգերը*

Արտակարգ իրավիճակներին արձագանքման արդյունավետությունը կախված է մի շարք գործոններից.

- ՀՀ ԱԻ կառավարման մարմինների և պետական իշխանությունների կողմից տեղեկատվության ապահովում, ինչը գործողությունների պատրաստության ընթացքում ներառում է անհրաժեշտ տվյալների ստացում և փոխանակում,
- տարբեր մակարդակներում կառավարչական լուծումների մշակում և իրավիճակի վերլուծության համակարգի առկայություն, որը թույլ կտա ընտրել արձագանքման ռացիոնալ ձևեր և մեթոդներ, ներգրավել անհրաժեշտ ուժեր և միջոցներ, իրականացնել միջազգային փոխգործողություններ,
- որոնողափրկարարական ծառայության գործողությունների պատրաստություն, կադրերի որակավորում, հատուկ սարքավորումների, ժամանակակից տեխնիկայի, փոխադրամիջոցների և կապի, կենսապահովման միջոցների առկայություն,
- միջազգային փրկարարական գործողությունների ֆինանսական և ռեսուրսային վիճակի ապահովում,
- աղետի գոտու կազմակերպչական գործողությունների և կոնկրետ որոնողափրկարարական միջոցառումների լավագույն կազմակերպում,

- միջազգային փրկարարական գործողությունների իրավա-նորմատիվային ապահովում,
- ԱԻ-ում օգնություն ցուցաբերող ազգային և միջազգային մարմինների համակարգային փոխգործողության առ-կայություն:

Վերը նշված յուրաքանչյուր և որոշ այլ գործոնների իրակա-նացումը պահանջում է որոշակի կազմակերպչական միջոցա-ռումներ, տեխնիկական միջոցներ և ռեսուրսներ:

Բոլոր տեսակի և չափսերի ԱԻ –ի ժամանակ կիրառվող այդ գործոնները կարելի է համախմբել մի քանի հիմնական տեխնո-լոգիական բլոկներում:

### ***Տեղեկատվական բլոկ***

Համախմբում է միջոցառումներ, ուղղված առաջնային և ողջ որոնողափրկարարական աշխատանքների կատարման ընթաց-քում տեղեկատվության ստացմանն ու արդյունավետ փոխա-նակմանը:

Որոշում է տեղեկատվության մշակման, փոխանակման և ստացման կարգը: Որպես տեխնիկական միջոց կիրառվում է կապի միջոցներ, մշտադիտարկման և հաշվողա-տեղեկատվա-կան համակարգեր:

### ***Միջազգային գործողությունների համար.***

- Այս բլոկում առավել բարդություն է ներկայացնում նախ-նական փուլն, երբ ԱԻ-ի գոտուց ստացված առաջնային տեղեկատվությունը կրում է ավելի ենթադրական բնույթ և գործնականորեն չի ենթարկվում ճշգրտման:
- ԱԻ-ի գոտում բավականին բարդ բաղադրիչ է համար-վում տեղեկատվական փոխանակումը, այդ թվում գոր-

ծաղիր իշխանության տեղական մարմինների, մասսայական տեղեկատվական միջոցների կողմից:

### ***Օպերատիվ ղեկավարման կենտրոնի բլոկ***

Ներառում է իրավասու լուծումների ընդունումը և տեղեկատվության լիարժեք վերլուծությունն ապահովող բոլոր գործողությունները, որոնողափրկարարական գործողությունների պլանի իրականացումը և մշակումը, բոլոր մասնակից կազմակերպությունների համաձայնեցումը:

Արտացոլում է որոնողափրկարարական գործողությունների ավարտման աշխատանքերի բովանդակությունը (արդյունքների վերլուծություն, հանձնարարականների մշակում): Աշխատանքում կիրառվում է համակարգչային համակարգեր և փորձագիտական գնահատականներ:

### ***Միջազգային գործողությունների ժամանակ բնորոշ են.***

- Մոբիլիզացիոն ժամանակահատվածի կրճատումը, ներքին լրացուցիչ ռեսուրսների առավել մեկուսացումը:
- Թիմի առկա ռեսուրսներին հատուկ ուշադրության առանձնացումը:

### ***Յուրահատուկ տարրեր են համարվում.***

- մաքսային ձևակերպումների համար արտակրվող և ներկրվող սարքավորումների փաստաթղթերի պատրաստումը, կենսապահովման միջոցների, սահմանի հատման ընթացակարգերի ձևակերպումը:

### ***Փոխադրամիջոցների բլոկ***

Բացահայտում է որոնողափրկարարական ստորաբաժանման շարժունակության ապահովման կազմակերպչա-տեխնիկական ճանապարհները, աղետի գոտի անհրաժեշտ քանակի

փրկման և կեսապահովման միջոցների հասցևումը:

Հենվում է մի շարք փոխադրամիջոցների ամբողջության վրա՝ ինքնաթիռներ և ուղղաթիռներ, հատուկ մեքենաներ, ծովային և գետային լողացող միջոցներ, պարաշյուտա-բեռային համակարգեր:

***Միջազգային գործողությունների համար.***

- Որոնողափրկարարական թիմերի շարժունակության նկատմամբ առավել կոշտ պահանջներ:
- Բոլոր տրանսպորտային միջոցները պետք է լինեն «անփվների վրա»:

***Որոնողափրկարարական բլոկ***

Միավորում է փրկարարական ստորաբաժանումների կազմած միջոցառումները և օժանդակող կառույցները, որոնք թույլ են տալիս՝ աղետի գոտու մեկուսացում, տուժածների փնտրման անցկացում և նրանց կյանքին և առողջությանը սպառնացող վտանգի վերացում, տուժածներին առաջին օգնության ցուցաբերում և առողջապահական հիմնարկներ տեղափոխում, փրկարարական գործողությունների մասնակիցների և աղետի գոտում գտնվող անձանց անվտանգության ապահովում, իրավիճակի վատթարացում թույլ չտալու կամ կենսագործունեությունը վերականգնող միջոցառումների իրականացում:

***Միջազգային գործողությունների համար***

- Անսպասելիությամբ «ամենահարուստ» բլոկն է: Աշխատավայրում գործընկերների հետ միշտ տարբեր փոխգործողությունների կազմակերպում: Տուժած երկրի ազգային առանձնահատկությունների հաշվի առնում: Բարդություններ, աշխատանքներում բնակչության մասնակցության ներգրավման ժամանակ:

### ***Բժշկա-սանիտարական բլոկ***

Իրենից ներկայացնում է աղետի գոտում տուժածներին, ինչպես նաև այլ անձանց արդյունավետ բժշկական օգնություն ցուցաբերելու գործողությունների ամբողջություն, սանիտարական իրավիճակի վատթարացման հետ կապված հիվանդությունների կանխում, աղետի գոտու սահմաններում այդ հիվանդությունների հևարավոր կանխարգելում:

### ***Միջազգային գործողությունների համար***

- Բժշկական օգնության ծավալները նախօրոք որոշվում է (բացի հատուկ բժշկա-սանիտարական հիվանդանոցային գործողություններից), և որպես կարգ, որոնողափրկարարական թիմի բժշկական ռեսուրսները սահմանափակ են: Ուստի, թիմի անձնակազմի բժշկական օգնության ծավալը տուժածներին և տեղացիներին ակնհայտորեն տարբերվում է: Թիմի ողջ անձնակազմը պետք է պատրաստ լինի նրան, որ բժշկական օգնություն պետք է ցուցաբերվի առաջին հերթին թիմի անդամին: Դրա հետ կապված են որոշակի հոգեբանական բարդություններ.
- անհրաժեշտ է հաշվի առնել Էկզոտիկ հիվանդությունների վտանգը:

### ***Կենսապահովման բլոկ***

Ինքնուրույն ողջ մնալու, փրկարարների արդյունավետ աշխատանքի, տուժածների կյանքի պահպանման համար անհրաժեշտ են էներգետիկ, ֆիզիոլոգիական և այլ պայմաններ ապահովող միջոցառումների ամբողջություն: Տեխնիկական միջոցներն են՝ շարժական ճամբարները, էներգետիկ սարքավորումներ:

րը, ջրի հայթայթման և պատրաստման սարքերը, սննդամթերքը, սանիտարահիգիենիկ միջոցները:

### ***Միջազգային գործողությունների համար.***

- Հիմնական բարդությունը՝ նախապատրաստության փուլում շարժունակության և կենսապահովման միջև օպտիմալ ընտրությունն է: Կենսապահովմանը միջազգային գործողություններում լավ կիրառելի է «գոյատևում» տերմինը:

### ***Օպերատիվ կառավարման բլոկ***

Որոշում է աղետի գոտու՝ կոնկրետ օբյեկտներում փրկարարական ստորաբաժանումների և նրանց մասնագետների գործողությունների կարգը, որոնողափրկարարական թիմի, ապահովող ծառայությունների, օպերատիվ ղեկավարման կենտրոնի բաժնի և այլ կազմակերպությունների հետ փոխադարձ կապը և փոխգործողությունները:

### ***Միջազգային գործողությունների համար.***

- Այս բաժնում գործող անձնակազմի որակավորմանը ներկայացվում է ամենաբարձր պահանջները: Ոչ սովորական, օպերատիվ պայմաններում, ինքնուրույն, ծանրակշիռ կառավարչական լուծումների ընդունման անհրաժեշտություն:

### ***Վերականգնողական բլոկ***

Ներառում է՝ ղեկավար կառույցների, փրկարարական ծառայությունների, տեխնիկայի, սարքավորումների նախնական վիճակի վերադարձման, արտակարգ իրավիճակների հետևանքների վերացմանը մասնակիցների ֆիզիկական և հոգեբանական վիճակի վերականգնման, ռեսուրսների լրացման, դասերի քաղման ամբողջական միջոցառումներ:

### ***Միջազգային գործողությունների համար.***

- Հիմնական վտանգը՝ «հաջողությունից գլուխը կորցնելն է»: Հաջող փրկարարական գործողությունից հետո, բոլոր գործող ստորաբաժանումների ղեկավարները պետք է առավել մանրամասնորեն, հետևողականորեն, մինչև վերջ անցկացնեն բոլոր վերականգնողական միջոցառումները:


Յուրաքանչյուր նշված բաժին, անկախ գործողության հաջորդականությունից, կատարողների կազմից և տեխնիկական միջոցների լրակազմից, որոշում է այդ գործողությունները իրականացնող կադրերի որակավորմանը, կիրառվող սարքավորումներին, կատարվող աշխատանքի որակին, ժամանակին, ինչպես նաև անվտանգության կանոններին ներկայացվող պահանջները: ՌՓ գործողությունների անցկացման ժամանակ այդ ամենը պետք է ապահովի առավելագույն արդյունքի ձեռք բերում՝ նվազագույն ժամանակային և տնտեսական ծախսերով, այն, ինչը անվանում են փրկարարական աշխատանքների արդյունավետություն:

Փրկարարական գործողությունների ժամանակային ցուցանիշների վրա ազդում են բոլոր թվարկված տեխնոլոգիական բաժինները, ուստի այդ ամենը որոշում են նաև ԱԻ-ին արձագանքման արդյունավետությունը և վերջնական հաշվով՝ ողջ փրկարարական գործողությունների հաջողությունը և անհաջողությունը:

Միջազգային փրկարարական թիմի շարքային անդամի համար այս կամ այն բաժնի առկայությունը ոչ այնքան ակնհայտ է: Սակայն, միջազգային որոնողափրկարարական թիմի աշխատանքի ողջ փուլի դիտարկման ժամանակ նկատելի է, որ բոլոր բաժինները այս կամ այն աստիճանի ներկայացված են և կազմում են միասնական հաջորդական տեխնոլոգիական շղթա: /Աղյուսակ 1./

**Աղյուսակ 1.**

**ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԹԻՄԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ  
ԿԱՌՈՒՑՎԱԾԸՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ  
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ**





### ԳԼՈՒԽ 3

#### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ

#### ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

#### ԵՎ ՀԱՄԱԶԱՅՆԵՑՈՒՄԸ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ

#### ԹԻՄԵՐՈՒՄ

Միջազգային փրկարարական գործողությունների անցկացմանը ներգրավված միջոցների և կազմի ուժերը կարող են բավականաչափ կազմափոխվել կախված ԱԻ տեսակից, կատարվող աշխատանքից և այլ գործոններից: Սակայն, ցանկացած դեպքում այն կարող է կրել ներքին ռեսուրսներից մեկուսացված ձև (թեկուզ ժամանակավոր), կազմակերպչորեն ավարտված վթարափրկարարական ստորաբաժանում՝ «Թիմ» անվանումով: Թիմում ներկայացված են ՈՓ ջոկատի՝ օպերատիվ, արձագանքման և ապահովման բոլոր հիմնական հաստիքային ստորաբաժանումները՝ «Ծառայություն», «Բաժիններ» անվանումով:

**Թիմի հիմնական նպատակը համարվում է տուժածների անվտանգ և բարեհաջող փրկումը, խիստ սահմանված մարդկային, կառավարչական և նյութատեխնիկական ռեսուրսների ժամանակ:** Նման պայմաններում, որոնողափրկարարական գործողությունները թիմի բոլոր ծառայություններից պահանջում է առանձնահատուկ հստակ փոխգործողություն: Կորոդի-նացնող կենտրոնը համարվում է նշանակված կամ ընտրված թիմի ղեկավարը (միանձնյա ղեկավարության սկզբունք), որը բոլոր ծառայությունների հետ միասին գործողությունների կատարման ժամանակ՝ օպերատիվ-վերլուծական (գործողությունների պլանավորում) և տեխնիկական անվտանգության բաժնի աջակցությամբ պետք է միավորի որոնման, փրկման, բժշկական սպասարկման և տեխնիկական ապահովման գոր-


ծառույթները: Թիմի ղեկավարը, սեփական գործողությունները պետք է նաև համաձայնեցնի և ստանա հետագա հրահանգները (OSOCC) UCC կամ LEMA-ի կողմից, ինդիվիդուալ իրականացման համար մշակի ռազմավարություն և մարտավարություն, ԱԻ պայմաններում ապահովի անհրաժեշտ տեղեկատվություն:

***3. 1. Միջազգային փրկարարական գործողությունների  
ժամանակ որոնողափրկարարական թիմի  
կառուցվածքը***

Կառավարման կառուցվածքը կազմված է երեք գործառնական բաղադրիչներից, ընդ որում կառավարումը պահպանվում է՝ գործողության պլանավորումը և անվտանգությունը ապահովող կառույցների կողմից: /Աղյուսակ 2./

**Աղյուսակ 2.**

**SAR ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԹԻՄԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԸ**



## ***Ստորաբաժանման հիմնական գործառույթները***

***Թիմի կառավարումը*** - ողջ գործողությունների պլանավորում և ղեկավարում, ծառայությունների և բաժինների համաձայնեցում և գնահատում, այլ կազմակերպությունների հետ փոխգործակցություն, գործավարություն, տեխնիկայի անվտանգության ապահովում:

***Օպերատիվ ծառայություններ/բաժիններ/*** - որոնման տակտիկական գործողությունների, փրկման և բժշկական սպասարկման անցկացում:

***Տեխնիկական ծառայություններ/բաժիններ/*** - աշխատել վտանգավոր նյութերի հետ, ինժեներական ապահովում, կառույցների գնահատում, աշխատանքների համաձայնեցում ծանր ամբարձիչների, վերահան մեքենաների և այլ սարքավորումների կիրառմամբ:

***Համակողմանի ապահովման ծառայություններ /բաժիններ/*** - կապի միջոցների և համակարգի ապահովման մշակում, փոխադրամիջոցների, մատակարարման և ապահովման ռեսուրսների խնդրի լուծում:

## ***Չորահավաք***

Թիմում պետք է լինի զորահավաքի հատուկ պլան, որում մանրամասնորեն նշվում է պատրաստության հայտարարման պահից, մինչև թիմի և սարքավորումների ժամանման վայր հասնելու պահը: Միայն մանրամասն ճշտված օպերատիվ արձագանքման պլանը թույլ կտա ժամանակին ապահովել օդային և ցամաքային փոխադրում: Թիմի ղեկավարը, յուրաքանչյուր գործողությունից հետո, նրա արդյունավետությունը ապահովելու համար պետք է պարտադիր կերպով ճշտի տվյալ պլանը:

Պլանում ներկայացնում են առանձնահատուկ տեսակետեր, կապված աղետի բնույթից, տվյալ երկրի առանձնահատկություններից:

**3.2. ԱՒ գոտի ժամանումը, լիազորության ոլորտի ճշգրտումը**

ԱՒ գոտի թիմի ժամանման ժամանակ, ղեկավարները OSOCC-ի և LEMA-ի համապատասխան անձնակազմի կողմից պետք է անցնեն հրահանգավորում՝ իրավիճակի պարզման, թիմի խնդիրներն ու պահանջներն որոշելու համար:

Ենթադրվում է, որ OSOCC-ի ներկայացուցիչը նախապես հրահանգավորում է LEMA-ի անձնակազմին թիմին, ջոկատի ժամանման հաշվարկային և հնարավորությունների վերաբերյալ:

***Գործողությունների անընդմեջ անցկացման համար անհրաժեշտ է OSOCC -ից արագ պահանջել թիմի ղեկավարի հաշվետվության ձևը և հաջորդականությունը: Աշխատանքի գործընթացում ցանկացած մշակութային սովորույթ, որը կարող է դառնալ տարածայնության առարկա, պետք է համապատասխան ձևով պարզվի OSOCC ներկայացուցիչների կողմից:***

Թիմի ղեկավարը OSOCC-ից և LEMA -ից պետք է նաև պահանջի հատուկ հրահանգավորում օպերատիվ իրավիճակի վերաբերյալ, ինչի հիման վրա հնարավոր է որոշել իրավիճակի զարգացման առանցքային պահերը և առաջիկա գործողությունների պլանի ճշտումը:

***Անհրաժեշտ է հստակ որոշել թիմի, OSOCC-ի և տեղական պաշտոնական մարմինների միջև փոխհարաբերություն-***

**Ներքո:** Բացի այդ, OSOCC-ը տեղում նշանակում է սերտ հարաբերություն հաստատող անձ (հետագայում՝ OSOCC-ի հերթապահ):

OSOCC-ը թիմի ղեկավարին ծանոթացնում է գոյություն ունեցող փոխգործողությունների պլանին, հաստատում ընթացիկ վիճակի հաշվետվության ներկայացման գրաֆիկը, օպերատիվ հրահանգների և թիմի հաշվետվության զեկույցների ցուցակները: Պետք է որոշվի OSOCC-ին հարցման և փոխանցման հաշվետվության եղանակը: Հնարավոր է տվյալ փուլում առաջարկվի տվյալ շրջանում ընդունված հաղորդման ձևաթղթերի կիրառում: Տարբերակներ կարող են լինել քջային և արբանյակային հեռախոսային կապը, տրամադրված ռադիոհաճախակալությունը, համացանցը կամ ուղղակի՝ սուրհանդակը: Թիմի ղեկավարը պետք է իմանա OSOCC-ին տեղեկատվության հաշվետվության ներկայացման ձևը: Անհրաժեշտ է համաձայնացնել հատուկ ռադիոհաճախակալություններ՝ թիմի, OSOCC-ի, տեղական հրամանատարական պահակակետի և այլ օժանդակ ուժերի միջև կապ հաստատելու համար: Անհրաժեշտ է հարցապնդում անել տեղական մարմիններին, աջակցման հնարավոր տեղեկատվության մասին, որոշել անձնակազմի և սարքավորումների համար առկա փոխադրամիջոցների վիճակը, բացահայտել թիմի համար պատասպարանների, ինչպես նաև ջրի և սննդի ռեսուրսների տեղակայության վայրը: Կարևոր է գնահատել օգտագործման համար նրանց պիտանիությունը, ինչպես նաև մատակարարման գրաֆիկի և գտնվելու վայրի որոշումը: Անհրաժեշտ է բացահայտել այլ առկա ռեսուրսները և հաստատել նրանց հարցադրման մեխանիզմները: Հատկապես անհրաժեշտ է հաշվի առնել վերամբարձ կռուսկների, բուլդոզերների և այլ ծանր սարքավորումների առկայությունը: Թիմի խնդիրները

պետք է քննարկվի OSOCC –ի կամ նրա տեղական ներկայացուցիչների կողմից: Քննարկման ժամանակ անհրաժեշտ է ներառել մինչև ԱԻ–ի ծագումը տեղանքի վերաբերյալ տեղեկատվություններ, ներառված ժողովրդագրական տվյալներ, շփման լեզուն, շենքերի տվյալներ/դպրոցներ, գործարաններ, հասարակական շենքեր/ և տուժածների ենթադրյալ քանակ: Հատկապես անհրաժեշտ է որոշել խնդիրները կապված թիմի լրացուցիչ հնարավորությունների հետ:

***Թիմի բոլոր խնդիրները պետք է գտնվեն նախապես OSOCC–ի և LEMA–ի հետ համաձայնեցվածության սահմաններում:*** Անհրաժեշտ է հավաքել ԱԻ վերաբերյալ ողջ տեղեկատվությունը, ներառյալ տեղանքի քարտեզը, նրա բնույթի տվյալները, շինությունների և հաղորդակցությունների պլանները:

Անհրաժեշտ է քննարկել առանձնահատուկ բժշկական տեսակետները, հիվանդների հանձնման հարցերը, բժշկական սպասարկման տեղական համակարգի ընթացիկ վիճակը, ինչպես նաև լրացուցիչ արտաքին ռեսուրսները (Կարմիր խաչ, MSF և այլն): Առանձին պետք է սահմանել թիմի տուժած անդամների տեղափոխման կարգ, որը կարող է տարբերվել ԱԻ գոհերի տեղափոխումից:

OSOCC–ի տեղական մարմինները պետք է որոշեն թիմին հատկացված տարածքում գործողությունների կարգը, հաշվի առնելով նախորդ և ընթացիկ աշխատանքները, այլ թիմերի կարգավիճակը, տեղամասում հաստատելով փոխգործողությունների եղանակը: Անհրաժեշտ է լրացուցիչ բացահայտել ԱԻ գոտում կոմունալ ծառայությունների, հասարակական աշխատակիցների կարգավիճակը (կախվածությունը):

Խնդիրների ճշգրտման ժամանակ հատուկ վերապահվում է թիմի անձնակազմի անհատական և գույքային անվտանգության հարցերի ապահովումը:

***ԱՒ գոտում աշխատանքների համաձայնեցման խնդիրը հանդիսանում է OSOCC-ի գործառույթը և չի մտնում թիմի գործունեության ոլորտի մեջ:***

LEMA –ի ներկայացուցիչները պետք է ունենան տեղեկատվություն թիմի հնարավորությունների վերաբերյալ համապատասխան փաստաթղթի կրկնօրինակը, թիմի կազմի համառոտ տեղեկությունը: Բացի այդ, պետք է որոշվեն թիմի համար սահմանափակումները, օրինակ՝ սահմանափակ բժշկական ռեսուրսներ, փոխադրամիջոցների ոչ բավարար քանակություն և այլն: Պետք է նաև սահմանվեն թիմի և անձի ապահովմանը վերաբերվող հնարավոր պահանջները, լիազորված են պահանջել համապատասխան օգնություն: Տեղական իշխանությունից անհրաժեշտ է պահանջել տվյալ իրավիճակին բնորոշ տեղեկություններ ցանկացած քաղաքական կամ առանձնահատուկ տեսակետերի վերաբերյալ: Թիմի ղեկավարը, պետք է իշխանության կողմից ստանա բացատրություն տվյալ երկրի կամ շրջանի առանձնահատկությունների մասին: Ելնելով այդ տեղեկությունից, հնարավոր է հարկ լինի պլանավորել լրացուցիչ միջոցներ, թիմի անդամների անվտանգության ապահովման վերաբերյալ:

OSOCC թիմի ղեկավարի և LEMA ներկայացուցչի միջև նախնական փոխգործակցությունը կարող է եապես նպաստել գործողությունների հետագա հաջողությանը:

- Աղետի երկրի ժամանման պահից մինչև մեկնումը, թիմի ղեկավարը պետք է օպերատիվ կերպով ենթարկվի, հաշվետու լինի և ստանա ցուցումներ OSOCC-ի կողմից:



- OSOCC-ը կլինի համակարգող մարմին բոլոր միջազգային որոնողափրկարարական թիմերի համար:
- Ցանկացած մշակութային սովորույթ, որն աշխատանքի գործընթացում կարող է դառնալ տարածայնության առիթ, պետք է համապատասխանորեն պարզաբանվի OSOCC-ի ներկայացուցիչների կողմից:
- Անհրաժեշտ է հստակորեն որոշել թիմի, OSOCC-ի և տեղական պաշտոնատար անձանց միջև փոխհարաբերությունները:
- Թիմի բոլոր խնդիրները պետք է գտնվեն OSOCC-ի և LEMA-ի հետ նախնական համաձայնեցման սահմաններում:
- Ահ գոտում աշխատանքի համաձայնեցման խնդիրը հանդիսանում է OSOCC-ի գործառույթը և չի մտնում թիմի գործունեության ոլորտ (բացի վաղ ժամանման դեպքում):
- OSOCC թիմի ղեկավարի և LEMA-ի ներկայացուցչի միջև ի սկզբանե փոխգործակցությունը կարող է էապես նպաստել գործողությունների հետագա հաջողությանը:

### ***3.3. Բազային ճամբարի տեղի որոշումը***

#### ***Բազային ճամբարի տեղակայումը համարվում է գործողությունների հաջողության վրա ներգործող էական գործոն:***

Տեղի ընտրության ժամանակ անհրաժեշտ է դիտարկել բազմաթիվ գործոններ: Անհարմար վայրը կարող է խանգարել թիմի աշխատանքին: Որպես կարգ, ժամանող թիմի հարմար հրապարակի ընտրությունը համարվում է ընդունող երկրի և OSOCC-ի համաձայնեցմամբ: Եթե այդ պայմանները OSOCC -ի և LEMA-ի

կողմից չի կատարվում, թիմը պետք է որոշի վայրը OSOCC-ի ներկայացուցչի հետ համատեղ: Տեղի ընտրության վերաբերյալ հանձնարարականի ստացման համար, մինչ ողջ անձնակազմի ժամանումը, նախապես ուղարկվում է թիմի ներկայացուցիչներ (հետախուզական խումբ):

Բազային ճամբարի ծավալման ժամանակ, առկա տարածքների օպտիմալ կիրառման համար, անհրաժեշտ է հաշվի առնել գործին մասնակից բոլոր ծառայությունների հետաքրքրությունները:

Բազային ճամբարի տեղակայումը համարվում է գործողությունների հաջողության վրա ներգործող էական գործոն:

- Տեղի ընտրության ժամանակ պետք է բացառել տեղացիների այցելելու հնարավորությունը:
- Նախընտրելի է շրջանաձև(փակ) ճամբարի կազմակերպման ձևը:
- Խուսափել աշխատանքի նախապատրաստման ցուցադրականությունից՝ սարքավորումների «ցուցադրում»:
- Մեքենաները տեղակայել ճամբարի սահմաններում, թափքով ներս:
- Նախընտրելի է հանգստանալ միայն շինությունում, վրանում:
- Կապը, շտաբը, շները, սնունդը՝ միայն ճամբարի կենտրոնում:
- Տեղական սովորույթներին, բարոյական հիմքերին հակասող ոչ մի գործողություն:
- Նույնիսկ ճամբարում պահպանեք՝ «հագուստի վարքականոնը»:

### **3.4. Աշխատանքների աշխատատարության և ծավալի որոշումը**

#### **Աշխատանքի պլանավորման սկզբունքները**

Թիմերի ղեկավարները առաջնային հրահանգավորում անցնելուց, OSOCC-ի կողմից խնդրի ստանձնումից հետո և ընտրված տեղում բազային ճամբարի տեղակայման սկզբում, թիմի ղեկավարները պետք է անցնեն ընդհանուր խնդիրների որոշմանը: Նրանց կողմից պետք է կատարվի հատկացված տեղանքի իրավիճակի գնահատում, աշխատանքի ռազմավարության, առաջնայնության և ռեսուրսների պլանավորում:

**Գործողության սկզբում, թիմերի ղեկավարները և ծառայությունները պետք է որոշեն որոնողական աշխատանքների առաջնայնությունը և փրկման հավանականությունը:** Այդ խնդիրը կարող է պարզեցվել, ԱԻ վայրում արդեն գտնվող OSOCC-ի տեղական ներկայացուցիչների օգնությամբ:

Եթե անմիջապես չի ստացվում որոշել որոնողական աշխատանքներ անցկացնելու վայրը, անհրաժեշտ է գործողությունը սկսել տուժածներ հայտնաբերելու առավել հավանական տեղերում՝ դպրոցների, հիվանդանոցների, բազմաբնակարան շենքերի փլատակներում: Որոնողական աշխատանքերի անցկացման վայրի որոշման համար տեղեկությունների հավաքման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այդ հավանականությունը: Ջուրի թիմի ղեկավարը չպետք է սահմանափակվի փլատակներում տուժածների առկայության վերաբերյալ տեղացիների լուրերով, նա պետք է անցկացնի իրավիճակի գնահատում՝ հետախուզության, անձնական սուուզման կամ փորձարարական գնահատման հիման վրա:

Թիմը կարող է բախվել ինչպես մեկ շինության մասշտաբի պարզ խնդրի, այնպես էլ մեծամասշտաբ աղետի հետ: Աի աստի-

ճանից և չափսերից կախված, թիմի ղեկավարը կարող է հայտնվել մի իրավիճակում, երբ պահանջվում է որոշման անհապաղ կայացում աշխատանքի պլանի իրականացման վերաբերյալ, հիմնված՝ իրական կամ ենթադրյալ որոնողափրկարական կարիքների հաշվառման վրա:

Մի շարք դեպքերում կարող է պարզվել, որ առկա ռեսուրսները բավական չեն: Իրավիճակի լիարժեք գնահատում անցկացնելուց հետո, կարող է առաջանա OSOCC-ին դիմելու անհրաժեշտություն, տվյալ տեղամասում լրացուցիչ որոնողափրկարարական ջոկատի պահանջի վերաբերյալ: Լրացուցիչ ուժերի բացակայության դեպքում հնարավոր է անցկացնել առկա ռեսուրսների վերաբաշխում: Թիմի անձնակազմի աշխատանքի վերաբաշխումը հիմնվում է OSOCC-ի և ջոկատի աշխատանքային պլանի վրա, որում նշված է հնարավոր որոնողափրկարարական աշխատանքների տարբեր փուլերը:

***Թիմի ղեկավարի և հետախուզական խմբի կողմից ԱՒ գոտու ընդհանուր գնահատումից հետո անցկացվող աշխատանքների տեսակները իրականացվում է տուժածների փրկման առաջնահերթության լուծման, կամ նախնական անհետաձգելի (օրինակ՝ փրկարարական անձնակազմի համար վտանգի վերացում և այլն) աշխատանքների անցկացման հիման վրա:***

Թիմի ղեկավարը պետք է սերտ կապ հաստատի բուժ անձնակազմի հետ և բժշկական ծառայության ղեկավարից ստացված տվյալների հիման վրա անհապաղ ծանուցի OSOCC-ին, քաղաքացիների բժշկական սպասարկման համար լրացուցիչ օգնության անհրաժեշտության վերաբերյալ:

### **3.5. Տեղական հրամանատարական կառույցների հետ փոխգործողությունները**

Որոնողափրկարարական ռեսուրսները /SAR թիմերը և OSOCC-ը/ ԱԻ գոտի ժամանման պահից դառնում են տեղական հրամանատարական կառույցի անբաժանելի մաս:

***Թիմի ղեկավարին անհրաժեշտ է պատրաստ լինել փրկարարական գործողությունների կառավարման տարբեր տարբերակների, որոնք կարող են կիրառվել LEMA-ի կողմից: Թիմի անձնակազմը պետք է հստակ հասկանա, որ թիմը հանդիսանում է հասանելի միջոց LEMA-ի տնօրինության տակ, որի աշխատանքները վերահսկվում է OSOCC-ի կողմից: Տվյալ փոխգործողությունը պետք է իրականացվի համագործակցության ոգով:***

OSOCC-ը, ղեկավարվում է թիմի գործունեության հաշվետվության բոլոր տեղական սկզբունքներով: Նրանց համար տրամադրվում է անձիք, տեղեկատվության բնույթ և հաշվետվությունն ներկայացնելու ժամանակ: OSOCC-ը և LEMA-ն որոշում են կապի միջոցներն, որն օգտագործվում է տվյալ նպատակի համար (օրինակ՝ բջջային կապ, ռադիոկապ, հաճախականության տրամադրում, անհատական հանդիպումներ և այլն):

Թիմի ղեկավարը տեղական մարմինների աջակցությամբ պետք է ներկայացնի թիմի ողջ կարիքները և ծանուցի OSOCC-ին, որն էլ կապահովի համաձայնեցումը LEMA-ի ներկայացուցիչների հետ: Թիմը կարող է զգալ վառելանյութի, սեղմված գազի, ծանր տեխնիկայի կարիք (օրինակ՝ վերամբարձ կռունկներ, բուլդոզերներ, բեռնատար մեքենաներ, բարձր բեռնամբարձ բեռնատարներ և այլն), լրացուցիչ անձնակազմ՝ (օրինակ՝ տեղացի փրկարարներ, կամավորներ, ոչ պետական կազմակերպու-

յուններ, զինվորականներ և այլն): Անհրաժեշտ է որոշել կարիքների բոլոր հիմնական ռեսուրսները: Թիմի սպառման հումքի բոլոր պահանջները անհրաժեշտ է ուղարկել OSOCC մշակման համար, որը կապահովի դրանց մատակարարումը տեղական ռեսուրսներից կամ լրացուցիչ մատակարարումներից:

Թիմի ղեկավարին անհրաժեշտ է գործադրել բոլոր ճիգերը թիմի աշխատանքները համաձայնեցնելու տեղացի փրկարարների գործողությունների հետ: Դրան նպաստում է LEMA-ի դերը: OSOCC-ի տեղական ներկայացուցիչը հավանաբար կցանկանա գործողություններում ներգրավել տեղացի փրկարարների, ինչը կարող է ոչ միանշանակ ընդունվել SAR միջազգային և տեղական ուժերի միջև որևէ տարածայնությունների առկայության դեպքում:

***Իր վրա փրկարարական գործողությունների «առաջնորդի գործառույթը» վերցնելու դեպքում, թիմի ղեկավարը պետք է ի նկատի ունենա հնարավոր խնդիրների ծագումը կապված տեղական ուժերի հանդեպ SAR միջազգային թիմի հնարավոր գերազանցության հետ:*** Այսպիսով, որչ ուժերը անհրաժեշտ է գործադրել թիմի անձնակազմի հետ համատեղ, տեղացի փրկարարներին արդյունավետ աշխատանքում ներգրավելու համար:

***Թիմի ղեկավարը անմիջապես պետք է լուծի բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող են ծագել անձնակազմի անդամների միջև և կարող է հանգեցնել փրկարարական աշխատանքների դանդաղման կամ դադարեցման:***

Անհրաժեշտ է ուսումնասիրել բժշկական սպասարկման տեղական համակարգը և որոշել կարող է արդյոք նա հաղթահարել ծագած իրավիճակը: Նրա ռեսուրսների անբավարարու-

թյան դեպքում, անհրաժեշտ է LEMA-ի ներկայացուցիչներին առաջարկել դիտարկել լրացուցիչ օգնության պահանջը: Թիմի ղեկավարը՝ բժշկական ծառայության ղեկավարի հետ համատեղ, պետք է ապահովի տեղական բժշկական օգնության համակարգի համապատասխանությունը: Սակայն թիմի օգնության չափը պետք պայմանավորվի նախապես:

Նախնական հրահանգավորման գործընթացում անհրաժեշտ է սահմանել զանգվածային լրատվամիջոցների հետ հարաբերությունների սկզբունքները: Կարևոր է, որպեսզի թիմի ողջ անձնակազմը հստակորեն պատկերացնի տարբեր տեսակի զանգվածային լրատվամիջոցների հետ փոխգործակցության հիմունքները:

Անհրաժեշտ է նշանակել ներկայացուցիչ, զանգվածային լրատվամիջոցների հետ կապ հաստատման համար:

Բացի այդ, անհրաժեշտ է որոշել լրատվական ամփոփագրերի պատրաստման կարգը:

- *Անհրաժեշտ է պատրաստ լինել արտակարգ գործողությունների կառավարման տարբեր տարբերակների, որոնք կարող են կիրառվել LEMA-ի կողմից:*
- *Փրկարարական գործողությունների բոլոր մասնակիցները պետք է հստակ հասկանան, որ թիմը հանդիսանում է LEMA-ին աջակցող հասանելի միջոց, որի աշխատանքները վերահսկվում է OSOCC-ի միջոցով:*
- *Բոլոր վիճելի հարցերը, որոնք կարող են ծագել անձնակազմի միջև և կարող է բերել փրկարարական աշխատանքների դանդաղման կամ դադարեցման, պետք է անհապաղ լուծվեն:*

- *Գործադրել ողջ ճիգերը տեղացի փրկարարների գործողությունների հետ, թիմի աշխատանքը համաձայնեցնելու համար:*
- *Թիմի ողջ անձնակազմը, պետք է հստակորեն պատկերացնի տարբեր տեսակի զանգվածային լրատվամիջոցների հետ փոխգործակցության հիմունքները, նրանց հետ աշխատանքի կանոնները: Անհրաժեշտ է նշանակել անձ, ՉԼՄ -ի հետ փոխգործակցելու համար:*

### **3.6. Թիմի ղեկավարումը**

Թիմի ղեկավարվումը իրականացվում է ղեկավարի կողմից միանձնյա սկզբունքով: Նա կրում է լիակատար պատասխանատվություն անձնակազմի, սարքավորումների և փրկարարական գործողությունների արդյունքի համար, սկսած թիմի պատրաստության հրամանից, մինչև նրա վերադարձը սեփական երկիր: Թիմը ղեկավարելու կարևոր տեսակետը, հանդիսանում է նրա աշխատանքի արդյունավետության անընդմեջ հսկողությունը (օրինակ՝ OSOCC-ի տեղական ներկայացուցիչների և թիմի ղեկավարի կողմից դրված նպատակի հաղթահարում): Հակառակ դեպքում թիմը կարող է բեռ դառնալ տուժած երկրի համար: Թիմի և ծառայությունների պետերի պարտականությունը համարվում է աշխատանքների այն ուղղությունների բացահայտումը, որոնց շնորհիվ փրկարարական գործողությունների ընթացքում կկատարվեն անհրաժեշտ շտկումներ:

SAR թիմի պետը պետք է մշտապես հսկի ողջ թիմի գործունեության մի շարք հիմնական ուղղությունների արդյունավետությունը: Անձնակազմին անհրաժեշտ է հսկել փոխկապակցված և արդյունավետ գործողությունների ապահովումը: Հետա-



գա հսկողությունը անհրաժեշտ է անցկացնել յուրաքանչյուր աշխատակցի առավել արդյունավետ աշխատանքի ապահովման նպատակով: Թիմի աշխատանքում սեփական ներդրում չունեցող անդամը կարող է փոխարինվել կամ տեղափոխվել այլ աշխատանքի: Այս կապակցությամբ, կարևոր է ներթիմային փոխգործակցության ճիշտ կազմակերպումը: SAR թիմի պետը պետք է ապահովի թիմի բոլոր կառույցների համաձայնեցված գործունեությունը և անհրաժեշտ կոորդինացիան, ինչպես նաև առանց պետի աշխատելու դեպքում նրանց միջև կապը:

Ղեկավարման կորուստը նվազեցնում է կարգապահությունը աշխատակիցների միջև, ինչը հետագայում կարող է բերել աշխատանքի ձախողման, ռեսուրսների անտեղի ծախսի և բարձր վնասվածության: Օտար երկրում թիմի ներկայությունը, նրա բոլոր անդամներին թելադրում է սեփական վարքի բարձր մակարդակի պահպանման անհրաժեշտություն:

Այն նկարագիրը, որը թիմը ներկայացնում է տվյալ երկրի քաղաքական ուժերին, փրկարարական գործողությունների մասնակիցներին և քաղաքացիներին, կարող է ունենալ հսկայական դրական և բացասական հնչեղություն, ինչը շատ կարևոր է միջազգային որոնողափրկարարական համակարգի, ինչպես նաև այն երկրի հեղինակության համար, որը ներկայացնում է թիմը: Թիմին և նրա անձնակազմին պետք է ընդունել որպես լավ կազմակերպված, բարձրակարգ խումբ, ընդունակ ապահովելու արդյունավետ աջակցություն տուժած երկրին: Այսպես թե այնպես, «վատ» (ոչ ավանդական) գործելակերպը կարող է դիտվել որպես պրոֆեսիոնալիզմի բացակայության, կամ տեղաբնակների հանդեպ արհամարանք և բացասական կանրադառնա ողջ թիմի աշխատանքի վրա: Մեկ անվայել գործողութ-

յունը կարող է ջնջել կատարված ծանր աշխատանքի շատ ժամերը:

Բարձր պրոֆեսիոնալիզմի դրսևորումը մշտապես ապահովելու համար կարող է օգտակար լինել՝ «Փրկարարի պատվի կողեքսը»: Թիմերի և ծառայությունների պետերը պետք է պատվի կողեքսին դիմեն համապատասխան հրահանգումների ժամանակ և անընդհատ հսկեն դրանց կատարմանը: Խախտումների հետևանքների վերաբերյալ պետք է կիրառվեն համապատասխան միջոցառումներ տեղում կամ վերադառնալուց հետո:

Բազային ճամբարի շտաբում աշխատող SAR թիմի պետը, սովորաբար տիրապետում է տեղում աշխատող անձնակազմի վերաբերյալ կարևոր տեղեկությունների: Շտաբում գործում է մատյան, ժամանակագրական կարգով աշխատանքների և բուլոր իրադարձությունների ամրագրման համար: Թիմի գործողությունների հաշվետվությունը իր մեջ ներառում է յուրաքանչյուր առանձին տարածքի տեղեկությունները, ուստի մատյանում գրվում է կոնկրետ տեղեկություն ներկայացնող յուրաքանչյուր դրվագ: Հաշվետվության մեջ պետք է ներկայացվի՝ տվյալ հատվածում գործող անձնակազմի քանակը, փրկման կամ դրա փորձի դեպքերը, տեղական առողջապահական մարմիններին, ուստիկանությանը՝ փրկված մարդկանց մոտ արժեքների, զենքի հանձնման փաստացի հանգամանքները, դուրս բերված դիակների քանակը, փրկարարական աշխատանքների պոտենցիալ վայրերը, անվտանգության տեխնիկայի միջոցառումները, ինչպես նաև աշխատավայրի պլանը: Նման հաշվետվությունները կիրառվում է անձնակազմին հրահանգավորման համար (հերթափոխի փոխարինման ժամանակ աշխատանքի հաջորդակալությունը ապահովելու համար): Այն անհրաժեշտ է կիրառել

Նաև ամփոփիչ խորհրդակցությունների և ողջ գործողության արդյունքների հաշվետվության ժամանակ: Հաշվետվությունում պետք է ներառվեն թիմի անդամների վնասվածության և մահվան տեղեկությունները: Այդ հաշվետվությունները ծառայում են որպես փրկարարական գործողությունների ընթացիկ արձանագրություն, ինչպես նաև հիմք է ծառայում OSOCC-ին ներկայացվող պարբերաբար զեկուլցների համար:

SAR թիմի պետը պատասխանատվություն է կրում թիմի անձնակազմի ընդհանուր անվտանգության համար և հետևողականորեն պետք է ցուցադրի իր կողմնակցությունը անվտանգության նկատմամբ: Նա նշանակում է տեխնիկայի անվտանգության գծով թիմի պետի տեղակալ, որը կկատարի թիմի անձնակազմի ընդհանուր անվտանգության դիտորդի գործառույթը: Թիմի պետը, առկա տվյալների օգնությամբ պետք է հիմնվի պատրաստության և կոնկրետացված փրկարարական գործողությունների ժամանակ ՏԱ (տեխնիկայի անվտանգության) ինժեներների կողմից մշակված տեխնիկայի անվտանգության դրույթների ընդլայնման վրա: Չնայած որ, տեխնիկայի անվտանգության օգնականը իրականացնում է անվտանգության հսկողությունը, պատասխանատվության մեծ մասը ընկած է յուրաքանչյուր աշխատակցի վրա, որոնք պետք է հետևեն գործընկերների և սեփական անվտանգությանը: Բացի տեխնիկայի անվտանգության օգնականից, անհրաժեշտ է պատասխանատուներ նշանակել փրկարարական գործողությունների յուրաքանչյուր հատվածում: Նրանք պարտավոր են հասնել անվտանգության կանոնների պահպանման, իսկ բոլոր դեպքերում էլ ՏԱ չպահպանման կամ վնասվածության դեպքում անհրաժեշտ է զեկուլցել տեխնիկայի անվտանգության օգնականին:

Թիմի աշխատակցի ծանր վնասվածության (մահվան) դեպքում, անկախ այլ երկրում գտնվելու հանգամանքից, թիմի բոլոր պաշտոնատար անձիք պետք է գործեն ընթացակարգին համապատասխան: Իրադարձության մասին անհրաժեշտ է հաղորդել տվյալ երկրի ղեկավարներին և իրավապահ մարմիններին: Թիմի պետը դժբախտ պատահարի հետաքննության համար (գրավոր) պետք է նշանակի հանձնախումբ: Աշխատանքներին անհրաժեշտ է ներգրավել համապատասխան իրավասություն ունեցող տեղական մարմինների ներկայացուցիչներ (ցանկալի է ունենալ նման իրավասությունների գրավոր վավերաթուղթ: Կազմել համապատասխան ակտ, հաստատված OSOCC-ի և LEMA-ի կողմից, հավաքել մասնակիցների և վկաների բոլոր անհրաժեշտ բացատրությունները: Այս դեպքում փրկարարական գործողությունների հետագա շարունակման, նրա ընդհատման կամ դադարեցման որոշումը կարող է կայացնել միայն SAR թիմի պետը:

Յուրաքանչյուր թիմում պետք է գոյություն ունենա գործողությունների հրահանգման նախապես մշակված պլան, որի նպատակը թիմի վնասված անդամների տեղափոխման ապահովումն է: Պետք է նշված լինի ծանր վնասվածքներ ստացած անձնակազմի անդամի փոխադրման եղանակը բժշկական հիմնարկություն և հնարավորության դեպքում երկրի տարածքից դուրս (ամենայն հավանականությամբ օդային տրանսպորտով): Տվյալ երկրի համապատասխան կառույցների օգնությամբ, թիմի տվյալ գործընթացը պետք է վաղօրոք նախատեսված լինի: Հետագա պլանները կարող են մշակվել տեղում, OSOCC-ի ներկայացուցչի հետ համատեղ, թիմի անդամի փոխադրումը լավագույնս ապահովելու համար: SAR թիմի պետը բոլոր վնասվածությունների կամ մահվան դեպքերում ամենակարճ ժամկետում պետք է ծա-

Նուցի OSOCC -ին և տվյալ երկրի որոնողափրկարարական կառույցներին: Պետք է նկատի ունենալ, որ եղանակային պայմանների, անվտանգությանը սպառնացող վտանգների հետ կապած, կարող է առաջանալ անհրաժեշտություն մշակելու ողջ անձնակազմի տեղափոխման պլան: SAR թիմի պետը աշխատանքների ողջ ընթացքում պետք է ապահովի ստորաբաժանման արդյունավետ գործունեությունը: Կարևոր է թիմում հստակ կանոնակարգել գործառնական պարտականությունները: Որոշ արտասահմանյան ծառայություններ կիրառում են գունային տարբերակիչներով բաճկոններ, միջազգային թիմերի մեջ ճանաչվելու համար, ինչը օգտակար է նույնիսկ, եթե անգամ պաշտոնի անվանումը գրված է օտար լեզվով: SAR թիմի պետը պետք է մշտապես ապահովի հարկ եղած սարքավորումների լրակազմը, կազմակերպի դրանց ռացիոնալ շահագործումը, հանդերձանքի պահեստի կառավարումը: Ցանկացած կորած, ծախսված կամ փչացած սարքավորում պետք է հաշվառվի անձնակազմի կողմից, սեփական երկիր վերադառնալուց հետո ապահովվի դրանց վերանորոգման կամ փոխման հնարավորությունը:

Թիմի պետի պարտականությունն է համարվում, բոլոր հնարավոր միջոցներով սեփական երկրի հետ կապի պահպանումը: Տեղերում ընթացիկ աշխատանքների վիճակի, թիմի ընդհանուր գործունեության, թիմի անդամների առողջության և բարոյահոգեբանական վիճակի, վնասվածքների և ԱԻ գոտում գտնվելու հավանական տևողության տեղեկությունները կանոնավոր կերպով պետք է հասցնել սեփական երկրի համապատասխան մարմիններին: Սեփական երկրի անհրաժեշտ տեղեկությունները պետք է հաղորդվի թիմի անդամներին:

- Թիմի ղեկավարվումը իրականացնում է թիմի պետը միանձնյա սկզբունքով:
- SAR թիմի պետը պատասխանատվություն է կրում թիմի անձնակազմի ընդհանուր անվտանգության համար:
- SAR թիմի պետը աշխատանքների ողջ ընթացքում պետք է ապահովի ղեկավար կառույցի արդյունավետ գործունեությունը:
- SAR թիմի պետը ապահովում է թիմի բոլոր կառույցների համաձայնեցված գործառույթունները և գործընկերների հետ աշխատանքների համաձայնեցումը:
- SAR թիմի պետը մշտապես հսկում է թիմի գործունեության արդյունավետությունը:
- SAR թիմի պետը պատասխանատու է համապատասխան սարքավորումների լրակազմի, նրանց ռացիոնալ շահագործումը կազմակերպելու, հանդերձանքի պահեստի կառավարման համար:
- Այն նկարագրող, որը թիմը ներկայացնում է տվյալ երկրի քաղաքական ուժերին, փրկարարական գործողությունների մասնակիցներին և քաղաքացիներին, կարող է ունենալ հսկայական դրական և բացասական հնչեղություն, ինչը շատ կարևոր է միջազգային որոնողափրկարարական համակարգի, ինչպես նաև այն երկրի հեղինակության համար, որը ներկայացնում է թիմը:
- «Վատ» (ոչ ավանդական ) գործելակերպը կարող է դիտվել որպես պրոֆեսիոնալիզմի բացակայության, կամ տեղաբնակների հանդեպ արհամարանք և բացասական

կանրադառնա ողջ թիմի աշխատանքի վրա: Մեկ անվայել գործողությունը կարող է ջնջել կատարված ծանր աշխատանքի բազմաթիվ ժամերը:

- *Գործողությունների մատյանը՝ (ժամանակագրական կարգով աշխատանքների և բոլոր իրադարձությունների ամրագրում) երկարատև պահպանվող փաստաթուղթ է:*
- *Անկախ ներկայացվող երկրից, անձնակազմի անդամի ծանր վնասվածքի (մահվան) դեպքում, թիմի բոլոր պատոնատար անձիք պետք է հետևեն այն երկրի օրենսդրությանը, որտեղ գտնվում են:*
- *Վիրավորում ստացած թիմի անդամների տեղափոխումը ապահովելու համար, յուրաքանչյուր թիմում պետք է լինի նախապես մշակված պլան:*

## ԳԼՈՒԽ 4

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՅԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### *4.1 Որոնողական աշխատանքների վարումը*

Տվյալ գլխում համառոտ դիտարկվում է տակտիկական դրույթներ և ընդհանուր ուղղություններ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության փրկարարական ծառայության կուտակած փորձը:

Տուժածների և նրանց գտնվելու վայրի առկայության (փրկարարական աշխատանքներ) որոշման աշխատանքները սովորաբար անցկացվում է փրկարարական գործողությունների հենց սկզբից: Այն պայմաններում այն կարող է բազմիցս վերսկսվել: Միջազգային փրկարարական գործողությունների պայմաններում հանդիպում են աշխատանքները դժվարեցնող լրացուցիչ գործոններ, ինչպիսիք են՝ լեզվական խոչընդոտը, սովորական շինարարական ստանդարտներից տարբերվող անսովոր ճարտարապետությունը: Ուստի, փրկարարական աշխատանքները պահանջում են թիմի բոլոր ծառայությունների սերտ փոխգործակցություն, այդ թվում ինչպես հորիզոնական, այնպես էլ զուգահեռ կապերով: Կարևոր է, որ SAR թիմի ողջ անձնակազմը օպտիմալ արդյունավետության հասնելու համար հետևի թիմի կողմից ընդունված որոնման տակտիկային և ռազմավարությանը: Ծառայության նշանակված ղեկավարները պետք է մշակեն տակտիկա և կիրառեն տեխնոլոգիաները թիմի գործունեության ռազմավարության առանձնահատկությունների պահանջների



ընդհանուր իրավիճակին համապատասխան:

SAR թիմի ղեկավարի և ծառայության ղեկավարների պարտականություններն են հանդիսանում գործողությունների համաձայնեցումը և որոնման մշակված ռազմավարությանը հետևումը, համապատասխան տեղեկությունների հավաքումը և թիմի գործողությունների արդյունավետ ընդհանուր պլանի մշակումը:

Փրկարարական գործողությունների հաստատված տակտիկայի և ռազմավարության կիրառումը թույլ կտա ապահովել հետևյալը՝

- անցկացնել բազմակողմանի փրկարարական աշխատանքներ,
- պատասխանատվության հարցերում նվազեցնել տարբեր տեսակի փրկարարական աշխատանքների խառնաշփոթության հավանականությունը,
- կազմակերպել SAR թիմի ռեսուրսների կիրառման արդյունավետ համաձայնեցում,
- կազմակերպել աշխատանքների անցկացման տեղամասի ընդունման/հանձնման արդյունավետ գործընթաց,
- պատրաստել մանրամասն փաստաթղթեր տուժածների հարազատներին, ՉԼՍ-ին և տեղական մարմիններին SAR թիմի գործողությունների վերաբերյալ տեղեկացնելու համար,
- խնդրի կատարման նպատակով իրականացնել SAR թիմի ստանդարտացված պատրաստություն:

#### ***4.2. Որոնման ռազմավարությունը***

Որոնման առավել արդյունավետ ռազմավարությունը ապահովվում է հստակ պլանավորմամբ և փրկարարական գործողությունների մշակված պլանին համապատասխան անցկացմամբ: Որոնման ռազմավարության իրացման նպատակով կարելի է ներգրավել SAR թիմի ողջ անձնակազմը, կիրառել բոլոր հասանելի տակտիկական հնարքները: Որպես կարգ, բարձր արդյունավետության համար մեկ տակտիկական հնարքը պահանջում է այլ հնարքի հաստատում: Անձնակազմի քիչ քանակի դեպքում, «լռության թուփ»-ի ժամանակ կիրառելի է միայն լռություն պահանջող հնարքներ: Որոնման այլ տեսակներ կարելի է անցկացնել արդեն աշխատանքը սկսելուց հետո, էլ ավելի հասնելով նրա անընդհատականությանը:

#### ***4.3. Մեծամասշտաբ գործողություններում որոնողական աշխատանքների գերակայությունը***

Առաջին հերթին SAR թիմի պետը պետք է որոշի վայրը, որտեղից անհրաժեշտ է սկսել աշխատանքը, քանի որ կարող են ուշադրության արժանի լինել մի քանի տեղամասեր: Հիմնվելով փորձի վրա կարելի է առանձնացնել որոնման կազմակերպման երկու ընդհանուր ուղղություններ:

***Առաջինը՝*** համարվում է հետազոտվող հատվածի բաժանումը մասերի: Կախված ավերվածության գոտու չափսերից և առկա ռեսուրսներից, բաժանումները կարող է անցկացվել քաղաքային թաղամասերով, կառույցներով կամ այլ հեշտ որոշվող չափանիշներով կողմնորոշվելով: Որոնում անցկացնելու համար, առկա որոնողական ռեսուրսները անհրաժեշտ է բաժանել հատվածների: Հատվածների բաժանման ռազմավարությունը կա-

րող է կիրառվել ոչ մեծ տարածքներում: Սակայն այն կարող է անընդունելի լինել մեծամասշտաբ ավերվածությունների ժամանակ, այնպիսին՝ ինչպիսին է քաղաքի կամ շրջանի, ինչպես նաև կապված սահմանափակ ռեսուրսների հետ:

Այլ, ավելի գործնական, կարող է հանդիսանալ ավերված շենքերում որոնման հերթագայության մեթոդի որոշումը ըստ իրենց կիրառման նշանակության: Այն շինություններն, որոնք ունեն տուժածների ողջ մնալու ամենաբարձր հավանականություն (կառույցի տեսակը հաշվի առնելով) և ենթադրյալ մեծաքանակ զոհեր (հաշվի առնելով շինության կիրառման նշանակությունը), ուսումնասիրվում է առաջին հերթին:

Օրինակ՝ դպրոցները, հիվանդանոցները, բարձրահարկ և բազմաբնակարան շենքերը, գրասենյակային շինությունները և այլն:

Որոնողական աշխատանքների պլանավորման և կազմակերպման ժամանակ անհրաժեշտ է ղեկավարվել պրագմատիկ գերակայությամբ՝ սկսել աշխատանքը այնտեղ, որտեղ հնարավոր են ավելի շատ տուժածներ և նրանց մոտ մեծ է կենդանի մնալու հավանականությունը:

#### ***4.4. Որոնման եվ հետախուզման ստորաբաժանումները***

Հենց հարաբերականորեն աննշան տևողությամբ որոնման աշխատանքների առաջնահերթ անցկացումը ի համեմատ ողջ փրկարարական գործողությունների ժամանակի, բոլոր հատուկ մասնագետների ներգրավումը, մի շարք ուղեկցող և անհետաձգելի աշխատանքները պահանջում են ժամանակավոր տակտիկական ստորաբաժանման ստեղծում՝ որոնման և հետախուզման փրկարարական ծառայության ստորաբաժանում:

Փրկարարական ծառայության հաստիքը որոնման և հետախուզման ծառայության փուլում համալրվում է հետևյալ կերպ.

***Որոնման փրկարարական խմբի ղեկավարը (ՈՓԾ)*** գործում է որպես որոնման և հետախուզման ստորաբաժանման ղեկավար (որոնողա-հետախուզական խմբի ամբողջություն), որոշում է առաջնահերթությունները, կազմում և գրառում է տեղեկատվությունը, հաղորդում է թիմի ղեկավարին մանրամասների վերաբերյալ և ներկայացնում առաջարկություններ:

***Կինեռլոգների խումբը*** անցկացնում է որոնողական գործողություններ և կրկնում տուժածի հայտնաբերման հաստատումը:

***Տեխնիկական որոնման մասնագետները*** անցկացնում են էլեկտրոնային սարքավորումներով գործողություններ, ներառյալ էլեկտրոնային հետևման համար ձայնա-սեյսմիկական լսման սարքավորումներ:

***Բուժաշխատողները և բժիշկները*** ապահովում են հայտնաբերված տուժածների, որոնողափրկարարական խմբերի անձնակազմի բժշկական օգնությունը:

***Շինարարական կառուցվածքների մասնագետները, ինժեներները*** ապահովում են շինությունների հարաբերական կայունության, ամրակների կառուցման և քանդված կառույցների կայունացման աշխատանքների կատարման, ամրակների, հենասյուների տեղադրման վերլուծություն և խորհրդատվություն, բացահայտում են լարվածության տակ գտնվող էլեկտրացանցի, ճնշման տակ գտնվող գազային և ջրային մայրուղիների առկայությունը:

**Ճառագայթային, քիմիական և կենսաբանական մոնիտորինգի մասնագետները** հետևում են դատարկ և սահմանափակ տարածքների մթնոլորտի բաղադրությանը, գնահատում, նույնականացնում և նշագծում են վտանգավոր նյութերի տեղադրությունը:

**Փրկարարները** ապահովում են որոնողափրկարարական խմբերի աջակցումը, ներառյալ դիտարկման էլեկտրոնային համակարգերի կամ լսման տվիչների և ավեհավաքների տեղակայման համար կիրառվող սողանցքների բացումը:

Որոնման և հետախուզման ստորաբաժանումները պետք է անցկացնեն հետևյալ աշխատանքները.

- Շինության (գոտու) ընդհանուր զննում, հետախուզում և գնահատում:
- Կինոլոգիական խմբերի ներգրավմամբ, ֆիզիկական որոնման մեթոդի և էլեկտրոնային միջոցների կիրառմամբ տուժածների հայտնաբերում: Կենդանի տուժածների հայտնաբերման վայրը նշվում է միջազգային պրակտիկայում ընդունված աերոզոլային նարնջագույն ներկով կամ մարկերային ժապավենով:
- Վտանգավորությունների նույնականացումը՝ (ինդենտիֆիկացիան) պետք է գնահատվի և նշվի ցանկացած տիպի վտանգները, ինչպիսիք են՝ կախված շինարարական տարրերը, անկայուն կառույցները կամ երկրորդային փլուզման հնարավոր գոտիները, լարվածության տակ գտնվող էլեկտրահաղորդման լարերը, վտանգավոր նյութերը և այլն: Վտանգավոր գոտիները պետք է հստակ նշվի մարկերային ժապավենով:

- Արժեքավոր առարկաների, փաստաթղթերի, զենքի հայտնաբերում:
- Դատարկ և փակ տարածքների շուրջ ընդհանուր մթնոլորտային վիճակի գնահատում:
- Որոնման գոտու գծագրում կամ լուսանկարում:
- Որոնման և հետախուզման ստորաբաժանման պետի միջոցով, SAR թիմի ղեկավարին զեկուցում բոլոր գտնված իրերի, վտանգների և որոնման հերթագայության անցկացման հանձնարարականների վերաբերյալ:

Որոնողական խմբերի լիարժեք աշխատանքի ապահովման համար պահանջվում են հատուկ սարքավորումներ և նյութեր: Այդ սարքավորումները փաթեթավորման և փոխադրամիջոց բարձրացման ժամանակ պետք է լինեն առանձին և առաջին հերթին աշխատանքային գոտի պահեստավորվող սարքավորումները ուղարկման համար առանձնացվի այնպես, որպեսզի ապահովվի որոնման և հետախուզման մեկ կամ մի քանի տեղակայման հնարավորությունը: Շատ հաճախ պահանջվում է հետևյալ սարքավորումների նվազագույն համալիրները.

- դիտարկման էլեկտրոնային սարքավորում, որոնման տեսախցիկ և այլն:
- էլեկտրական հորատիչ (որպես ավելի շարժական),
- լսողական էլեկտրոնային սարքավորում /լսողական և այլն/,
- սարքավորում օդի բաղադրության դիտարկման համար (գազերի, թունավորումների, թթվածնային անբավարարության արևայության),

- նշագծման համար նյութեր (աերոզոլային փաթեթավորմամբ նարնջագույն ներկ, մարկերային ժապավեն),
- օրվա մութ ժամին աշխատելու համար լուսավորման միջոցներ,
- վթարային ազդանշանային սարքավորում (բարձրախոս, աերոզոլային ազդանշանային եղջերափող, հրատեխնիկա),
- դեղատուփ /բժիշկների խումբ/,
- անձնական սարքավորումներ ( հանդերձանք ըստ անձնակազմի թվաքանակի) անձնական պաշտպանության միջոցներ, սնունդ, ջուր և այլն:

***4.5. Որոնողական աշխատանքների գերակայությունը անմիջականորեն աշխատանքային գոտում***

Կախված իրավիճակից, ողջ որոնողափրկարարական ստորաբաժանման տեղակայումը կարող է լինել ոչ պարտադիր: Աշխատանքային տարածքում կենդանի տուժածների բացահայտման համար (օրինակ՝ մի քանի շենքեր, մեկ շենք կամ շենքի ներսի մեկ հատված) անհրաժեշտ է ընտրել որոնման տակտիկա: Մեծամասամբ շան օգնությամբ որոնումը հնարավորություն է տալիս կարճ ժամանակահատվածում արագ գնահատել մեծ տարածություն:

Տվյալ տակտիկան կարող է կիրառվել աշխատանքի սկզբում, որոնման գոտու ընդհանուր գնման և տուժածին հայտնաբերման համար: Հայտնաբերման կրկնակի ստուգումը անցկացվում է այլ խմբի կողմից, տուժածի առկայության առավել ճշգրիտ հաստատման նպատակով:

Էլեկտրոնային միջոցների կիրառումը կարող է առավել արդյունավետ լինել կինոլոգների հետ զուգահեռ գործելու դեպքում: Էլեկտրոնային որոնումը պահանջում է ժամանակի մեծ ծախսեր: Էլեկտրոնային որոնման անցկացման տեղի ընտրությունը կարող է լինել կինոլոգների կողմից նշումների հիման վրա, կամ ըստ կառույցի տեսակի, շենքի նշանակության:

Ինչպես շների հետ աշխատանքի դեպքում, գործիքային որոնման մեթոդի կիրառման ժամանակ նույնպես անհրաժեշտ է կատարել ստուգողական հայտնաբերում երկրորդ օպերատորի կողմից, նմանապես նշելով տուժածի գտնվելու վայրը:

Փլատակներում, մինչ կենդանի տուժածների գտնվման որոշումը, որոնողական խմբերը անցկացնում են փլուզված վայրի անվտանգության գնահատում: Միայն դրանից հետո է սկսվում փրկարարների մուտքի ապահովումը անանցանելի տարածքներ, մաքրվում են տեխնիկայի տեղակայման հատվածները և այլն: Անձնակազմը, այդ ժամանակ, որոշակի հատվածներում ինքնուրույն կամ կինոլոգների և որոնման էլեկտրոնային մեթոդի մասնագետների հետ կատարում է ֆիզիկական որոնում:

Անհրաժեշտության դեպքում կարող է անցկացվել դատարկ հատվածների դիտարկում և լսում:

Այդ աշխատանքները կորդինացնում է SAR թիմի պետը:

Տուժածի հավաստի հայտնաբերումից հետո, նրա գտնվելու վայրը ճշգրիտ որոշելու և կողմնորոշվելու համար կարող է օգտակար լինել դիտարկման էլեկտրոնային սարքի կիրառումը:



#### **4.6. Փրկարարական աշխատանքների անցկացման և կազմակերպման տակտիկան**

Ֆիզիկական, կինոլոգիական և էլետրոնային որոնման տակտիկական հնարքների զուգակցումը խմբերի պետերին թույլ կտա ճիշտ տեղաբաշխել գերակայությունները և հատուկ ուշադրություն դարձնել փրկարարական աշխատանքների առավել կարևոր տարրերին: Մեծամասշտաբ աղետից՝ ինչպիսին երկրաշարժն է, տուժած գոտի ժամանման դեպքում, SAR թիմերը կարող են բախվել բավականին բարդ իրավիճակի, երբ հազարավոր մարդիկ գտնվում են փլատակների տակ: Կապված որոնման աշխատանքների բարդությունից, որոնողափրկարարական խմբերը, ոչ մեծ քանակի բարդ իրավիճակներում պետք է ծախսեն հարաբերականորեն շատ ժամանակ: Ուստի, միշտ կարևոր է որոշել՝ SAR թիմը գործ ունի կենդանի մարդկանց փրկման հետ, թե, ո՛չ, քանի որ առաջին ժամերին չի կարելի ժամանակ վատնել անարդյունք աշխատանքների վրա (այնպիսին, ինչպես զոհերի մարմնի դուրս բերումն է) այն ժամանակ, երբ դեռ կարելի է փրկել կենդանի տուժածներին: Հանգուցյալների մարմինների դուրս բերումը չի հանդիսանում SAR թիմի հիմնական խնդիրը: Սովորաբար մարմինների դուրս բերումը անցկացվում է միայն այն դեպքում, երբ այն գտնվում է փլատակների վերին հատվածների անվտանգ վայրում, կամ երբ նրա տեղադրությունը խոչընդոտում է կենդանի տուժածին հասնելու համար:

Սակայն անհրաժեշտ է նկատի առնել բնակչության հնարավոր բացասական վերաբերմունքը աշխատանքի նման վարման դեպքում:

Փրկարարական ռեսուրսների ուղարկումից առաջ, կարևոր է կիրառել տուժածների փրկման բոլոր հնարավոր եղանակները

տևական գործողությունների կատարման համար: Փրկարարական աշխատանքների գործընթացում, խմբերի պետերը ապահովում են սերտ փոխգործակցություն շինությունների հարաբերականորեն կայուն և աշխատանքների վարման համապատասխան անվտանգության առաջնային գնահատում անցկացնող շինարարական կառույցների մասնագետների հետ, ինչպես նաև ողջ փրկարարական գործողությունների ընթացքում պարբերաբար հսկումը և ազդարարումը: Փրկարարական գործողությունների միջնամասում և նրա եզրափակիչ փուլերում, կարևոր տեսակետ է համարվում, վաղ հետազոտված շենքերի և շինությունների պարբերաբար լրացուցիչ ստուգման անցկացման անհրաժեշտությունը: Ծանր տեխնիկայի օգնությամբ մեծածավալ փլատակների քանդման կամ երկրորդային ավերվածությունից հետո բեկորների նստման դեպքում կարող է առաջանալ կրկնակի փրկարարական աշխատանքների անցկացման անհրաժեշտություն:

Փրկարարական աշխատանքների անցկացման տակտիկան բավականին բազմազան է և միշտ կախված կոնկրետ պայմաններից: Ուստի, կարելի է միայն տալ ամենաընդհանուր հանձնարարականներ: Այդ փուլում բավականաչափ աճում է ծառայության ղեկավարների, ստորաբաժանումների խմբերի դերը: Գործի հաջողությունը ուղղակիորեն կախված է նրանց պատրաստության և փորձի պրոֆեսիոնալիզմից:

Աշխատանքային գոտում մեկ օբյեկտը անհրաժեշտ է տալ մեկ թիմի: Խմբերի կազմի մեջ պետք է լինեն շինարարական կառույցների և վտանգավոր նյութերի մասնագետներ: Յուրաքանչյուր խումբ, պետք է արագ (մեկ ժամվա ընթացքում), հանձնարարված տեղամասում, ըստ աշխատանքների կատարման հեր-

թականության անցկացնել օբյեկտների բաշխում, տալով նրան անձնական համար, քարտեզի (պլան) վրա նշելով վայրի տեղադրությունը: Հնարավոր է նույնիսկ կոորդինացիոն ռադիոընդունիչների GPS –ի կիրառում: Եթե աշխատանքը ըստ նախնական գնահատման գերազանցում է մեկ ժամը, ապա այդ տեղամասի աշխատանքային խումբը անհրաժեշտ է ուժեղացնել: Տվյալ գործողությունը կարող է անցկացվել տեղի որոշման և բազային ճամբարի տեղակայման աշխատանքների հետ միաժամանակ:

Աշխատանքային տեղամասերի բաշխումից հետո անհրաժեշտ է ուղարկել որոնողական և հետախուզական մեկ, կամ մի քանի խմբեր, օբյեկտներից յուրաքանչյուրը գնահատելու համար, որոնցում ըստ արագ բաշխման արդյունքների կարող են գտնվել կենդանի տուժածներ: Որոնողական և հետախուզական խմբերը անհրաժեշտ է ամբողջացնել որպես առանձին ֆունկցիոնալ ավարտուն ենթախմբեր: Նրա մեջ պետք է ընդգրկվեն որոնման բոլոր հասանելի մեթոդներ տիրապետող մասնագետներ: Վտանգների նշագծումը և որոնման տեղը պետք է կատարվի արդեն այս փուլում, մինչ հիմնական փրկարարական աշխատանքների սկսելը:

#### ***4.7. Որոնում շների միջոցով***

Լավ պատրաստված փրկարար շները հարաբերականորեն ոչ մեծ ժամանակահատվածում կարող են հետախուզել մեծ տարածքներ: Ի շնորհիվ սուր հոտառության, շները փլատակներում հայտնաբերում են անգիտակից ինչպես նաև բղավելու, թակելու միջոցով իրենց տեղի մասին լուր տալուն անընդունակ տուժածների:

Շների կիրառմամբ որոնման տակտիկան սովորաբար ենթադրում է խմբի առկայություն և փրկարարական խմբի կորդինացիոն աշխատանքին և անվտանգությանը հետևող ղեկավար: Փրկարարական խմբի համալրման ժամանակ, փրկարարական գործողությունների հենց սկզբից անհրաժեշտ է ի նկատի ունենալ կինոլոգի առանձին աշխատանք, ինչը մեծապես կորոշի փրկարարական աշխատանքների որակը: Փրկարարական աշխատանքների նախնական շրջանի ավարտից հետո, եթե փրկարարական գործողությունները կրում են տևական և անընդմեջ բնույթ, «շուն-կինոլոգ» խմբի աշխատանքի ռեժիմում անհրաժեշտ է մտցնել հերթափոխում: «Շուն-կինոլոգ» խմբի աշխատանքի տևողությունը նախ և առաջ կախված է շան անհատական առանձնահատկություններից:

Որոնողական խումբը պետք է կցված լինի առանձին տեղամասի կամ հատվածի: Որոնողական խմբի ղեկավարը նշանակում է անձ, որն ապահովում է շան և կինոլոգի անվտանգությունը (եթե այն չի որոշվել նախօրոք), և հետևել բոլոր հասանելի տարածքների լիարժեք հետազոտմանը: Բացի այդ, ղեկավարը հետագա վերլուծության նպատակով, պետք է պատրաստի հետազոտվող շենքի, տեղամասի կարևոր տվյալներ ներկայացնող աղյուսակ: Որևէ խմբի կողմից տուժածի հայտնաբերման դեպքում ղեկավարը ետ է կանչում նրան հայտնաբերման տեղից: Կինոլոգը պետք է մտովի նշի ճշգրիտ տեղը, բայց դեռ չի նշվում գծագրում: Խմբի ղեկավարը ևս մեկ կինոլոգ պետք է ուղարկի Նույն շրջանը: Նույն տեղում հայտնաբերման հաստատման դեպքում այն նշվում է մարկերային ժապավենով կամ հատուկ նշանով: Այնուհետև ղեկավարը տեղեկությունը ուղարկում է փրկարարական ծառայության և SAR թիմի պետերին հետագա գործո-

ղության կազմակերպման համար: Փրկարարական ստորաբաժանումները անցնում են հետագա առաջադրանքին:

#### ***4.8. Որոնում էլեկտրոնային միջոցների կիրառմամբ***

Որոնման էլեկտրոնային, տեսողական և այլ սարքերի մշակումը թույլ է տվել կատարելագործել որոնողական գործընթացը: Նորագույն էլեկտրոնային գործիքները ապահովում են որոնման դիապազոնի ավելացում, որսալով տուժածներից եկող ձայները, այն դեպքերում, երբ հոտերը կարող են չհասնել փլատակների մակերես և այդպիսով չեն հայտնաբերվում շների կողմից: Որոնողական ծառայության հաստիքներում պետք է լինի համապատասխան որակավորում ունեցող տեխնիկական մասնագետներ, որոնք կարող են կիրառել տեսա-սեյսմիկական լուծմ, ինչպես նաև մանրաթելային-օպտիկական համակարգեր, ինֆրակարմիր տեսանելիության գործիքներ և այլ բարդ սարքավորումներ: Տեխնիկական որոնման անձնակազմը սովորաբար աշխատանքները անցկացնում է հենց գործողության սկզբից: Նախնական շրջանի ավարտից հետո, աշխատանքի անընդմեջությունը ապահովելու համար անհրաժեշտ է սկսել անձնակազմի ռոտացիան: Էլեկտրոնային միջոցների կիրառմամբ գործողությունները մեծամասամբ կախված են աշխատանքի կոնկրետ տեղամասից և ի համեմատ կինոլոգիական գործողությունների առավել տևական են: Որոնման տեխնիկական մասնագետների հետ միասին աշխատում են թիմի այլ աշխատակիցներ (նախընտրելի է փրկարարներ), որոնք նույնպես ապահովում են ընդհանուր անվտանգությունը:

Ինչպես և ցանկացած որոնման տեսակի ժամանակ, պարտադիր է կարևոր մանրամասների նշումներով տեղամասի աղյուսակի լրացումը: Լսողական սեյսմիկական սարքերի կիրառու-

մը նախատեսում է ըստ որոնման տեղի պարագծի երկու և ավելի տվիչների ընդլայնում:

Սովորաբար կիրառվում է ուղղորդված ձայնորսիչ սարքեր, շինությունների փլատակերում գիտակցության մեջ գտնվող տուժածի ուղղությունը որոշելու համար: Հնարավոր է ձայնի աղբյուրի տեղադրությունը որոշելու համար «դիրքային մեթոդի» կիրառումը: Տուժածին անհրաժեշտ է տալ ցուցում ձայնը կրկնելու (օրինակ՝ «թակել երեք անգամ»): Աշխատանքի գոտում անհրաժեշտ է պահպանել հնարավորինս առավելագույն լռություն:

Կրկնվող ձայները թույլ կտան օպերատորին աղմուկի մեջ առանձնացնել պահանջվող ձայնը հայտնաբերելու համար:

Ձայնի հայտնաբերման ժամանակ, առավել ուժեղ ազդանշանի որոշման համար տարբեր տվիչների տվյալները գնահատվում են առանձին վերցված, որը տեսականորեն պետք է ավելի մոտ լինի տուժածին: Անհրաժեշտության դեպքում, մի շարք տվիչներ այնուհետև կարող է վերաբաշխվել (ամենաուժեղ ազդանշան տվող տվիչի շուրջը), տուժածի տեղադրությունը առավել ճշգրիտ որոշելու համար:

Ինչպես տեղի հայտնաբերման դեպքում երկրորդ շան լրացուցիչ ուղարկումը, առաջնային հայտնաբերումը անհրաժեշտ է կրկնել էլեկտրոնային միջոցներով, հայտնաբերված տեղ ուղարկելով երկրորդ մասնագետին: Տուժածի գտնվելու տեղը հաստատման դեպքում, տվյալ տեղը նշվում է մարկերային ժապավենով: Բոլոր տեղեկությունները պետք է ուղարկվի SAR թիմի պետին հետագա գործողության որոշման և կազմակերպման համար:

- Տուժածները սովորաբար թուլացած են և ջրազրկված, ուստի «գոռալ» առաջարկությունը տուժածների կողմից սովորաբար ընդունվում է «առանց ոգևորության» և կարող է ցանկալի արդյունք չտալ:
- Հիշեք՝ թակոցը փլվածքներում շատ ավելի լավ է տարածվում:
- Որոնողական աշխատանքների ժամանակ պետք չի խնայել ժամանակը, այլապես այդ կեղծ խնայումը կփոխարինվի երկարատև անարդյունք մասնակցությամբ:

#### ***4.9. Որոնում էլեկտրոնային դիտարկման սարքերի կիրառմամբ***

Դիտարկման նպատակով էլեկտրոնային սարքերը ևս մեկ հնարավորություն են ներկայացնում որոնման համար: Այս սարքավորման կիրառումը օգտակար է, երբ զուգակցվում է հորատչով բացվածք բանալու հետ, ինչը տուժածի գտնվելու տեղի ճշգրիտ որոշման ժամանակ տալիս է բարձր արդյունք, ինչպես նաև կարող է կիրառվել քանդված շինության ներսի ընդհանուր դատարկության դիտարկման համար: Տվյալ սարքավորումը կիրառման առումով պարզ է (համապատասխան ուսուցումից հետո): Առավել բարդություն է ներկայացնում ուղղության որոշումը, որտեղ անցկացվում է դիտարկումը ներքին դատարկ տարածքի մեջ սարքի ներթափանցումից հետո: Ի շնորհիվ տուժածին տեսողական փաստացի հայտնաբերման, սովորաբար մեթոդը լրացուցիչ ստուգում չի պահանջում: Հետագա աշխատանքներին օպերատորի մասնակցության անհրաժեշտության դեպքում կենդանի մարդու առկայությունը նախանշելու համար վայրը անհրաժեշտ է նշել մարկերային ժապավենով: Տեղեկու-

թյունը անմիջապես ուղարկվում է որոնողական ծառայության պետին:

#### **4.10. Ֆիզիկական որոնում**

Ֆիզիկական որոնում կատարելու ժամանակ SAR թիմի անձնակազմը աշխատում է ավերվածությունների գոտում և նրա շրջակայքում տուժածների հայտնաբերման նպատակով անցկացնելով դատարկ և սահմանափակ տարածքների տեսողական գնահատում, ինչպես նաև մասնակցում է լսման ժամանակ կորորդինացնող համատեղ աշխատանքներին:

Ընդհանուր լռություն հայտարարումից հետո («լռության րոպե»), որոնման գոտում ձայնի կամ արձագանքման աղբյուրը ճշգրիտ որոշելու նպատակով անցկացվում է լսում: Անհրաժեշտ է հիշել, որ լսողությունը բավականաչափ լավանում է փակված աչքերի դեպքում: Հայտնի է, որ «փլատակների տակից» ձայնը տարածվում է բավականին թույլ, և որ տուժածը կարող է տվյալ պահին չպատասխանել կանչին: Ուստի, «լռության րոպե»-ն անհրաժեշտ է հայտարարել յուրաքանչյուր երկուսից -չորս ժամը մեկ: Պետք է պատրաստ լինել ոչ սովորական ձայների՝ ղլղոց, լաց, ճվոց, ճոց և այլն:

Ֆիզիկական որոնմանը կարելի է դասել տուժածների և ականատեսների հարցումը: Այս մեթոդը բավականաչափ հուսալի է «լեզվական խոչընդոտ»-ի պայմաններում: Անհրաժեշտ է հաշվի առնել նաև ականատեսների ցանկությունը իրենց հարազատներին կամ ծանոթներին օգնելու սուբյեկտիվ պահերը:

Այս մեթոդի կիրառման ժամանակ, ցանկացած դեպքում անհրաժեշտ է վերստուգել ավելի օբյեկտիվ մեթոդներով: Տվյալ-



ների հավաքման ժամանակ կարևոր է, որպեսզի գործի դուրս եկող տեղեկության մշակման կազմակերպված համակարգը:

Դա պետք է ապահովվի ոչ միայն թիմի տեխնիկական մասնագետների աշխատանքով (վտանգավոր նյութերի և շինարարական կառույցների մասնագետների) և փրկարարական անձնակազմի, այլև հնարավոր է փրկարարների խմբերի, որոնք նույնպես գործողության սկզբում կարող է ուղարկվեն ֆիզիկական որոնում անցկացնելու համար:

- Յիշե՛ք՝ յուրաքանչյուր տուժած պետք է հարցաքննվի:
- «Լռության թուպ»-ն հայտարարվում է յուրաքանչյուր երկուսից -չորս ժամը մեկ:
- Եղե՛ք պատրաստ ոչ սովորական ձայների՝ դլլոց, լաց, ճվոց, ճռոց և այլն:
- Լիովին մի՛ վստահե՛ք ականատեսների պնդումներին:
- Տվյալների հավաքման ժամանակ կարևոր է, որպեսզի աշխատի տեղեկությունների մշակման կազմակերպված համակարգը:

## ԳԼՈՒԽ 5

### ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### ***5.1. Փրկարարական աշխատանքների անցկացումը***

Ըստ եռթյան, փրկարարական աշխատանքները համարվում են ողջ գործողությունների կենտրոնական բաղադրիչը: Փրկարարական աշխատանքները գրավում են ժամանակի մեծ մասը և պահանջում են որոնողափրկարարական թիմի բոլոր ստորաբաժանումների սերտ փոխգործակցություն (կառավարման, օպերատիվ ծառայությունների, ինժեներական ծառայության և օժանդակ ստորաբաժանումների), տուժածների անվտանգ և բարեհաջող փրկման համար:

Փլատակներում կենդանի մարդկանց հայտնաբերումից հետո անհրաժեշտ է ցուցաբերել համապատասխան բժշկական օգնություն:

***Տուժածի փրկման գործընթացը բոլոր դեպքերում (ապաշրջափակումը) պետք է լինի կազմակերպված և անվտանգ ինչպես փրկարարների, այնպես էլ փրկվողի համար:***

SAR թիմի անձնակազմը պետք է հետևողականորեն հետևի այդ սկզբունքին: Աշխատանքի վարման տակտիկան մշակվում է տեղում, ծառայության ղեկավարների կողմից, ընդհանուր իրավիճակին և բոլոր յուրահատուկ պահանջներին համապատասխան:

***Փրկարարական աշխատանքների անցկացման առավել կարևոր տարրերից է համարվում փլատակներում կենդանի տուժածների վրայից ծանրությունների հեռացման համաձայնեցումը:***

Այդ աշխատանքները պարտադիր պետք է անցկացվեն փորձառու փրկարարի ղեկավարության ներքո և համաձայնեցվեն բժշկական ծառայության հետ, քանի որ երկարատև ճնշման համախտանիշի դեպքում, սահմանափակ արյան շրջանառության արդյունքում գոյացած թույլները և այլ հետևանքային արգասիքները օրգանիզմ հանկարծակի տարածման դեպքում կարող է բերել արագ մահվան:

Բժշկական միջամտությունը և համապատասխան թերապիան կարող է փոխհատուցել այդ վիճակը:

Թիմի ղեկավարի պարտականությունն է համարվում՝ OSOCC-ի, LEMA-ի, SAR թիմերի հետ փոխհամաձայնեցված որոնման և փրկման մշակված տակտիկայի և ռազմավարության կիրառման համաձայնեցումը, տեղեկատվական հոսքերի կուտակումը և տարածումը, փրկարարական գործողությունների ընդհանուր պլանի մշակումը և ի կատար ածումը, ռեսուրսների ռացիոնալ կիրառումը:

Փրկարարական աշխատանքների օպտիմալ տակտիկայի և ռազմավարության կիրառումը թույլ է տալիս ապահովել հետևյալը՝

- միջազգային փրկարարական գործողությունների պայմաններում SAR թիմի աշխատանքի արդյունավետ կառավարում և համաձայնեցում,

- SAR թիմի ռեսուրսների կիրառման համաձայնեցում նրա հստակ գրանցած ծավալի դեպքում,
- SAR թիմի (ծառայություն, բաժիններ) տեղում ձեռք առնված օգնության ցուցաբերման միջազգային սխեմայի բոլոր բաժինների ամբողջացում,
- արտաքին օգնության և ռեսուրսների կիրառում և հաշվառում,
- մի շարք տեղամասերում փրկարարական աշխատանքների միաժամանակյա (անհրաժեշտության դեպքում) անցկացում,
- թիմի ծավալումից առաջ և աշխատանքի ընթացքում SAR թիմի գործունեության ստանդարտացված պատրաստություն և բարձր արդյունավետություն,
- ստանդարտացված մեթոդի կիրառման արդյունքում փրկարարական գործողություններին մասնակից SAR թիմի ողջ անձնակազմի համար բարձր աստիճանի անվտանգություն,
- երկարատև շուրջօրյա աշխատանքներ,
- տուժածների կազմակերպված և անվտանգ փրկում:
- Միջազգային փրկարարական գործողություններին բնորոշ առանձնահատկությունը համարվում է այն, որ որպես կարգ, SAR թիմի ներգրավումը աշխատանքում տեղի է ունենում հենց փրկարարական աշխատանքների անցկացման փուլում:
- Անհրաժեշտ է հաշվի առնել, որ յուրաքանչյուր առանձին դեպքում, հավանաբար կկիրառվի փոխգործակցության մինչ այդ ծանոթ ավելի լավ տարբերակ:

- Տուժածի փրկման գործընթացը բոլոր դեպքերում (ապաշրջափակումը) պետք է լինի կազմակերպված և անվտանգ ինչպես փրկարարների, այնպես էլ փրկվողի համար:

### ***5.1.1. Ռազմավարության հարցեր***

Հենց փրկարարական աշխատանքների վարման արդյունավետ կառուցված ռազմավարությունն է հանդիսանում բարեհաջող փրկարարական գործողությունների առանցքային տարրը:

***Փրկարարական աշխատանքների ռազմավարության կատարելիությունը կայանում է հետևողական գործողությունների որոշակի միասնական պլանի կազմման և իրականացման մեջ, որոնք պետք է միավորեն փրկարարական գործողությունների առավել արդյունավետ անցկացման ձգտման ողջ արդյունավետ տակտիկական հնարավորությունները:***

Փրկարարական գործողությունների քանակական և որակական ցուցանիշներն արդեն սկզբում անմիջականորեն ցույց կտան ռազմավարական խնդիրների լուծման բարեհաջողության աստիճանը:

### ***5.1.2. Փրկարարական ստորաբաժանումների կազմը***

Պետի կողմից ղեկավարվող փրարարական ստորաբաժանումը (խումբ) սովորաբար կազմված է աշխատանքների շուրջօրյա վարում ապահովող մասնագետների երկու խմբերից (հերթափոխ): Ցանկացած տեսակի ԱԻ ժամանակ, յուրաքանչյուր խմբի կազմը կարող է տարափոխվել, սակայն ըստ մեր կարծիքի նրանում պետք է լինի վեց մարդուց ոչ պակաս՝ ներառված ղեկավարը:

### **5.1.3. Փրկարարական ստորաբաժանման ծավալումը**

SAR թիմի պետի և ծառայությունների ղեկավարների համար ռազմավարության առավել կարևոր խնդիրներից մեկն է հանդիսանում աշխատանքի սկզբում խնդիրների շրջանակի նախնական որոշումն:

Ընդհանուր առմամբ, ԱԻ գոտի SAR թիմի ժամանման ժամանակ, առավել նպատակահարմար է ողջ անձնակազմին ծառայությունները՝ որոնման և հետախուզման, բազային ճամբարի ծավալման, սարքավորումների պահեստի կազմակերպման, փրկարարական գործողությունների և այլնին վերաբերվող նախնական խնդիրներին: Ողջ անձնակազմին աշխատանքում ներգրավումը, անհրաժեշտ է անցկացնել ենթադրյալ և ընթացիկ որոնողափրկարարական խնդիրներին համապատասխան: Արդեն առաջին ժամերին ԱԻ գոտի ժամանման պահից, SAR թիմի պետը և ծառայությունների ղեկավարները պետք է անցնեն ***միջին և երկարատև պլանավորման***: Ընդհանուր պայմաններից կախված կարող են կիրառվել աշխատանքի կազմակերպման տարբեր սկզբունքներ՝

- աշխատանքի առաջին 8-12 ժամերին ողջ անձնակազմը զբաղված է.
  1. բազային ճամբարի ծավալմամբ,
  2. որոնման և հետախուզման աշխատանքներով,
  3. առաջնահերթ փրկարարական աշխատանքներով,
  4. այլ անհապաղ աշխատանքներով:
- աշխատանքի հաջորդ 4-6 ժամերին անձնակազմի կեսը հանգստանում է (առաջին հերթին նրանք, որոնք զբաղված էին բազային ճամբարի ծավալմամբ):

- հետագա 12 ժամյա շրջանը թիմի կեսը աշխատում է, մյուսը՝ հանգստանում, սնվում, քնում:

12-ժամյա հերթափոխի անցմանը զուգընթաց կարելի է պլանավորել մեկժամյա ընդմիջում՝ հրահանգավորման և տեղեկությունների փոխանակման անցկացման համար: Նման ռեժիմի դեպքում յուրաքանչյուր աշխատակից կաշխատի 13 ժամ, 11-ժամյա հանգստով: SAR թիմի ողջ անձնակազմի կողմից ծավալման տվյալ գրաֆիկի կիրառումը, թույլ կտա ի սկզբանե միաժամանակ վարել փրկարարական աշխատանքներ մի քանի տեղամասերում: Տևական շուրջօրյա աշխատանքի վարման դեպքում, կարող է անհրաժեշտություն առաջանալ կիսով կրճատել փրկարարական աշխատանքները: Փրկարարական աշխատանքների նման կրճատումը համարվում է փոխզիջումային, թույլ տարով յուրաքանչյուր հերթափոխի հանգստանալ: Դա անհրաժեշտ է անվտանգության տեսակետից և կիրառվում է միայն այն դեպքում, երբ կենդանի տուժածների հայտնաբերման հավանականությունը կտրուկ նվազում է (սովորաբար 5-7 օր), իսկ փրկարարների հոգնածությունը բավականաչափ շատ է: Իհարկե, առաջադրված հիմնական դրույթներից շեղումը, հնարավոր է կոնկրետ պայմաններից կախված: Հատկապես, եթե աշխատանքների ենթադրյալ մասշտաբները և նրանց պլանավորումը կարող են լիովին իրականացվել 24-27 աշխատաժամում, ինչը հաստատվում է փրկման բազմաթիվ դեպքերով: Աշխատանքների կազմակերպման նման սխեման կարող է լինել տեղին, եթե փրկման աշխատանքի կատարումից հետո չի նախատեսվում այլ անհետաձգելի աշխատանքներ: Թիմի ծավալման և աշխատանքի ռեժիմի իրականացումը համարվում է առավել դժվարներից մեկը:

#### **5.1.4. Սարքավորումների պահեստի կառավարումը:**

##### **Աշխատատեղերը գործիքներով, սարքավորումներով ապահովումը և ռեսուրսներով համալրումը**

SAR թիմի աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է գործիքների, սարքավորումների, սպառման նյութերի արագ ապահովումից և սարքավորումների պահեստում ռեսուրսների վերականգնումից: Պահեստի ծավալումը, կազմակերպումը և կառավարումը ունեն հիմնական նշանակություն: Յենց որ կորոշվի բազային ճամբարի վայրը, անհրաժեշտ է անմիջապես անցնել սարքավորումների պահեստի կազմակերպմանը: SAR թիմի պետը և ծառայությունների ղեկավարները, ապահովման ծառայության աշխատակիցների հետ համատեղ, պետք է այդ աշխատանքում օգնության համար առանձնացնեն լրացուցիչ անձնակազմ: Պահեստի կազմակերպումը և համալրումը, դա մեծ ծախսեր, ուժեր և ժամանակ պահանջող բազմատեսակետային խնդիր է:

Պահեստում եղած գործիքները, սարքավորումները և ռեսուրսները պետք է խմբավորվեն իրենց նշանակմանը համապատասխան: Պահեստի կազմակերպումից հետո անհրաժեշտ է ապահովել գույքագրման և ուղեկցման արդյունավետ գործընթաց:

Որոնողափրկարարական գործողություններին պատրաստության ժամանակ, նպատակահարմար է նախապես ներկայացնել աշխատանքների հիմնական տեսակները և գործիքների կիրառման ռեժիմները: Այն հնարավորություն կտա ռացիոնալ պլանավորել արագամաշ գործիքների աշխատանքային միջոցների ռեսուրսները և նվազագույնս՝ անհրաժեշտ նորոգման լրա-



կազմը: Սարքավորումների ուղեկցման տակ հասկանում ենք՝ դեպի աշխատանքային տեղամասեր սարքավորումների արդյունավետ տեղաշարժման կազմակերպում: Քանի որ պահեստի մեծ մասը զբաղեցնում է փրկարարական աշխատանքների համար նախատեսված գործիքները և սարքավորումները, SAR թիմի ողջ անձնակազմը պետք է խստորեն հետևի սարքավորումների հանձնմանը, ուղեկցմանը և վերադարձմանը վերաբերվող սահմանված կարգին:

Պահեստի փրկարական սարքավորումների բաժնում առկա են բազմաթիվ հատուկ գործիքներ և սարքավորումներ, հիմնականում նախատեսված երկաթբետոնե կառուցվածքների հետ աշխատանքի ժամանակ՝ կտրման, հորատման և դուրս բերման համար: Չատուկ գործիքների սահմանափակ քանակի դեպքում կարող է մի քանի տեղամասերում առաջանա նրանց միաժամանակյա կիրառման անհրաժեշտություն: Կարևոր է համաձայնեցնել այդ գործիքների համատեղ կիրառումը և տեղափոխումը, ինչը պահանջում է տեղամասերի միջև արդյունավետ կապ, սարքավորումների պահանջի որոշման և տեղ հասցնելու նպատակով:

***Ընդ որում, երբեմն այնքան կարևոր չէ գործիքի քանակը, որքան աշխատանքի վայրում նրա ռացիոնալ տեղաշարժման կազմակերպումը:***

- Պահեստի ծավալումը, կազմակերպումը և կառավարումը ունեն կարևոր նշանակություն: Դրանով պետք է զբաղվել միաժամանակ, և երբեմն էլ՝ մինչ մեծամասշտաբ փրկարարական աշխատանքներ սկսելը:
- Երբեմն այնքան կարևոր չէ պահեստում փրկարարական գործիքների և սարքավորումների քանակը, որքան՝ աշխատանքային տեղամաս այդ ռեսուրսների և գործիքների ռացիոնալ տեղաշարժման կազմակերպումը:
- SAR թիմի ողջ անձնակազմը պետք է խստորեն հետևի սարքավորումների հանձնմանը, ուղեկցմանը և վերադարձմանը վերաբերվող սահմանված կարգին: Դա թույլ կտա խուսափել սարքավորումների պարապուրդից, նրա կորուստից:
- Գործիքների ինտենսիվ կիրառումով երկարատև փրկարարական աշխատանքների պայմաններում որոշիչ նշանակություն է ձեռք բերում դաշտային սորոգման կազմակերպման և աշխատանքային միջոցների օպերատիվ փոխարինման հնարավորությունը:

***5.1.5. Օգնությունը փրկարարական գործողություններում***

Փլատակներում տուժածների հայտնաբերման համար սովորաբար ներգրավվում են փրկարարական ծառայության անձնակազմը: Այս փուլում փրկարարները կարող են մասնակցել կինոլոգներին և տեխնիկական անձնակազմին օգնության ցուցաբերման, ավերվածության վայրերում, դժվարամատչելի տարածքներ-

րի մուտքի մաքրման, ամրակների տեղակայման, սարքավորումների մոնտաժման անվտանգության գնահատման գործում: Նրանք նաև կարող են անմիջականորեն անցկացնել որոնում:

***Ոչ ոք, բացի վարժեցրած շներից, փրկարարներից և հատուկ պատրաստված մասնագետներից չեն կարող շինության ներսում ինքնուրույն իրականացնել որոնում, քանի որ դրա համար անհրաժեշտ է հատուկ հմտություններ և գործնական փորձ, վտանգավոր նյութերի հայտնաբերման, սահմանափակ տարածքներում և անկայուն կառուցվածքների առկայության դեպքում աշխատանքներ իրականացնելու համար:*** Նման աշխատանքները անհրաժեշտ է համաձայնեցնել որոնողական և փրկարարական ծառայության պետերի, փրկարարական խմբերի, բուժանձնակազմի, ինչպես նաև վտանգավոր նյութերի և շինարարական կառույցների մասնագետների հետ:

#### ***5.1.6. Կառավարումը և համաձայնեցումը փրկարարական աշխատանքների անցկացման վայրում***

Յուրաքանչյուր աշխատանքային տարածքում պետք է գտնվի SAR թիմի պետի կողմից նշանակված աշխատանքի ղեկավար, լիազորված ղեկավարելու տվյալ տարածքում աշխատող ողջ անձնակազմին:

Փրկարարների յուրաքանչյուր խմբի ղեկավար, իր խմբի ինքնուրույն աշխատանքի ժամանակ, կրում է պատասխանատվություն վստահված տարածքի ողջ գործունեության համար: Երբ մեկ փրկարարների խումբը աշխատում է միայն մեկ տարածքում, այն սովորաբար ձևավորվում է հետևյալ կերպ.

- փրկարարական խմբի ղեկավար,
- 5-8 փրկարարներ:

խմբի ղեկավարը համաձայնեցնում է բոլոր տակտիկական հարցերը և ապահովում սեփական խմբի աշխատանքները ընդունված անվտանգության կանոններին համապատասխան:

Առավել մասշտաբային կամ բարդ փրկարարական աշխատանքների ժամանակ կարող է անհրաժեշտություն առաջանա ներգրավելու երկու և ավելի փրկարարներ մեկ տեղամասում փրկարարական գործողությունների կատարման համար:

Եթե, երկու կամ ավելի խմբեր աշխատում են միասին, փրկարարական ծառայության պետը կարող է իր վրա վերցնել նրանց ղեկավարումը, կամ նշանակել խմբերի ղեկավարներից մեկին տեղամասի պատասխանատու, ինչի մասին անհրաժեշտ է հստակ տեղեկացնել գործողության բոլոր մասնակիցներին: Բանի որ աշխատանքների ղեկավարը լիովին կրում է ողջ տարածքի պատասխանատվությունը, անհրաժեշտ է հասկանալ, որ մեկ մարդու համար բարդություն է ներկայացնում հաշվի առնել բոլոր տակտիկական պահերը և կազմել գործողության բազմակողմանի պլան: Բացի այդ, շատ կարևոր է հսկել անվտանգության պահպանմամբ աշխատանքի ընթացքը: Այդ նպատակով, մեծամասշտաբ կամ բարդ գործողությունների վարման ընթացքում աշխատանքի ղեկավարին օգնելու նպատակով, անհրաժեշտ է նշանակել «տեխնիկայի անվտանգության պատասխանատու»՝ աշխատանքի անվտանգության առանձին հարցերի հաշվառմամբ փրկարարական աշխատանքների պլանի կազմման և հսկման համար:

Երբ երկու փրկարարական խմբեր կցված են մեկ բարդ տարածքի, ղեկավարներից մեկը պետք է նշանակվի այդ տարածքի ղեկավար, իսկ մյուսը՝ փրկարարական աշխատանքների տեխնիկայի անվտանգության պատասխանատու: Նման կազմա-

կերպման դեպքում անձնակազմը կարող է ձևավորվել հետևյալ կերպ.

- ղեկավար,
- անվտանգության պատասխանատու(երկրորդ խմբի ղեկավար),
- 10-16 փրկարարներ:

Կարևոր է, որպեսզի ղեկավարը և տեխնիկայի անվտանգության պատասխանատուն աշխատանքի գոտում հստակ լինեն նկատելի (միջազգային փրկարարական կազմակերպություններում ընդունված է կիրառել հստակ պիտակավորված նույնակա-նացված բաճկոններ՝ սովորաբար նարնջագույն): Տարբերակիչ նշան կարող է լինել թևակապը, սաղավարտը կամ բաճկոնը: Այդ բաճկոնները պատրաստվում են երկու կողմերը միասնան գործվածքից, բաճկոնի տարբեր կողմերում առկա է փրկարարի և ղեկավարի պաշտոնը ներկայացնող տրաֆարետային (շաբ-լոնային) տարբերակիչ նշան (RESQUE\_official in charge): Նման ձևով այդ պաշտոնին նշանակվելու դեպքում փրկարարը կարող է շուռ տալ բաճկոնը համապատասխան կողմ:

- Յուրաքանչյուր աշխատանքային տարածքում պետք է լինի աշխատանքի ղեկավար:
- Աշխատանքի ղեկավարը ոչ թե մասնակցում, այլ ղեկա-վարում է փրկարարական աշխատանքները:
- Մեկ տեղամասում երկու և ավելի փրկարարական խմբե-րի միասնական աշխատանքի դեպքում, բացի աշխա-տանքի ղեկավարից, պետք է նշանակվի փրկարարա-

կան աշխատանքների տեխնիկայի անվտանգության պատասխանատու:

- Կարևոր է, որ ղեկավարը և տեխնիկայի անվտանգության պատասխանատուն աշխատանքի գոտում լինեն հստակ նկատելի:

## ԳԼՈՒԽ 6

### ՏԱԿՏԻԿԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ

#### **6.1. Որոնման գնահատման հավանականությունները**

Փրկարարական խմբերի ծառայության պետերի և ղեկավարների (հրամանատարի) հիմնական պարտականություններից մեկն է համարվում փլատակների տակ գտնվող տուժածների հայտնաբերման և դուրս բերման աշխատանքների հաջորդականության որոշման կայացումը:

Ավերվածությունների գոտում գոյություն ունի փրկարարական գործողությունների անցկացման հինգ փուլեր /աղյուսակ 3/:

#### **Աաղյուսակ 3.**

<b>1 փուլ</b>	<i>Ավերված գոտու գնահատում: Գոտում անցկացվում է հնարավոր զոհերի որոնում, գնահատվում է փրկարարական աշխատանքների անվտանգությունը և շինարարական կառույցների կայունությունը:</i>
<b>2 փուլ</b>	<i>Փլատակների մակերեսի վրա գտնվող բոլոր տուժածների արագ հավաքում: Հատուկ ուշադրություն առանձնացնել փրկարարների անվտանգությանը, որոնք չպետք է ապավինեն կառույցի արտաքին տեսքին, քանի որ փլուզված բեկորները իրենց տակ կարող է չունենան անհրաժեշտ հիմք և կարող է առաջանալ երկրորդային անսպասելի փլուզում:</i>

<p><b>3</b> <b>փուլ</b></p>	<p>Փլուզման արդյուքնում առաջացած բոլոր ներքին դատարկ և հնարավոր տարածքներում կենդանի տուժածների որոնում: Կարող է կիրառվել ձայնային կապը և հարցումը: Միայն հատուկ պատրաստություն անցած մասնագետները կարող են փլատակների ներսում անցկացնել որոնումներ: Տեղացիների տվյալների հավաքումը կարող է էականորեն նպաստել այլ հնարավոր տուժածների տեղի հայտնաբերմանը:</p>
<p><b>4</b> <b>փուլ</b></p>	<p>Փլատակներում գտնվող տուժածների դուրս բերում: Տուժածի հայտնաբերման դեպքում, մուտք բացելու նպատակով կարող է հատուկ գործիքների և տեխնիկական հնարքների կիրառմամբ բեկորների մասնակի հեռացման անհրաժեշտություն առաջանա:</p>
<p><b>5</b> <b>փուլ</b></p>	<p>Փլուզված բեկորների ընդհանուր մաքրում: Սովորաբար անցկացվում է բոլոր հայտնաբերված տուժածների դուրս բերումից և հավաքումից հետո:</p>

Փուլերի հաջորդականության վրա կարող են ներգործել հետևյալ առանձնահատկությունները.

1. Վաղ չհայտնաբերված հավանական տուժածի գտնվելու վերաբերյալ տեղեկության ստացումը:
2. Աշխատանքներին խոչընդոտող մեծաքանակ բեկորների առկայությունը: Անհրաժեշտ է, հատկապես փլատակներ-



րում հավանական կենդանի մարդկանց գտնվելու դեպքում լրջորեն մտածել որոշիչ փուլում ծանր սարքավորումների կիրառման որոշումը:

SAR թիմի և այլ ստորաբաժանումների հետ կոորդինացիայի կառավարման տարբերակը կախված կլինի կոնկրետ իրավիճակից, տեղական մարմինների տնօրինության տակ գտնվող առկա ռեսուրսներից և տվյալ պահին աշխատանքների վիճակից: Տեղեկատվության աղբյուր կարող է հանդիսանալ արտակարգ իրավիճակները ղեկավարող պաշտոնական տեղական մարմինների ներկայացուցիչը՝ LEMA/ OSOCC/:

Սովորաբար SAR թիմը ստիպված է փրկարարական գործողությունները սկսել աշխատանքային փուլի միջևամասում: Մեծամասամբ, մինչ թիմի ժամանելը, ծայրահեղ դեպքում, տեղի ուժերով արդեն առաջին երկու փուլերը անցկացված են լինում: Փլատակների ներքին տարածքներում տուժածի հայտնաբերման դեպքում փրկարարական գործողությունները կարող են սկսվել երրորդ կամ չորրորդ փուլերում:

Ընդ որում, տեղամասերում աշխատանքների ղեկավարները մասնակիցներին պետք է ապահովեն տեղեկություններ բոլոր նախաձեռնվող գործողությունների վերաբերյալ: Օրինակ, ամեն անգամ, երբ փրկարարները աշխատում են ներքին դատարկ տարածքներում կամ հասանելի ճեղքերում, անհրաժեշտ է վերևում, ներքևում և տարածքի շուրջ դադարեցնել բոլոր տարվող աշխատանքները այնքան ժամանակ, մինչև փրկարարները և տուժածները դուրս չգան: Այդ աշխատանքների գործընթացում անհրաժեշտ է պահպանել հուսալի կապ SAR թիմի բոլոր կառույցների հետ: Դժվարություններ կարող են առաջանալ փլա-

տակերում մեծաքանակ տուժածների հավանական գտնվելու, SAR թիմի փրկարարական ռեսուրսները գերազանցող փրկման աշխատանքների անցկացման ռազմավարական լուծումների ընդունման ժամանակ: Այդ իրավիճակում, SAR թիմի ղեկավարությանը անհրաժեշտ է որոշել փրկարարական աշխատանքների հաջորդականությունը, ղեկավարվելով մեծաքանակ տուժածների փրկման ժամանակ անձնակազմի անվտանգության պահպանման սկզբունքով: Դա հոգեբանական բարդ պահ է, քանի որ յուրաքանչյուր փրկարարական ստորաբաժանում, խումբ, իր աշխատանքային տարածքը հիմնավոր կերպով կհամարի առաջնայինը: Նման խնդիրը անհրաժեշտ է նկատի ունենալ և SAR թիմի անձնակազմին բացատրել նրա լուծման կարգը դեռ փրկարարական գործողությունների սկզբնական փուլում:

Ուստի, անհրաժեշտ է հաշվի առնել տուժածների կենսունակության գործոնը, փրկման յուրաքանչյուր դրվագի տևողությունը, նախատեսվող վերջնական արդյունքը, ինչպես նաև փրկարարների համար անվտանգության նկատառումները (օրինակ՝ որոշ տարածքներ փրկարարական գործողությունների անցկացման համար կարող են իրենցից ներկայացնել շատ բարձր վտանգավորություն): Փրկարարական գործողությունների օպտիմալ կարգի որոշման համար այդ գործոնները պետք է գնահատվեն կոլեկտիվ կերպով:

Անհրաժեշտ է նաև ընդունել որոշում կապված անձնակազմի աշխատանքի ռեժիմի և ճամբարի տեղակայման (օրինակ՝ լրիվ կազմով թիմի աշխատանքը և հերթափոխի հերթազայումը), ինչպես նաև բազմաթիվ փրկարարական գործողություններին տեղական ուժերի կամ կամավորների ներգրավման հետ:

- Մեծամասամբ, մինչ թիմի ժամանելը, տեղի ուժերով արդեն անցկացված են լինում որոնման և փնտրման նախնական փուլերը:
- Անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել փլատակներում տարվող բոլոր աշխատանքները վերևում, ներքևում և տարածքի շուրջ այնքան ժամանակ, մինչև փրկարարները և տուժածները դուրս չեն եկել:
- Ողջ թիմի անձնակազմին անհրաժեշտ է պատրաստ լինել իրավիճակի, երբ անցկացվող փրկարարական աշխատանքները գերազանցում են ջոկատի ռեսուրսները, ղեկավարությունը որոշում է փրկարարական աշխատանքների հաջորդականությունը, ղեկավարվելով մեծաքանակ տուժածների փրկման ժամանակ անձնակազմի անվտանգության պահպանման սկզբունքով:
- Անհրաժեշտ է լրջորեն մտածել փլատակներում կենդանի մարդու գտնվելու հավանականության դեպքում ծանր սարքավորումների կիրառման որոշման վերաբերյալ:
- Ծանր սարքավորումներով աշխատելու դեպքում, յուրաքանչյուր աշխատատեղում պարտադիր նշանակվում է դիտորդ:

## ***6.2. Փրկարարական ռեսուրսների ներգրավումը որոնողական աշխատանքներում***

Որոնողական և հետախուզական աշխատանքներում փրկարարների մասնակցությունը իր մեջ ներառում է փլատակներում աշխատանքների անվտանգություն, անանցանելի տարածքներում մուտքի ապահովում, սարքավորումների տեղակայում, ան-

միջականորեն որոնման անցկացման գնահատում (առանձին կամ կինոլոգների և տեխնիկական միջոցների ներգավմամբ): Որոշ որոնողական աշխատանքներից առաջ կարող է հարկ լինել ամրացնող սարքավորումների տեղակայման: Անհրաժեշտության դեպքում կարող է անցկացվել ներքին տարածությունների դիտարկում կան դրանց լսում: Այդ ամենը բերում է որոնողական խնդիրներից դեպի փրկարարական ռեսուրսների բավակաչափ շեղման և որոնողական աշխատանքներից՝ աստիճանաբար փրկարարականի լիովին անցման՝ որոնողական աշխատանքները պարտադիր պետք է անցկացվեն մեծ ծավալով: Որոնողական աշխատանքների առաջնահերթ արդյունքը պետք է համարել վերջնականորեն որոշված փրկարարական աշխատանքների անցկացման ավարտուն պլանը: Ուստի, ողջ գործողությունների հենց սկզբից անհրաժեշտ է նշել կազմակերպական երկու առանձին ծառայություններ՝ փրկարարական և որոնողական (հնարավոր է տեխնիկական մասնագետներով ուժեղացնել կինոլոգիական ծառայությունը):

Սովորաբար շատ բարդ է փրկարարական աշխատանքների սկզբի և որոնման աշխատանքների ավարտի միջև սահմանի անցկացումը: Նման աշխատանքները օգտակար է համարել միավորված որոնողափրկարարական աշխատանքներ: Համախմբված աշխատանքները պետք է կոորդինացվեն փրկարարական և որոնողական խմբերի պետերի միջև: Որոնման անմիջական գործողությունները նախատեսում է անձնակազմի տեղակայում ավերվածությունների գոտում և նրա շուրջ: Փրկարարական ծառայության անձնակազմը կարող է ուղարկվել փլատակների ներսում ինքնուրույն տեսողական որոնում անցկացնելու համար: Փրկարարները կարող են գործել ունկնդրման համար կոորդի-

նացված որոնմանը: Որոնման գոտում հայտարարվում է լռության ռեժիմ, և փրկարարական խմբերի մասնակիցները փորձում են ճշգրիտ որոշել տուժածի գտնվելու վայրը: Փլատակների տակ գտնվող տուժածների ուղղությունը կարելի է որոշել ձայնային և սեյսմիկ սարքավորումներով:

Բոլոր դեպքերում որոնման մասնակիցներին անհրաժեշտ է պատրաստել աղյուսակ, որի վրա պետք է նշվեն շենքի (աշխատանքային գոտու) ընդհանուր բնութագրերը, որտեղ անցկացվում է որոնումը և հետագա հարցուփորձի համար նշվում բոլոր կարևոր տեղեկությունները: Հետագա գործողությունների որոշումների ընդունման նպատակով այդ տեղեկությունները ուղարկվում է SAR թիմի պետին:

Որոնողական խմբերը ունեն միտում ինքնուրույնաբար վերածվելու փրկարարականի:

- Խուսափե՛ք դրանից:
- Որոնողական աշխատանքից՝ փրկարարականի անցումը սովորաբար չունի հստակ սահման:
- Հիշե՛ք՝ որոնողական աշխատանքները պետք է անցկացվեն ողջ ծավալով:
- Որոնողական աշխատանքների առաջնահերթ արդյունքը անհրաժեշտ է համարել վերջնականորեն որոշված փրկարարական աշխատանքների անցկացման ավարտուն պլանի առկայությունը:

### **6.3. Փրկարարական աշխատանքների անցկացման տարածքի կազմակերպումը**

Փրկարարական գործողությունների գերակայության որոշումից հետո կարևոր է, որպեսզի SAR թիմի ողջ անձնակազմը տարածքում անվտանգ և արդյունավետ փրկարարական աշխատանք ապահովելու համար հետևողաբար հետևի տակտիկային: Աշխատանքների ղեկավարը պետք գնահատի իրադրությունը, դիտարկի անվտանգության հարցերը և կազմի գործողությունների պլան:

Նրան հնարավոր է պահանջվի շինարարական կառույցների և վտանգավոր նյութերի գնահատման համար մասնագետի օգնություն:

Այդ ժամանակամիջոցում, անձնակազմի մնացած անդամները տարածքում պետք է սկսեն անմիջականորեն աշխատանք, հաշվի առնելով հետևյալ առանձնահատկությունները.

- վտանգավորության գնահատում և նրա նվազեցում ի հաշիվ՝ ազատ ընկած վտանգավոր նյութերի, մեխոլ տախտակների, շինարարական կառուցվածքների և այլ կախված տարրերի հեռացման:
- Կենցաղային հաղորդակցման միջոցների անջատում և ստուգում:
- Զանդված շինությունների շուրջ վտանգավոր գոտու սահմանի հաստատում:
- Փրկարարական աշխատանքների գոտու հստակ սահմանում (վտանգավոր գոտուց առանձին):
- Փրկարարական աշխատանքների գոտուց բոլոր կողմնակի անձանց հեռացում:

- Սահմանված աշխատանքային գոտու ներսում կամ շուրջը, հարմարավետ տեղում, սարքավորումների մոնտաժման և գործիքների տեղի համար հրապարակի սահմանափակում:
- Տեղամասում գործողությունների պլանի և մասշտաբների որոշումը անհրաժեշտ է ավարտել մինչ մեծամասշտաբ փրկարարական աշխատանքներ սկսելը:

Գործողությունների մասշտաբի և պլանի մշակման որոշման ավարտման հետ անհրաժեշտ է թիմում անցկացնել հրահանգավորում: Անհրաժեշտ է կատարել փրկարարական աշխատանքների և հիմնական բնութագրերի նշումներով տարածքի պարզ գծագիր: Թիմային հրահանգավորումը թույլ կտա բարձրացնել աշխատանքի արդյունավետությունը, ամբողջ անձնակազմին տալով հնարավորություն հասկանալու գործողությունների նպատակը և խնդիրները, նախապես ապահովել անհրաժեշտ սարքավորումների, նյութերի առկայությունը, ինչպես նաև մշակել տակտիկան: Բացի այդ, միաժամանակ անհրաժեշտ է դիտարկել անվտանգության, շինարարական կառույցների գնահատման, վտանգավոր նյութերի բացահայտման հարցերը, վթարված կապի և տարհանման սկզբունքները: Ինչպես վաղ նշվեց, փրկարարական աշխատանքների կատարման յուրաքանչյուր տարածքի արդյունավետ կառավարման և կորդինացիայի ապահովման համար պետք է ունենալ հստակ նշանակված ղեկավար:

Վտանգավոր գոտին ձևավորվում է անմիջականորեն ավերվածությունների մուտքի հնարավոր հսկողության համար, որտեղ հնարավոր է շենքի հետագա փլուզում, բեկորների թափվում, միաժամանակ նոր սեյսմիկական ցնցումների հետ կապ-

ված փլուզումների կառուցվածքի փոփոխում: Վտանգավոր գոտի թույլատրվում է միայն որոնում և տուժածների դուրս բերումն անմիջականորեն իրականացնող SAR թիմի անդամներին:

Մնացած բոլոր աշխատակիցները, մինչ նրանց նշանակումը կամ հերթափոխումը պետք է գտնվեն վտանգավոր գոտուց դուրս: Վտանգավոր գոտին պետք է նշվի մարկերային ժապավենով կամ պարանով խաչածն-խաչ (հանձնարարված INSARAG –ի կողմից): Փրկարարական աշխատանքների վարման գոտին ձևավորվում է փրկարարական աշխատանքների անցկացման տարածք մուտքի հնարավորության հսկողության համար, որտեղ կարող են անցնել միայն SAR թիմի անդամները, կամավորները և փրկարարական աշխատանքներում ներգրավված տեղացի անձնակազմը, ինչպես նաև փրկարարական գործողությունները սպասարկող աշխատակիցների համար անվտանգ աշխատանքային գոտիներ կազմակերպողները: Գոտին պետք է նշվի մեկ հորիզոնական շարքով՝ մարկերային ժապավենով կամ պարանով:

Փրկարարական աշխատանքների գոտու որոշման ժամանակ պետք է ստեղծված և համապատասխանաբար նշված լինի հետևյալ լրացուցիչ հրապարակները.

- օպերատիվ պահակակետ՝ ղեկավարների աշխատավայր, տվյալ տարածքում ողջ գործունեության կոորդինացիայի և կառավարման համար,
- բժշկական օգնության համար տարածք՝ թիմի անդամների և փլատակների տակից դուրս բերված աղետյալների վիրահատության և բուժման վայր: Բուժանձնակազմը պետք է ներկայացնի հրապարակի կարիքները.



- անձնակազմի բնակվելու գոտի՝ աշխատանքին չմասնակցող թիմի անդամների հանգստի, սնման վայր, որտեղից նրանք կարող են անմիջապես կանչվել փրկարարներին օգնություն ցուցաբերման կամ հերթափոխման համար: Այստեղ հերթափոխի անձնակազմի համար կարող են անցկացվել նվազագույն վերականգնողական միջոցառումներ:
- փրկարարական սարքավորումների պահպանման գոտի՝ գործողությունների ապահովման համար սարքավորումների պահպանման, սպասարկման և հանձնման համար հուսալի վայր: Բենզինով աշխատող գեներատորների և այլ սարքավորումների համար պետք է առանձնացվի հարմարավետ տեղ, որպեսզի աղմուկը և արտազատվող գազերը չխանգարեն փրկարարական աշխատանքների վարմանը,
- աշխատանքային գոտի ամրակների համար՝ որոնողափրկարարական գործողությունների անցակցման վայրում շենքերի ամրացման համար, շինարարական նյութերի մշակման և պահպանման վայր,
- մահացածների մարմինների տեղավորման վայր՝ դիակները ցանկալի է չկուտակել և աշխատել դուրս հանել անմիջապես: Մահացածների հարազատները երբեմն ոչ միայն խանգարում, այլ կարող են վտանգ ստեղծել: Անհրաժեշտ է որոշել տեղական իշխանություններին դիակների հանձնման կարգը: LEMA -ն հակված է նպաստելու դրան:
- անցումներ՝ (մուտքեր) փրկարարական աշխատանքներ

րի վարման տեղամաս ներթափանցման հստակ սահմանված ճանապարհներ: Անվտանգության ապահովման համար, անձնակազմի տեղաշարժման, սարքավորումների, գործիքների տեղափոխումը անհրաժեշտ է անցկացնել միայն այդ ճանապարհով: Բացի այդ, վթարային իրավիճակի բարդացման կամ տուժածների տարահանման դեպքում կարող է պահանջվել աշխատանքային գոտու հրատապ լքում:

- Փրկարարական աշխատանքների վարման տեղամասը պետք է կազմակերպվի հստակ :
- Գազի, էլեկտրաէներգիայի, ջրի անջատումը աշխատանքային գոտում համարվում է պարտադիր, հատկապես փլուզումների գոտում կամ փլատակների մակերևույթին աշխատանքների կատարման ժամանակ:
- Յետագա վտանգավորության գնահատման համար (փլուզումներ, կրկնակի ցնցումների հավանականություն, և այլն) անհրաժեշտ է միշտ նշանակել դիտորդ:

#### ***6.4. Տեղամասում փրկարարական աշխատանքներ կատարող անձնակազմը***

Որոնողափրկարարական թիմի անձնակազմի ներուժի արդյունավետ կիրառումը համարվում է տակտիկայի հիմքը: Առաջին հերթին անհրաժեշտ է, որպեսզի ողջ անձնակազմը հստակ հասկանա կառավարման կառուցվածքը (իմասա ի՞նչ է նշանակված աշխատանքի ղեկավար և այլն), ինչպես նաև նրանց ծառայողական պարտականությունները:

SAR թիմի համար խնդիրը սովորաբար ուղղորդվում է

շղթայաձև՝ աշխատանքային տեղամասերին կցված թիմի պետից և հետո ծառայության պետերը որոշում են պարտականությունների ոլորտը ենթակա անձնակազմի համար: Խնդիրները կարող են վերաբերվել ինչպես մեկ, այնպես էլ մի քանի տեղամասերի աշխատանքներին:

Այսպես, փրկարարական ծառայության պետը նշանակում է յուրաքանչյուր խմբին ղեկավար, իսկ համալիր գործողությունների անցկացման անհրաժեշտության դեպքում պահանջվում է երկու և ավելի խմբերի ղեկավարներ: Յուրաքանչյուր խմբում պետք է նշանակվի աշխատանքների կատարման տեխնիկայի անվտանգության պատասխանատու: Աշխատանքների բաշխումը և համապատասխանաբար յուրաքանչյուր խմբի անձնակազմի պարտականությունների նշանակումը հանդիսանում է աշխատանքների ղեկավարի պարտականությունը: Դա պետք է հստակ գիտակցեն խմբի բոլոր անդամները: Երբեմն թիմի խնդիրները ձևակերպվում է ելնելով թիմի անդամների գիտելիքներից, որակավորման մակարդակից և կոնկրետ խնդիրներից: Անձնակազմի արդյունավետ կիրառումը պետք է լինի ղեկավարի առաջնային խնդիրը:

Որոշ գործողություններում, երբ փրկարարները զբաղված են որոնումով և տուժածների փրկումով, նրանք կարող են ենթարկվել երկրորդային փլուզումների վտանգի (օրինակ՝ ավերվածությունների վտանգավոր գոտում կախված կառուցվածքատարրերի տակ, ներքին դատարկ տարածություններում և ճեղքերում աշխատանքի ժամանակ և այլն): Այդ իրավիճակում կազմակերպվում է փրկարարների պահեստային (փրկարարական) խումբ, որը հերթապահում է ողջ պատրաստությամբ անձնակազմի տեղակայման սահմանված գոտում:

Ճայրահեղ դեպքում մեկ փրկարար պետք է կցվի փրկարարական սարքավորումների պահպանման գոտում: Փրկարարների խմբի ղեկավարը այդ նշանակումը պետք է կատարի փրկարարական գործողություններից առաջ:

- Որոնողափրկարարական թիմի անձնակազմի արդյունավետ կիրառումը փրկարարական գործողությունների տակտիկայի հիմքն է:
- SAR թիմի անձնակազմի համար կառավարման ողջ կառուցվածքը պետք է պարզ լինի:

## **6.5. Թիմի ծառայության փոխգործողությունները**

Բեկորների տակից տուժածների դուրս բերման համապատասխան հնարքների և տակտիկայի մշակմանը զուգահեռ, փրկարարական ծառայությունների և թիմերի ղեկավարները, պետք է դիտարկեն միջթիմային փոխգործակցության տեսակետները և ընթացիկ գործողությունների անցկացման ժամանակ ողջ ծառայության անձնակազմի ներգրավումը, օրինակ՝

- ինժեներական ծառայության մասնագետները պետք է ներգրավվեն բազմաթիվ կառուցվածքների կտրտումների, սողանցքների բացման, տեղափոխման, բարձրացման, ինչպես նաև սարքավորումների օպերատիվ վերանորոգման աշխատանքներին,
- վտանգավոր նյութերի մասնագետները պետք է հետազոտեն տեղամասը, գնահատեն շինության ներսում և նրա շուրջ ընդհանուր մթնոլորտային վիճակը, վտանգավոր նյութերի առկայությունը մինչ որոնողափրկարարական գործողությունների սկսելը: Երկարատև գործողությունների ընթացքում առաջանում է պարբերաբար դիտարկումների անհրաժեշտություն,
- բժշկական ծառայության անձնակազմը փլատակների տակ գտնվող, ինչպես նաև շրջափակումից նրանց դուրս բերման ժամանակ անցկացնում է տուժածների վիճակի գնահատում և նրանց վիճակի կայունացում: Փրկարարները պետք է ապահովեն դեպի տուժածներ բուժանձնակազմի արագ մոտեցում, ինչը կարող է պահանջել փրկարարական աշխատանքների ժամանակավոր դադարեցում: Բժշկական անհապաղ միջամտության և տուժածի վիճակի կայունացումը փոխհատուցում է աշխա-

տանքի ընդմիջման ժամանակի կորուստը: Բժշկական անձնակազմը հետևում է գործողություններին մասնակից բոլոր փրկարարների վիճակին, որոշում են սթրեսային ռեակցիաների, հյուժվածության, ջրազրկման, վնասվածքների և առողջության համար այլ վտանգավոր վիճակների դրսևորումները, որոնք կարող են միջամտություն պահանջել,

- ծանր սարքավորումների օպերատորները մշակում են հանձնարարականներ, որոնք հաշվի են առնվում լայնամասշտաբ բարձրացման աշխատանքների անցկացման, ծանր սարքավորումների տեղափոխման ժամանակ, ավտոամբարձչի կիրառման անհրաժեշտություն պահանջող փրկարարական աշխատանքների գործընթացում: Բացի այդ, նրանք պետք է կապող օղակ ծառայեն փրկարարների խմբի և սարքավորումների արտաթիմային օպերատորների միջև, որոնք կարող են ոչ լիովին հասկանալ անցկացվող աշխատանքների տակտիկան և նրբությունները,
- փրկարարական աշխատանքներում կարող է այլ կազմակերպությունների աշխատակիցների ներգրավման կարիք առաջանա՝ կենցաղային (գազ, էլեկտամատակարարման, ջրամատակարարման), իրավապաշտպանական և կամավորական: Անհրաժեշտության դեպքում նրանց օգնությունից պետք է հրաժարվել:

## **6.6. Աշխատանքային տեղամասում անձնակազմի անվտանգությունը**

Ցանկացած աշխատանքի անցկացման ժամանակ անվտանգությունը համարվում է առաջնային խնդիր: Փրկարարական ծառայության անձնակազմը ողջ գործողությունների ընթացքում պետք է պահպանի տեխնիկայի անվտանգությունը: Փրկարարական գործողություններում անհրաժեշտ է հաշվի առնել նվազագույնը հետևյալ առանձնահատկությունները՝

- ավերված (քանդման ենթակա) շենքերի շուրջ աշխատանքների անվտանգության գնահատումը լավագույն դեպքում համարվում է դժվարեցված: Տվյալ գնահատումը պետք է անցկացվի անընդմեջ փրկարարական աշխատանքների ընթացքում: Անհրաժեշտ է յուրաքանչյուր անցկացվող գործողությունից առաջ հրահանգավորումներում անդրադառնալ տեխնիկայի անվտանգության և վտանգավոր նյութերի բացահայտման հարցերին: Հրահանգավորման գերակա թեման պետք է լինի անձնակազմի համար վտանգի նվազեցումը,
- վթարային ազդանշանների տեսակները և եղանակները անհրաժեշտ է տեղադրել մինչ փրկարարական գործողությունները,
- վթարային ազդանշանները և տարհանման սկզբունքները պետք է վայրկենապես ճանաչվի և հասկանալի լինի ոչ միայն SAR թիմի անձնակազմի, այլև գործողությունների անցկացմանը օժանդակողների կողմից (ծանր սարքավորումների օպերատորների, կենցաղային և վթարային ծառայության աշխատակիցների, զինվորական ծառայողների): Արդյունավետ վթարային ազդա-

նշանը և տարիանման սկզբունքները հանդիսանում են ԱԻ գոտում ողջ անձնակազմի աշխատանքի անվտանգության հիմքը: Համապատասխան ազդանշան տալու համար կիրառվում է հաղորդման սարքեր, շչակներ և այլ սարքավորումներ (օրինակ՝ հրատեխնիկական բնույթի):

- անձնակազմի հանգիստը և վերականգնումը համարվում է SAR թիմի տևական և օպերատիվ աշխատանքի անվտանգության հիմքը: Անհրաժեշտ է որոշել աշխատանքի ցիկլերի և թիմի բաշխման սխեման, որոնք պետք է մշտապես հսկվեն ծառայության պետի կողմից: Բացի այդ, ողջ անձնակազմը պարտադիր պետք է հասկանան ջրի, սննդի և հանգստի պահանջի մշտապես ընդունման անհրաժեշտությունը: Փրկարարական ծառայության և խմբերի պետերը պետք է պատասխանատվություն կրեն սեփական ենթակաների պահանջմունքների համար, հաշվի առնեն դա ընթացիկ աշխատանքներում և ապահովեն դրանց համապատասխան կատարումը:
- Սննդի և հանգստի հերթագայումը անհրաժեշտ է անցկացնել ոչ թե անձնակազմի հայեցողությամբ, այլ գրաֆիկով:
- ԱԻ-ում երկարատև գտնվելու պայմաններում փրկարարական ծառայության և խմբերի պետերը պետք է նաև հետևեն անձնակազմի բարոյական գերլարվածության և սթրեսի դրսևորումներին: Ղեկավարները և բժիշկները գործողությունների անցկացման գործընթացում պետք է անմիջականորեն հսկեն որոնողափրկարարական ողջ անձնակազմի սթրեսային իրավիճակը,



- ծառայության պետերը պետք է անընդհատ հետևեն անձնակազմի աշխատունակության վրա բացասական ներգործող հոգնածության աստիճանին: Նկատի առնելով գորահավաքը, թռիչքը և ճամբարի տեղակայումը, կարելի է ենթադրել թիմի անձնակազմի աշխատանքների արդյունավետության նվազում (մոտավորապես՝ 50-70% կամ ցածր) արդեն գործողությունների սկզբում: Կարևոր է հասկանալ, որ բացի ֆիզիկական հոգնածությունից, նվազում է մտավոր ակտիվությունը, այսինքն՝ դանդաղում և դժվարանում որոշում ընդունելու ռեակցիան: Ուստի, երկարատև գործողությունների ժամանակ պարտականությունների բաշխման համար կարող է անհրաժեշտություն առաջանա ընդհանուր թիմային կամ ներխմբային վերադասավորումներ, գործողությունների պլանի, կառավարման կառուցվածքի և տեխնիկայի անվտանգության վրա խմբի ուշադրությունը կենտրոնացնելու համար:
- ծառայության պետերը պետք է իմանան փրկարարական գործողությունների գործընթացում վնասվածք ստացած որոնողափրկարարական թիմերի անդամների բուժմանը և տեղափոխմանը վերաբերվող հիմնական կանոնակարգը: Դրա մասին նրանք պետք է հրահանգավորված լինեն գործողության սկզբում:
- մինչ փրկարարական գործողությունները սկսելը, պետք է լուծվեն գույքի (հսկողություն, հերթապահություն) պահպանման և ֆիզիկական անվտանգության բոլոր հարցերը:

Գործողությունների ժամանակ պետք է արհամարել հիգիենայի հարցերը: Այստեղ պետք է նկատի ունենալ ոչ միայն SAR թիմի ողջ անձնակազմի անհատական հիգիենան, այլև դիակների հետ աշխատելը, շնչառական և մարսողական օրգաններ փոշու կամ վարակված օդի և ջրի ներթափանցումը, ինչպես նաև աննշան վնասվածքները: Բժշկական ծառայության աշխատակիցները նման դեպքերում պետք է պարտադիր պատրաստ լինեն բուժման և վարակագրածման աշխատանքներին:

SAR թիմի ողջ անձնակազմը պետք է հնարավորություն ունենա փոխելու հագուստը և պատշաճ կերպով կիրառի պաշտպանիչ հագուստ և անձնական պաշտպանության միջոցներ:

## ԳԼՈՒԽ 7

### ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՆՇԱԳԾՈՒՄԸ

(SAR) միջազգային որոնողափրկարարական թիմերի պատաստության և զորահավաքի հայտարարումը սովորաբար տեղի է ունենում լայնամասշտաբ արտակարգ իրավիճակների դեպքում, որի հետևանքների վերացումը տեղական և ներքին ռեսուրսներով հնարավոր չի ապահովել: Բնածին և տեխնածին աղետներին սովորաբար ուղեկցում են առկա ենթակառուցվածքների բավականաչափ ավերվածությունները և վնասվածքները: Այդ ժամանակ միջազգային SAR թիմերը ստիպված են լինում հետախուզության և տեղազննման բացակայության կամ անբավարարության դեպքում աշխատելու ավերվածությունների լայնածավալ գոտիներում, որտեղ առկա են բազմաթիվ շինություններ: Օբյեկտների նշագծման և նշումների բաշխման կարգը մշակված է INSARAG-ի հանձնարարականներին համապատասխան և առաջարկվում են շենքերում ամենաբարձր հավանականությամբ կենդանի տուժածների փրկման որոնողափրկարարական աշխատանքների կատարման հերթականության, ընտրության, որոշման և բացահայտման ժամանակ օգնության համար: Որպես այդպիսին, դա կարող է լինել կառուցվածքային լավ վիճակում և փրկման տեսակետից ավելի հեռանկարային շենքը, որտեղ ենթադրվում են առավել քանակի պոտենցիալ տուժածներ: Բացի այդ, կարևոր է, որպեսզի օբյեկտների նշագծմանը վերաբերվող տեղեկությունը, աշխատանքի պայմանները, տուժածների վտանգները և վիճակը ներկայացվի ստանդարտացված ձևով, ինչը արագացնում է նրա մշակման գործընթա-

ցը, քանի որ որոնողափրկարարական թիմի անդամները կարող են լինել աշխարհի տարբեր երկրներից:

### ***7.1. Իրավիճակի առաջնային գնահատումը***

Հենց իրավիճակի առաջնային ճշգրիտ գնահատականն է մեծապես նպաստում փրկարարական աշխատանքների հետագա բարեհաջող ընթացքին:

Այս փուլում հատկապես կարևոր է՝ որպես առավել արագ համարվող գնահատման ստանդարտացման մեթոդի կիրառումը: Ուստի, ԱԻ գոտի միջազգային որոնողափրկարարական թիմի ժամանման և իրավիճակի առաջնային գնահատման անցկացման հետ, մինչ որոնողափրկարարական աշխատանքների սկիզբը կարող է առաջանալ հետևյալ գործողությունների կատարման անհրաժեշտություն.

- օբյեկտների նշում, ըստ (հասցեի), դիրքի, ճարտարապետական առանձնահատկության,
- օբյեկտների ընդհանուր բաշխում ըստ փրկարարական աշխատանքների վարման հերթականության (կենդանի տուժածների բարձր հավանականությամբ շենքերի առանձնացում),
- առավել ճշգրիտ գնահատում պահանջող օբյեկտների նշում,
- մինչ որոնողափրկարարական աշխատանքների սկիզբը յուրաքանչյուր առանձին օբյեկտի անվտանգության գնահատում և վտանգավոր վայրերի նշագծում:

Աշխատանքայի գոտի թիմի ժամանման ընթացքում գոյություն ունի նվազագույնը երկու հնարավոր իրավիճակներ: ***Առա-***

**ջին դեպքում** կարող է որոշվել կենդանի տուժածների որոնման տեղամասը: Բացի այդ, կարող է հայտնի լինել առանձին շենքերի տեղադրությունը կամ էլ արդեն անցկացվել է նշագծումը: Տվյալ տեղեկատվությունը բավականին կրճատում է լուծում պահանջող խնդիրների քանակը: Եական է համարվում այն փաստը, որ իրավճակի ընդհանուր գնահատմանը վերաբերվող շատ խնդիրներից, մինչ թիմի ժամանումը արդեն կարող է լուծված լինել տեղական ուժերով և որոնողափրկարարական թիմի ծառայության պետերը կարող են օգտագործել այդ տեղեկատվությունը գործողության պլանի կազման և թիմի ռեսուրսների բաշխման ժամանակ: Սակայն անհրաժեշտ է միշտ ստուգել տեղական աղբյուրները ստացված տեղեկատվությունը: **Երկրորդ դեպքում**՝ SAR թիմի ժամանման հետ, կարող է նրա աշխատանքների համար ուղղությունը մատնանշող հետախուզման և տեղագնման տվյալները լինեն անբավարար կամ ընդհանրապես չլինեն: Ընդ որում, որոշում ընդունելու գործընթացը և ինքը իրավիճակը դառնում է ավելի ու ավելի բարդ: Նման դեպքում ժամանումից հետո առաջին ժամերին օգտակար է վերը նշված տակտիկայի բաժնի հանձնարարականները:

## **7. 2. Նշագծման/маркировка/ համակարգը**

Նշագծման համակարգը ունի երկու ուղղություններ.

- օբյեկտների և վտանգների վիճակի նշագծում,
- փլատակներում տուժածներին տեղադրության նշագծում:

Նշագծման համակարգի երկու ուղղությունները իրարից տարբերելու համար կիրառվում են տարբեր ձևաչափեր:

Նշագծման համակարգը մշակված է վնասված շենքին վերաբերվող յուրահատուկ տեղեկատվության արտացոլման համար: Ուղղություններից յուրաքանչյուրի աշխատանքները կարող են կատարվել մեկը մեկից անկախ, թեպետ օբյեկտի իրավիճակի և վտանգների գնահատումը սովորաբար անցկացվում է սկզբում: Շինությունների անվտանգ մուտքերը պետք է հստակ նշված լինեն նարնջագույն աերոզոլային ներկով: Նմանօրնակ նշվում է նաև տուժածի գտնվելու վայրը:

Ենթադրվում է, որ որոնողափրկարարական խմբի շինարարական կառույցների և վտանգավոր նյութերի մասնագետները ձեռնամուխ կլինեն օբյեկտների և վտանգավորությունների նշագծմանը այն ժամանակ, երբ մնացած աշխատակիցները կանցկացնեն տուժածների որոնում: Կարևոր տեղեկատվության արձանագրման համար անհրաժեշտ է կիրառել հատուկ գնահատման թերթիկներ, կապված շինարարության տեսակի, հիմնակմախքի, նշանակության, տուժածների տեղադրության, վտանգների, յուրաքանչյուր առանձին շինության համար որոնողափրկարարական հնարավորությունների գնահատման հետ: Չամապատասխան նշումները գրանցվում է՝ գնահատման թերթիկում և դրվում հենց շենքում:

Չետախուզական խմբի մասնագետները հետազոտված շինության հասանելի բոլոր բացահատված մուտքերի մոտ նշագծում են մեկ մետր կողմով քառակուսիներ: Նշագծման համակարգում կիրառվում է միայն միջազգայնորեն ընդունված նարնջագույնը: Կարևոր է, որպեսզի նշված լինեն գնահատված շենքի մուտքի բոլոր ընդունելի տեղերը, որպեսզի SAR թիմի անձնակազմը կարողանա նկատել, որ տվյալ շենքը հետազոտված է և որոշի նրա կարգավիճակը:

Քառակուսու կենտրոնում հստակ դրվում է շինության վիճակը և դիտարկման անցկացման պահին բոլոր վտանգները մատնանշող հատուկ նշաններ: Սովորաբար քառակուսին պատկերվում է անմիջականորեն մուտքի մոտ, համեմատաբար ակներև անվտանգ հեռավորության վրա:

***Նշագծումը վերծանվում է հետևյալ կերպ.***

Շինությունը ունի մուտքի հնարավորություն և որոնողափրկարարական աշխատանքների համար անվտանգ է: Վնասվածքներն աննշան են, հետագա փլուզումների նվազ հավանականությամբ:

Շինությունը ունի աննշան վնասվածքներ, որոշ գոտիներ համեմատաբար անվտանգ են, որոշ հատվածներ էլ կարող են պահանջել շինարարական ամրակների, կապերի և փլուզման ենթակա կառույցների բեկորների հեռացման:

Շինությունը վտանգավոր է որոնողափրկարարական աշխատանքների կատարման համար և ենթակա է լրացուցիչ փլուզման: Հեռահար որոնումը կարելի է շարունակվել նշանակալից ռիսկով: Փրկարարական աշխատանքների անցկացման դեպքում անհրաժեշտ է ստեղծել անվտանգ գոտիներ և արագ տարհանման ճանապարհներ:

← Քառակուսու կողքին սլաքը ցույց է տալիս դեպի շինություն անվտանգ մուտքի ուղղությունը, եթե քառակուսին պատկերված է նշված մուտքից դեպի դուրս:

**HM-** Ցույց է տալիս շինության ներսում կամ շրջակայքում վտանգավոր նյութի առկայություն: Անձնակազմը կարող է ենթարկվել վտանգի: Անհրաժեշտ է նաև նշել վտանգի տեսակը:


Բացի այդ, նշվում է SAR թիմի տարբերակիչ նշանը, տարբերիվը և ամսաթիվը (քառակուսուց աջ): Այդ տեղեկությունը նշվում է կավիճով: Շինության ներսում, լրացուցիչ կարելի է փակցնել մարկերով գրված մանրամասն տեղեկություններով կաչող ժապավեն:

Որոնողափրկարարական թիմի ողջ անձնակազմին անհրաժեշտ է գիտենալ հնարավոր վտանգների մասին և շինության ներսում փնտրել շինարարական կառույցների և վտանգավոր նյութերի մասնագետների կողմից արված այլ նշումներ: Բացի այդ, գործողությունների ընթացքում, յուրաքանչյուր կրկնակի դիտարմանը զուգընթաց, իհայտ են գալիս վաղ թողնված տարբերի, ամսաթվի և կատարողների նոր նշումներ (կավիճով), կամ պատկերվում է լրիվ նոր քառակուսի, եթե սկզբնական տեղեկությունը արդեն հավաստի չի:

Ներքևում բերված պատկերում ցույց է տրված վտանգների և շինարարական կառուցվածքների նշագծման համակարգի տարբեր բաղադրիչներ:

Ստորև բերված նշագծման օրինակը վկայում է այն մասին, որ անվտանգ մուտքը գտնվում է քառակուսու վերևում (դա կարող է լինել լուսամուտ, վերնահարկ և այլն): Չուզահեռ գիծը ցույց է տալիս, որ գործողությունից առաջ շինությանը կարող ամրացման անհրաժեշտություն լինել: Գնահատման անցկացման օրը, ամսաթիվը, տարբերիվը և ժամը: Շինությունում նշված է բնական գազի առկայությունը: Դիտարկում անցկացրած թիմի անվանումը:





**02. 05. 2018թ. ժամը 12.45**  
**HM - Բնական գագ**

### ***Աշխատանքը իրականացրած ընկառնի անվանումը***

#### ***Փլատակներում տուժածների գտնվելու վայրի նշագծումը***

Ենթադրյալ տուժածների գտնվելու վայրի նշագծումը ընդունված է ՄԱԿ-ի համակարգում, ՄԱԿ /INSARAG/-ին կից որոնման և փրկման հարցերով միջազգային խմբի հանձնարարությանը: Նշագծումը կատարվում է որոնման աշխատանքներից հետո:

Երբ որոշված է ենթադրյալ տուժածների գտնվելու վայրը, կարող է պազվել, որ աշխատանքային գոտում փլատակների քանակը և բնույթը լիովին փակում են կամ դժվարեցնում են մուտքը դեպի հայտնաբերված կամ ենթադրյալ տուժածը: Ստորև բերված է նշագծման կատարման մի շարք հիմնական կանոններ և հանձնարարականներ.

- տուժածների տեղադրության պայմանանշանների նշագծումը կատարվում է որոնող խմբի կամ որոնողական աշխատանքներ իրականացնող այլ մասնագետների կողմից, այն դեպքում, երբ հայտնաբերումից անմիջապես հետո տուժածը շրջափակման մեջ է,

- տեղադրության նշագծման պայմանանշանները կատարվում է սովորաբար կարմիր և նարնջագույն վառ ներկով (գունավոր կավիճով),
- մեծատառ «V» /victim-տուժած/ պատկերվում է հայտնաբերված կամ ենթադրյալ տուժածի գտնվելու վայրի մոտ: «V» նշանի կողքը հնարավոր է դեպի տուժածի ուղղությամբ ցույց տվող սլաքի պատկերում այն դեպքում, երբ նշանը հնարավոր չի անմիջականորեն մոտ տեղադրել,
- «V» նշանը որոնողափրկարարական թիմի պայմանական նշանն է: Տվյալ տեղեկատվությունը կարող է օգտակար լինել լրացուցիչ տեղեկության ստացման անհրաժեշտության դեպքում:
- «V» նշանի շուրջ պատկերվում է շրջանակ տուժածի գտնվելու վայրը տեսողական հայտնաբերման, նրա կողմից ձայնային ազդանշան տալու կամ յուրահատուկ աղմուկի հաստատման դեպքում, որոնք կարող են մատնանշել դրանց ճշտության բարձր հավանականությունը:
- «V» նշանի շուրջ շրջանակը պատկերվում է տուժածին՝ տեսողական, ձայնային կամ հնչյունային հաստատման առկայության դեպքում,
- նշագծումը կարող է կատարվել փլատակների մասնակի վերադասավորման, կամ հատուկ որոնողական սարքավորման կիրառումից հետո առաջնային կամ ուշ հայտնաբերման տեղում,
- փրկարարական շան արձագանքման տեղում նշվում է «V» նշանը առանց շրջանակի, որը նշանակում է՝ ենթադրյալ տուժած,

- «V» նշանի միջնամասում հորիզոնական գիծը պատկերվում է տուժածի մահվան հաստատման դեպքում,
- «V» նշանի շուրջ քառակուսին նշվում է նշված գոտուց բոլոր տուժածների հեռացման դեպքում:
- որոնողափրկարարական աշխատանքների անցկացման գործընթացում տուժածների քանակը, գտնվելու վայրի նշագծման պայմանանշանները, եթե դրանք հայտնի են, նշվում են տարածքի աղյուսակում:

### ***7.3. Օբյեկտների բաշխումը ըստ կատարվող աշխատանքների հերթականության***

Փրկարարական գործողությունների պլանավորման ժամանակ օբյեկտների բաշխմանը անհրաժեշտ է հատկացնել միայն մեկ ժամ: Ըստ հերթականության օբյեկտների բաշխման աշխատանքների կատարումը չպետք է շփոթել որոնողական աշխատանքների հետ: Եթե բաշխման համար պահանջվող ժամանակը գերազանցում է մեկ ժամը, դա նշան է, որ ընտրված աշխատանքների տեղամասը հավանաբար կգերազանցի փրկարարական SAR թիմի ռեսուրսները: Ըստ հերթականության օբյեկտների բաշխման աշխատանքների կատարումը կարող է հանդիսանալ թանկարժեք ժամանակի աննպատակահարմար կորուստ: Սակայն, միայն սկզբում ծախսված մեկ ժամը հետագայում թույլ կտա ճշգրիտ բաշխել SAR թիմի ռեսուրսները, ապահովելով փրկարարական աշխատանքների անցկացման անընդհատությունը, և հետևաբար նշանակալիորեն կբարձրացնի փրկարարական գործողությունների արդյունավետությունը: Ներքևում բերված դատողությունները վերաբերվում է միջազգային SAR փրկարարական թիմի մակարդակով ըստ հերթականությամբ

անցկացվող օբյեկտների բաշխման աշխատանքների կատարմանը.

- Մեծ տարածքներում, կամ մի քանի շենքերում աշխատանքների կատարման դեպքում օբյեկտների բաշխումը ակնհայտորեն կանցկացվեն մի քանի խմբերով: Գնահատման չափանիշները խմբի աշխատանքի գործընթացում կարող են չմտածված կերպով փոփոխվել (օրինակ՝ ուժեղ հոգեբանական գործոնների ներգործությունից): Ուստի, գնահատման համաձայնեցման հասնելու նպատակով անհրաժեշտ է խմբի գնահատման չափանիշները համեմատել օբյեկտների բաշխումից առաջ և հետո:
- Նշանակալի վտանգ ներկայացնող օբյեկտների առկայության դեպքում, առանց դրանց նախնական վերացման, որոնողափրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ անհրաժեշտ է կատարել նշում՝ «Մուտքը փակ է» (շենքում հրդեհի, քանդման վտանգի, վտանգավոր նյութերի բավականաչափ առկայության և այլ դեպքերում):
- Արագ-տեղեկատվական խմբի հիման վրա անցկացված շենքի գնահատումը պետք է վեջնականորեն ճշգրտվի SAR թիմի ղեկավարության կողմից:
- հերթականության բաշխման չափանիշները անհրաժեշտ է ճշգրտել ըստ կենդանի տուժածների տեղադրության առաջնային որոնումից հետո:

Բազմաթիվ շենքեր ընդգրկող տեղամասերի գնահատման ժամանակ, անհրաժեշտ է անցկացնել արագ դիտարկում յուրաքանչյուրում, գնահատելով կառուցվածքների ընդհանուր վիճակը, կիրառման հավանական բնույթը (օրինակ՝ գործնական, առևտրային կամ բնակելի շենքեր և այլն), և տարածքի ներս. տեսանելի մուտքի առկայությունը: Գնահատման գործընթացում անհրաժեշտ է պատրաստել տեղամասի յուրաքանչյուր շենքի նշված ընդհանուր գծագիրը: Այդ նպատակով փաստաթղթերի փաթեթում պետք է մշակված լինի համապատասխան ձևաթղթեր:

Տարածքի ընդհանուր դիտարկումից և արագ գնահատումից հետո, SAR թիմի ղեկավարներին անհրաժեշտ է շինություններում որոնողափրկարարական աշխատանքների հերթակալության կարգի հաստատում, որոնցում կարող են գտնվել կենդանի տուժածներ:

Ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ գործոնները.

- Կիրառման բնույթ՝ անհրաժեշտ է նկատի ունենալ միայն շինության նշանակությունը (պարտադիր չէ օգտատերերի քանակը):
- Ավերվածությունների մեխանիզմը՝ (շրջում, նստում, ոլորումը և այլն) շենքի շրջվելու հետագիծը կարող է ցույց տալ հնարավոր դատարկ տարածությունների տեղադրությունը, որտեղ կարող են գտնվել կենդանի տուժածներ:
- Օրվա ժամանակը՝ անհրաժեշտ է նկատի ունենալ ավերվածություններ առաջացնող իրադարձության պահը: Դա շինության կիրառման բնույթի ներդաշնակության

հետ հանդիսանում է որոշիչ գործոն: Օրինակ՝ եթե երկրաշարժը տեղի է ունեցել 21.00-ին և ավերվել է գրասենյակային և բնակելի շենք, ապա վերջինում փրկման դեպքերն ավելի բարձր հավանականություն ունեն:

- Տեղի բնակիչներից տեղեկությունների հավաքում փլատակներում տուժածների գտնվելու վերաբերյալ:
- Որոնողափրկարարական ռեսուրսների համապատասխանությունը՝ այսինքն, պահանջվում է արդյոք թիմի տնօրինության տակ գտնվող ռեսուրսների կիրառումը գերազանցող որոշակի շինություն (օրինակ՝ ծանր ամբարձիչ մեքենա, մուտքի ապահովման համար հատուկ սարքավորումներ):
- Շինարարական կառուցատարրերի վիճակը՝ նվազագույն նախնական ճիգերի միջոցով որոնողափրկարարական աշխատանքների անցկացման հնարավորություն, շինարարական կառույցների ամրացման և կայունացման նպատակով:

Գերակայության որոշման համար օգտակար է մտցնել պայմանական թվային գնահատում, որն իմաստ կհաղորդի աշխատանքների հերթականության վերջնական արդյունքին:

## ԳԼՈՒԽ 8

### ՀՈԳԵՔԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

SAR թիմի անձնակազմի վրա ազդող ընդհանուր սթրեսածին գործոններից բացի, միջազգային փրկարարական գործողություններում առկա են միայն այդ աշխատանքներին բնորոշ մի շարք գործոններ: Բացի այդ, լրացուցիչ բարդություններ ծագում են լեզվական խոչընդոտի պատճառով: Այսպես, օրինակ՝ աշխատանքի ժամանակ մշտական շփումը տուժածի հետ դառնում է անհնար: Հոգեբանական օգնության հարցում բուժանձնակազմի, հոգեբանական օգնության անձնակազմի սահմանափակությունը, փրկարարական ծառայության անձնակազմից պահանջում է պատրաստության բարձր մակարդակ: Ընդ որում, տուժածների և հենց փրկարարների հոգեբանական վիճակի որոշման եղանակները, հոգեբանական օգնության ցուցաբերման հնարքները չեն պահանջում հատուկ պատրաստություն և հանրամատչելի են: Այս գլխում ներկայացված են շվեդ հոգեբաններ Դժ. Լարսոնի և Լ. Օստերդալի «Աջակցումը ճգնաժամի ժամանակ» գրքից նյութեր:

#### ***Սուր սթրեսի նկատմամբ բնական ռեակցիան***

*Ահա սուր փուլում որոշ ռեակցիաներ.*

- շնչառության հետ կապված դժվարություն,
- անկեր ջերմության և դողի միջև,
- լսողության թուլացում,
- «թունելային տեսանելիություն», այսինքն տեսադաշտի նեղացում,

- թուլության զգացողություն՝ անզգայանում են մարմնի մասերը, ծանրանում են ձեռքերը և ոտքերը, մկանները հոգնում են,
- շարժումների համաձայնեցման խանգարում,
- կրծքավանդակի և իրանի ցավեր, գլխացավ, «գնդիկ կոկորդում»:

Բացի այդ կարող է լինել ախորժակի կորուստ, ընդհանուր թուլություն, գունատություն, քնի խանգարում, սուր (լարված) ռեակցիա իրավիճակի հանդեպ:

### ***Մտածողությանը վերաբերվող ռեակցիաներ և ախտանիշներ***

Սուր սթրեսային իրավիճակներում ուղեղի զարգացման գործառույթները անջատվում են լիովին կամ մասամբ:

*Արդյունքում մարդու մոտ կարող է լինել.*

- կրճատված է լուծումներ ընդունելու և տրամաբանական գնահատման հնարավորությունը,
- կրճատված է վարքի այլընտրանքային եղանակներ և առաջնահերթության դիրքորոշում գտնելու հնարավորությունը,
- դժվարացած է հաշվման գործողությունները,
- կորչում է իրադարձությունների օբյեկտիվությունը,
- նվազում է կենտրոնացման ընդունակությունը, օրինակ՝ նա մոռանում է ինչպես են անվանում այս կամ այն մարդուն, ինչպես է կոչվում տվյալ իրը,



- արագ ապակողմնորոշում, նրան հեշտ է մոլորության մեջ գցել,
- ուշադրության խանգարում:

### ***Յուզական ախտանիշեր և ռեակցիաներ***

Սուր սթրեսային իրավիճակներում հուզական ռեակցիաները կարող են փոփոխվել անտարբերությունից մինչև լրիվ մտահավաքության զգացողության:

Այսպես, օրինակ՝

- որոշ մարդիկ իրենց զգում են անխոցելի հերոս,
- որոշներն էլ՝ թույլ և կորցնում են հետաքրքրությունը,
- որոշներն էլ՝ անհանգստություն և վախ,
- որոշ մարդիկ զգում են իրենց գրգռված և գերզգայուն,
- որոշներն իրենց համարում են զոհ,
- որոշներն էլ ենթակա են երախտագիտության էյֆորիկ զգացողության այն բանի համար, որ կենդանի են մնացել,
- տարածված է չարությունը,
- կենդանի մնացածների միջև դիտվում է մեղքի զգացողություն,
- որոշ մարդիկ զգում են դառը միայնակություն, նրանք տխուր են և ճնշված,
- որոշներն էլ զգում են բարձր անհանգստություն մնացածների անվտանգության վերաբերյալ:

## ***Արտակարգ իրավիճակների գոտում մարդկանց վարքին վերաբերվող ախտանիշներ և ռեակցիաներ***

Աղետի գոտում մարդկանց վարքի ուսումնասիրության արդյունքում կարելի է նշել, որ մարդկանց միայն 20% է կարիք զգում անհապաղ հոգեբանական օգնության:

Աջակցության բացակայության դեպքում նրանք ընկնում են լրիվ անտարբերության մեջ, երբեմն էլ իրենց պահում են այնպես, որ իրենց և ուրիշներին ենթարկում են վտանգի: Մոտ 30% մարդիկ ականա կատարում են փրկարարների աշխատանքը մինչև նրանց ժամանումը: Եվս 50% էլ սովորաբար մնում են «հանդիսատես»:

Նրանք ընդունակ են հոգ տանել իրենց մասին, սակայն նրանց մոտ հաճախ անբավարար են ուժերը և գիտելիքները, որպեսզի օգնության ձեռք մեկնեն ուրիշներին:

Աննշան տեղեկությունը և կազմակերպական ճիգերը կարող են նրանց վերածել իրական օգնականների:

Ահա՝ աղետի գոտում մարդկանց վարքում հանդիպող ախտանիշները և ռեակցիաները.

- բանավոր և գրավոր շփման դժվարություն (մոտավորապես՝ 20% և բարձր),
- գերակտիվություն (մոտավորապես 30% և բարձր),
- ուժերի անկում (մոտավորապես 50% և բարձր),
- կատաղության նոպաներ, որոնք արդեն նշվել են (ընդհանուր ռեակցիան՝ օրինակ, երբ արդեն ուժ չկա մարդը դառնում է անօգնական),
- հանգստանալու և թուլանալու անընդունակություն (ղե-

կավարների մոտ շատ տարածված ռեակցիա է, որոնք չեն գիտակցել, որ որոշում ընդունելու իրենց ընդունակությունը աղետալի ընկնում է, եթե նրանք օրվա մեջ չեն հանգստանում գոնե չորս ժամ),

- նորմալ ռեակցիա է համարվում լացի նոպաները,
- այլ մարդկանց հետ շփումից խուսափում, որը բավականին կարևոր է (պատահարի մասին խոսակցություններից խուսափում) ,
- հիստերիա,
- ընդարմացում:

### ***Յուզական առաջին օգնություն՝ շրջապատին աջակցումը***

***Նախնական,*** առավել պատասխանատու բաժնում, առաջին օգնությունը համարվում է անվտանգության զգացողության ստեղծումը՝ շրջապատին աջակցումը: Գրկելով մարդուն, բռնելով նրա ձեռքը, մենք վերադարձնում ենք նրան պաշտպանվածության զգացողությունը:

Եթե Դուք, ի վիճակի չեք բացատրվել տուժածի հետ, խնդրեք այդ անել շրջապատից որևէ մեկին, որը հարուցում է Ձեր վստահությունը և որի հետ՝ Դուք կարող եք շփվել Ձեր, կամ ցանկացած այլ լեզվով:

***Յետո*** անհրաժեշտ է ստիպել տուժածին ***արտահայտվել, բացատրել*** ի՞նչ է պատահել և ինչպե՞ս է նրա վրա դա ազդել: Պետք է խոսել քիչ, պետք է լինել ***լավ ունկնդիր***:

Նման դեպքում սովորաբար բավական է լինում գիտենալ մի բանի ընդհանուր արտահայտություններ տուժածի լեզվով: Մնացածը՝ Դուք այնպես էլ կհասկանաք: Այդ փուլում անհրաժեշտ է ներգրավել կամավոր թարգմանիչներ:

Ստորև ներկայացնում ենք մի քանի խորհուրդներ, ինչպես աջակցել մարդուն, օգնել նրան վերականգնելու ուժերը: Նրանք հաշվի են առնված այն դեպքում, երբ տուժած մարդը Ձեզ ծանոթ չի: Եվ բնականաբար, գործել կարելի է միայն այն պայմաններում, երբ առաջին բժշկական օգնությունը արդեն ցուցաբերված է:

### ***Ձեզ անհրաժեշտ է՝***

- Նախաձեռնությունը վերցնել սեփական ձեռքերում՝ ներկայանալ և փորձել տուժածին ներշնչել, որ Դուք եկել եք նրա համար, որպեսզի աջակցեք և օգնեք նրան:
- Ավելին լսել, քան խոսել: Սթափեցնել տուժածին, խնդրել պատմել թե ի՞նչ է պատահել: Որտեղից է նա: Ինչպե՞ս է զարգացել իրավիճակը: Առօրյա կյանքում ինչով է նա զբաղվում:
- Խոսակցությունը կենտրոնացրեք միայն ռեակցիային, ախտանիշներին և խնդիրներին վերաբերվող հարցերին:
- Եղեք անկեղծ: Օրինակ, եթե մարդը վիրավոր է, մի թաքցրեք և մի մեղմացրեք դա:
- Հաշվի առեք Ձեր և նրա զգացմունքները, օգնեք նրան արտահայտել այն, ինչը նա զգում է՝ տխրություն, ցավ, մեղավորություն, չարություն, ագրեսիա և այլն:
- Վերահսկեք սեփական դեմքի արտահայտությունը (վստահ, հանգիստ):
- Խրախուսեք տուժածին ինքնուրույնության, մի փորձեք ամեն ինչ վերցնել Ձեր վրա, թույլ տվեք նրան կատարել նվազագույն հնարավոր գործեր, օրինակ՝ տվեք պահելու Ձեր լապտերը, թույլ տվեք ջուր բերել և այլն:
- Օգնեք նրան ընդունել աջակցություն և օգնություն:

- Հիշե՛ք, որ դուք այնուամենայնիվ հոգեբան չեք: Օրինակ՝ մի փորձե՛ք կանխարգելել ինքնասպանությունը, դիմե՛ք արհեստավարժներին:

### ***Ձեզ անհրաժեշտ չի՝***

- լուծել տուժած մարդու խնդիրները, հենց այնպես սատարե՛ք նրան, որպեսզի նա ինքնուրույն ընդունի անհրաժեշտ լուծումներ,
- շեղել տուժածին տխուր մտքերից, օրինակ՝ եթե նա բավականին ծանր ապրումներ ունի հարազատի կորստից, միևնույն է նա «թաքնվելու» տեղ չունի: Հիշե՛ք՝ խոսակցությունը պետք է գնա միայն տվյալ օրվա խնդիրների վերաբերյալ,
- ինքն իրեն խոսել, հանգստացնելով սեփական հուզմունքը,
- աջակցել շրջապատի հասցեին մեղադրանքները,
- համարել, որ տուժածը պետք է պաշտպանված լինի ցանկացած գնով, օգտակար կարող է լինել բոլորովին աննշան գործողությունները,
- համարել, որ մարդը օգնության կարիք չունի միայն այն պատճառով, որ նա իրեն պահում է հանգիստ կամ չի դրսևորում ոչ մի սթրեսային ռեակցիա:

### ***Երեխաներին աջակցումը***

Առաջին և հավանաբար ամենագլխավորը կայանում է երեխաներին եղելիության ճիշտ բացատրելը, ***մեղմացնելով նրանց ռեակցիան***: Դա կարելի է անել խոսելով բաց և ուղիղ, նրանց հասկանալի ձևով: Անհրաժեշտ է խուսափել վերացական բա-

ցատրություններից, ինչպիսիք են՝ «լքել է մեզ», «դրախտ է ընկել», «գնացել է անվերադարձ» կամ «քնել է»: Հակառակը՝ արեք այնպես, որպեսզի երեխաները կարողանան հասկանալ. ինչ է կատարվում՝ «մայրը չի կարող տեսնել, չի կարող խոսել, չի կարող շարժվել» և այլն: Այլապես երեխան կարող է տալ հարցեր՝ «ինչու՞ նա գնաց, ես ինչ որ բան այնպես չեմ արել» և կսկսի մեղադրել ինքն իրեն: Վերացական մտածելու ընդունակությունը զարգանում է միայն 10-12 տարեկանում:

Ժամանակ տվեք երեխային մտովի հաղթահարելու խնդիրը: Խոսակցությունները, հարցերը և պատասխանները կարող են լինել ոչ հոգնեցուցիչ, բայց նրանք պետք է լինեն հաճախակի: Խաղացեք երեխայի հետ, դա նրա համար խնդրի հաղթահարման լավագույն միջոցն է: Նկարչությունը նույնպես կօգնի նրան: Ցուցադրելով սեփական զգացմունքները՝ ***թույլ տվեք հասկանալ կորստի իրողությունը***: Անխոս լինում են դեպքեր, երբ դա անհնար է, կամ անընդունելի, ավելին՝ նրանք համարվում են բացառություն:

### ***Փրկարարներին օգնությունը***

Փրկարարներն իրենք (այստեղ, այս տերմինի տակ մենք կարող ենք հասկանալ ոչ միայն արհեստավարժ փրկարարներին, այլև բոլորին, ովքեր տուժածներին աջակցություն են ցուցաբերում) նույնպես օգնության կարիք ունեն: Կանգ առնենք այն կանոնների վրա, որոնց պահպանումը կօգնի օպերատիվ անձնակազմին աշխատանքի ժամանակ և նրա կատարումից հետո լավ հաղթահարել սթրեսը: Նրանց համար արտակարգ իրավիճակները անսպասելի չեն համարվում, դա նրանց առօրյա կյանքի մասն է: Կարևոր է ընդգծել, որ մեր նպատակը կայանում է նրանում,

որպեսզի սոսկ տալ խորհուրդ, որն ամենևին ամեն մի ճգնաժամային իրավիճակի ժամանակ չի համարվում համադարման:

### ***Կանխարգելման միջոցառումներ***

Կանխարգելիչ միջոցառումները կարող են նախաձեռնվել դեռ փրկարարական գործողություններից առաջ: Անձնակազմի սթրեսային ռեակցիաները կհասցվի նվազագույնի հենց փրկարարների լավ պատրաստության պայմանների դեպքում:

### ***Ուսուցում և մարզում.***

Ուսուցման ընթացքում ողջ օպերատիվ անձնակազմը պետք է ստանա.

1. Գործողություններում նրանցից սպասվող սեփական դերի վերաբերյալ հստակ, ինչպես նաև հնարավոր անհարմարության և նրա բացառման մեթոդների մասին պատկերացում:
2. Առաջին բժշկական օգնության ցուցաբերման մարզումներ (բերան-բերան արհեստական շնչառություն, սիրտ-թոքային վերակենդանացում և այլն) և առաջին «հուզական» օգնություն:

Արտակարգ իրավիճակները միշտ բավականին քառսային է: Ուստի նրա բոլոր փուլերում կարևոր է համագործակցությունը և իրավիճակի ցանկացած փոփոխությանը արձագանքումը: Այդ պատճառով, միջազգային գործողություններին կողմնորոշված ողջ անձնակազմը մշտապես պետք է անցկացնի համատեղ մարզումներ:

Կարևոր է համարվում նաև այն, որ միջազգային գործողություններին մասնակցության համար համահավաք թիմի ստորաբաժանման ձևավորման ժամանակ, ողջ թիմի անձնակազմը պետք է նախապես ծանոթանա դեկավարիների հետ, ունենա դրական տպավորության նրանց վերաբերյալ և հետևաբար լինի վստահ, որ ցանկացած իրավիճակում SAR թիմի դեկավարությունը կընդունի իրավասու որոշումներ:

***Գործողությունների կատարման ժամանակ  
ձեռնարկվող միջոցառումները  
հորհուրդներ օպերատիվ անձնակազմին.***

- Վերահսկեք մեկմեկու: Ձգտեք հետևել՝ Ձեր ընկերը չի գտնվում բարոյական և ֆիզիկական խանգարման եզրին: Հուշեք զուգընկերոջը՝ ինչպես որոշել, որ Դուք գերհոգնել եք («Եթե ես սկսեմ անել սա-սա և սա-սա՝ պարտադրիք ինձ հանգստանալ»):
- Աջակցեք մեկմեկու: Հաշվի առեք ընկերոջ զգացմունքները: Չարությունը և թշնամությունը մի ընդունեք Ձեր հասցեին: Առանց անհրաժեշտության մի քննադատեք մեկմեկու: Ոգևորեք նրան՝ «հիանալի է», «արի»: Ավա-հարել ուսին, առաջարկեք ինչ որ բան ուտել կամ խմել:
- Երկարատև սպասման շրջանում զբաղվեք ինչ որ բանով, օրինակ՝ ֆիզիկական վարժություններով:
- Փորձեք ուտել քիչ, բայց հաճախ:
- Հումորը Ձեր հուսալի ընկերն է: Բայց եղեք զգույշ սրախոսություններում:



- Մտովի օգնեք Ձեզ՝ «Ինձ մոտ ամեն ինչ կստացվի», «Ես գիտեմ ինչ է պետք անել»:
- Շնչեք խորը՝ ներշնչելով մեկ վայրկյան, պահեք շնչառությունը, թույլ արտաշնչեք:
- Եթե Ձեր ղեկավարը կամ ընկերը ասում է, որ Դուք հոգնել եք, ինքներդ էլ եք դա զգում՝ հանգստացեք:

### ***Չատուկ խորհուրդներ ղեկավարներին.***

- Ջանացեք մշտապես անձնակազմին տեղյակ պահել իրավիճակին: Անորոշությունը բերում է սթրեսի: Կարևոր է համարվում նույնիսկ տեղեկատվությունը՝ դրա բացակայության դեպքում:
- Բացասական հույզերը կանխելու և մարելու լավագույն միջոցը, դա զարգացման վաղ շրջանում դրանց դեմ պայքարը սկսելն է:
- Մշտապես հարցուփորձ արեք աշխատանքներից՝ «Ինչպե՞ս եք, կարողանո՞ւմ եք հաղթահարել»: Պատասխանի դեպքում հաշվի առեք ոչ միայն արտահայտությունը, այլև մարմնաշարժմանը, տվյալ պահին աշխատանքի վիճակը: Երբեմն մարդը ակնհայտորեն գտնվելով տազնապի մեջ կարող է պատասխանել, որ ամեն ինչ կարգին է:
- Ջանացեք ամենապատասխանատու տեղամասերում մշտապես փոխել աշխատողներին, որպեսզի առավել սթրեսավտանգ վայրերում մարդը մեկ ժամից ավելի չգտնվի:

- Տեսնելով, որ աշխատանքի լարվածությունը ընկել է, տվեք մարդկանց հանգստանալու հնարավորություն: Եթե անհրաժեշտ է՝ դա արեք հրամանի կարգով: Բացատրեք, որ գերհոգնածությունը գործին օգուտ տալ չի կարող:
- Փորձեք ապահովել՝
  - լվացարան և զուգարան,
  - հանգստի համար հարմար վայր,
  - սնունդ և ըմպելիք,
  - վատ եղանակից պաշտպանվելու միջոցներ՝ փոխնորդ հագուստ, և այլն,
  - իրավիճակը քննարկելու հնարավորություն:

***Գործողություններից հետո ձեռնարկվող***

***միջոցառումները***

***Խորհուրդներ ողջ օպերատիվ անձնակազմին***

1. «Ուսերից վայր դրեք բեռը»: Դա կարող է իրականանա ինքնին, բայց և կարող է կազմակերպվի անմիջապես գործողությունից հետո՝ մի բաժակ սուրճը և շոգեբաղնիքը կօգնեն Ձեզ դրանում: Ամենակարևորը՝ դա բարյացակամ մթնոլորտն է: Մի՛ քննադատեք ոչ մեկին: Կիսվեք տպավորություններով:
2. Գործողություններից հետո առաջին օրերին աշխատեք թուլանալ, ժամանակին սնվեք և քնեք:
3. Արագ վերադարձեք առօրյա կյանքին:
4. Փրկարարական գործողություններից հետո կարող է դժվար լինել ընտանիք վերադառնալ: Տանեցիներին

պատմեք այն մասին, թե ի՞նչ էր պատահել, ի՞նչ եք տեսել և կատարել: Հետաքրքրվեք առանց Ձեզ ինչպե՞ս են ընթացել նրանց գործերը: Ձեր ընտանիքին նույնպես անհրաժեշտ է Ձեզ շատ բան պատմել:

### ***Հատուկ խորհուրդներ դեկավարությանը***

1. Գովեք աշխատակիցներին, գնահատեք նրանց ջանքերը, լավ կլիկի դա անել անձամբ: Նրանք, ովքեր մնացել են աշխատավայրում նույնպես արժանի են գովեստի՝ կատարելիով ընդհանուր գործ:
2. Կազմակերպեք կարծիքների և տպավորությունների փոխանակում:
3. Մեկ ամիս անց, եթե որևէ մեկը դրսևորում է անհանգստություն, նշանակում է նրա մոտ դեռևս առկա է սթրեսային ախտանիշ, խորհուրդ տվեք նրան դիմել համապատասխան մասնագետի: Հիշեք, որ վերջինս չի հանդիսանում թուլության դրսևորում, այլ սոսկ վկայում է այն մասին, որ միջադեպը եղել է այնքան լուրջ, որ թողել է բավականին խորը հետք:

### ***Աջակցություն օպերատիվ անձնակազմին***

#### ***Գործողության ավարտից հետո քնարակում և կարծիքների փոխանակում.***

Վերջին տարիներին բուժանձնակազմի և արևմտյան փրկարական ծառայությունների մոտ տարածված է «քննարկում» տերմինը (debriefin): Այն նախատեսում է մտքերի փոխանակում դժբախտ պատահարից հետո՝ բացասական հույզերից ազատում: ***Այն սովորաբար վարում է ստորաբաժանման դեկավա-***

**րը: Զննարկումը, դա կազմակերպված հանդիպում է գործողությունների կատարման ժամանակ ստացած սթրեսային իրավիճակի հետևանքները թեթևացնելու համար:**

Զննարկումից հետո, յուրաքանչյուրը պետք է ծանր ու թեթև անի կատարված աշխատանքը և կատարի համապատասխան եզրակացություններ, ընդ որում հեռացնելով բացասական հույզերը, ձգտելով ազատվել դրանցից: Այն անհրաժեշտ է, քանի որ օգնում է քաջալերելու և համախմբելու նրա անդամներին, բարձրացնելով հետագա գործողությանը մասնակցության պատրաստականությունը:

**Երբ և որտեղ է անհրաժեշտ անցկացնել նման քննարկումները.**

Զննարկումն անհրաժեշտ է այն բանից հետո, երբ անձնակազմը ենթարկվել է սուր սթրեսի.

- եղել են շատ վիրավորներ,
- տուժել են երեխաներ,
- ոչ մեկին փրկել չի հաջողվել, ինչը կարող է գնահատվել որպես գործողության տապալում,
- հենց փրկարարներն են ենթարկվել լուրջ վտանգների, կամ անձնակազմը կրել է կորուստներ,
- միջադեպը լայնորեն լուսաբանվել է զանգվածային լրատվամիջոցներում (այդ թվում նաև խեղաթյուրված):

Զննարկումը պետք է անցկացվի 48 ժամ հետո, սակայն գործողության ավարտից հետո ոչ պակաս յոթ օր անց, հարմարավետ շենքում(ուսումնական սենյակում) կամ սովորական աշխատավայրում: Մասնակիցները պետք է տեղավորվեն մեկմեկու

դիմաց, օրինակ՝ կլոր սեղանի շուրջ:

***Քննարկման ընթացքում նախաձեռնությունը պետք է իր վրա վերցնի աշխատանքի կազմակերպիչը:***

Կարևոր գործոն է համարվում մտերմիկ մթնոլորտը: Ընտրեք սենյակ, որտեղ չի զանգի հեռախոսը և չկան անձանոթներ:

***Ո՛վ է մասնակցում քննարկմանը.***

Պետք է մասնակցեն գործողությունների բոլոր մասնակիցները: Պետք է հայտարարել՝ պարտադիր է բոլորի ներկայությունը: Բայց սենյակում 15 մարդուց ավելի չպետք է գտնվեն: Եթե խումբը գերազանցում է այդ թիվը, անհրաժեշտ է այն բաժանել երկու առանձին խմբերի: Նրանք, ովքեր չեն մասնակցել աշխատանքին (բարձրագույն ղեկավարություն, լրագրողներ և այլն) չեն կարող մասնակցել քննարկմանը:

***Ո՛վ պետք է անցկացնի քննարկումը.***

Որպես կարգ, քննարկումը անցկացվում է թիմի ղեկավարի կողմից: Հազվադեպ այն անցկացնում է այլ խմբի ղեկավար կամ անկախ փորձագետ, օրինակ՝ հոգեբան: Եվ ավելի հազվադեպ քննարկումը անցկացնում են երկու մարդ:

***Քննարկում վարողը պետք է ծանոթ լինի ճգնաժամային և սթրեսային ռեակցիաների գիտելիքների հիմունքներին, ճգնաժամային աջակցմանը և ներխմբային գործընթացներին:*** Դեռ չի հաջողվել հստակ որոշել թե ով պետք է հանդիսանա այդ մարդը: Սակայն պարզ է, որ քննարկման մասնակիցները պետք վստահեն նրան որպես անձի և մասնագետի: Քննարկման հաջողությունը կախված է նաև կոլեկտիվի համախմբվածությունից:

### ***Ընթացակարգը.***

Լավ կազմակերպված կարծիքների փոխանակումը սովորաբար զբաղեցնում է մեկից չորս ժամ: Լավ է այն անցկացնել առավոտյան:

### ***Ներածություն.***

Ղեկավարը բացատրում է հավաքվելու նպատակը: Երաշխավորվում է բոլոր քննարկվող հարցերի գաղտնիությունը: Ոչ մեկն իրավունք չունի պատմելու որևիցե բան քննարկմանը ներկա որևէ մասնակցի մասին: Եվ վերջապես՝ երաշխավորվում է քննարկման արդյունքում ասվածները ղեկավարության կողմից մասնակիցների դեմ երբեք չօգտագործելը:

***Ամենագլխավորը, որպեսզի քննարկումը անցկացվի ընկերական մթնոլորտում:*** Ոչ մեկի զգացմունքներին չպետք է դիպչել: Խնդրեք ներկաներին կիսվել ամենաանսովոր տպավորություններով;

### ***Փաստերի բաժին.***

Վարող ղեկավարը խնդրում է մասնակիցներին պատմել, թե ինչով է յուրաքանչյուր մասնակից զբաղվել գործողությունների ժամանակ: Թույլ տվեք արտահայտվեն բոլորը, այդ թվում նաև ղեկավարին՝ հանգիստ, բայց համառորեն ընդհատեք սեփական հերոսություններով «տարված» մասնակցի զրույցը:

### ***Յուզական բաժին.***

Այն բանից հետո, երբ բոլորն արդեն վերջացնում են պատմելը փաստերի վերաբերյալ, ղեկավարը հարցնում է նրանց զգացողությունների մասին.

- Ի՞նչ եք զգացել ամենալարված պահերին,

- Ինչն է Ձեզ տրվել ամենադժվարը:
- Հիշողության մեջ պահում եք դեռ տհաճ պատկերները, ձայները, հոտերը:
- Չգացե՞լ եք Դուք Ձեզ պատահարի գոհ:
- Ինչպե՞ս եք Դուք զգում Ձեզ այժմ:
- Նկատե՞լ եք Դուք Ձեզ մոտ ինչ որ այլ սթրեսային ախտանիշներ:

Լավ կլինի հարցերը գրել գրատախտակին: Չրույց վարողը պետք է հետևի, որպեսզի ոչ մեկը զրույցից անմասը չմնա: Թույլ մի տվեք ոչ մեկին մնացածների կարծիքները ճնշելով չափից ավելի խոսի: Խնդրեք մասնակիցներին լինել ուշադիր ուսկնդիր: Եթե խումբը բաժանված է մի քանի խմբերի, հենց սկզբից ճշտեք, որ ընդհանուր քննարկում չլինի:

***Ուսուցողական և եզրափակիչ բաժին.***

Հիմնվելով սեփական գիտելիքների վրա զրույց վարողը վերջում ներկայացնում է սթրեսների և հատկապես նորմալ նախասթրեսային ռեակցիաների մասին: Ջանացեք պատասխանել բոլոր հարցերին: Տվեք անհրաժեշտ հանձնարարականներ:

Լավ կլինի չկազմակերպել քննարկում աշխատանքային օրվա վերջում: Նոր ուժերով մարդիկ պետք է շարունակեն աշխատանքը:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ցանկացած որոնողափրկարարական գործողություն, իսկ միջազգայինը առանձնապես, իրենից ներկայացնում է բարդ տեխնոլոգիական գործընթաց: Այդ գործընթացները աշխատանքում մենք ներկայացրել ենք ավարտուն տեխնոլոգիական տարրերի տեսքով: Ուստի, յուրաքանչյուր բաժին և ենթաբաժին ունեն ինքնուրույն նշանակություն: Միջազգային SAR թիմի փրկարարական գործողությունների անցկացման ողջ տեխնոլոգիաների մանրամասն նկարագրությունը հավանաբար հնարավոր է, սակայն դա մեր աշխատանքի նպատակը չի հանդիսացել: Մենք կանգ ենք առել սույ միջազգային փրկարարական գործողությունների իրականացման առավել կարևոր տեսակետերի ներկայացման վրա:

Կիրառելով այդ տեխնոլոգիաները, ընթերցողը կարող է ինքնուրույն պլանավորել աշխատանքները, որոշել կատարվող աշխատանքների ռազմավարությունը և տակտիկան, բաշխել ռեսուրսները, հաշվի առնել փրկարարական գործողությունների հոգեբանական առանձնահատկությունները, նման ձևով կառուցել ողջ տեխնիկական ցիկլը: Ընտրության ճշտությունը և տեխնոլոգիաների կառուցումը վերջնականորեն բերում է փրկարարական գործողությունների հաջողության: Մարդային կյանքերի փրկման:

Միշտ հիշե՛ք, որ.

- ԱԻ-ը պատկանում է տուժած երկրին:
- Թիմը ժամանել է օգնություն ցուցաբերելու նպատակով, այլ ոչ թե ազգային փրկարարական ստորաբաժանումների հանդեպ սեփական գերազանցությունը ցուցադրելու:



- Չկան «հարազատ» տուժածներ:
- Փրկարարական աշխատանքների անցկացման ժամանակ թույլ չի տրվում ցանկացած մրցակցություն:
- Մի եղի՛ր հերոս:

**ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ  
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ  
ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ**

- INSARAG** Որոնողափրկարարական հարցերով միջազգային խորհրդակցական խումբ
- IFRC** Կարմիր խաչի միջազգային կոմիտե
- LEMA** Ահ-ում տեղական կառավարման օրգան
- MSF** Բժիշկներ առանց սահմանի
- OSOCC** Գործողությունների համաձայնեցման կենտրոն
- SAR** Որոնում և փրկում
- UN** Միացիալ ազգերի կազմակերպություն
- UNDAC** Աղետների հետևանքների կորոգինացման և գնահատման խումբ
- UN OCHA** ՄԱԿ-ի հումանիտար հարցերի կորոգինացիայի գրասենյակ
- UNISEF** ՄԱԿ-ի մանկական ֆոնդ
- UNDP** Միացյալ ազգերի կազմակերպության զարգացման ծրագիր
- UNHCR** Փախստականների հարցերով գերագույն կոմիսարիատի վարչություն
- UNEP** Շրջապատող միջավայրին նվիրված ՄԱԿ-ի ծրագիր
- WHO** Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Ս., Ղազարյան Մ., Դանիելյան Ս., Լեռնափրկարարական գույքի փորձարկում, /Մեթոդական ուղեցույց/ Երևան, 2006
2. Ազարյան Ս., Ղազարյան Մ., Դանիելյան Ս., Երկրաշարժերի ժամանակ վթարափրկարարական և այլ անհետաձգելի աշխատանքների կազմակերպումն ու տեխնոլոգիաների կիրառումը /ուսումնական ձեռնարկ/, Երևան, 2006
3. Ազարյան Ս., Չատինյան Ա., Ղազարյան Մ., Դանիելյան Ս., Ծայրահեղ իրավիճակներում անվտանգ կենսագործունեության և գոյատևման գաղտնիքները /ուսումնական ձեռնարկ/, Երևան, 2006
4. Булатов В.О., Думчева М.М. Осуществление координации международных поисково-спасательных отрядов в ходе поисково-спасательных работ согласно методологии международной консультативной группы по вопросам поиска и спасения (инсараг) Текст научной статьи по специальности «Общие и комплексные проблемы технических и прикладных наук и отраслей народного хозяйства» , М; 2010
5. Воробьев Ю.Л. и др. Учебник спасателя.М., 1997,2003
6. Воробьев Ю.Л. и др. Охрана труда спасателя. М., 1998
7. Туркевич М. Поисково-спасательные работы в горах. М., 2000
8. Учебно-методическое пособие по выполнению приемов и

*способов спасения пострадавших в очагах поражения. М., МВКУДИВ, 1997*

9. *Шойгу С.К. и соавт. Учебник спасателя. М., 1997., 2002*
10. *Arvidsson O. Study of the training of fire and rescue services personnel in various countries. (Перевод 7419) М; ВНИИПО, 1987.*
11. *Briggs A. S. How basic Fitness tests can improve the physical efficiency of fire fighters Fire. 1987.*
11. *Fire Fighter Professional Qualifications. NFPA 1001. 1981*
12. *Wood J. F. Fire services training in New Zealand. Fire Eng. 1979*
13. <https://www.insarag.org/>
14. [https://en.wikipedia.org/wiki/International\\_Search\\_and\\_Rescue\\_Advisory\\_Group](https://en.wikipedia.org/wiki/International_Search_and_Rescue_Advisory_Group)

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## **ԳԼՈՒԽ 1. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ..... 11**

- 1.1. Որոնման և փրկման հարցերով միջազգային խորհրդատվական խումբ ..... 11
- 1.2. Տուժած երկրի կողմից օգնության վերաբերյալ խնդադրման անցման ուղիները և ընթացակարգը ..... 12
- 1.3. Միջազգային որոնողափրկարարական կազմակերպության արձագանքման հիմնական կարգը ..... 14
- 1.3.1. UN /OCHA/ Կազմակերպության պարտականությունները ..... 14
- 1.3.2. Աղետի ենթարկված երկրի պարտավորությունները ..... 15

## **ԳԼՈՒԽ 2. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ..... 17**

## **ԳԼՈՒԽ 3. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄԸ ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԹԻՄԵՐՈՒՄ ..... 25**

- 3.1. Միջազգային փրկարարական գործողությունների ժամանակ որոնողափրկարարական թիմի կառուցվածքը ..... 26
- 3.2. Ա՛ի գոտի ժամանումը, լիազորության ոլորտի ճշգրտումը ..... 29
- 3.3. Բազային ճամբարի տեղի որոշումը ..... 33
- 3.4. Աշխատանքների աշխատատարության և ծավալի որոշումը ..... 35
- 3.5. Տեղական հրամանատարական կառույցների հետ փոխգործողությունները ..... 37
- 3.6. Զոկատի ղեկավարումը ..... 40

## **ԳԼՈՒԽ 4. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԳԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ..... 48**

- 4.1. Փրկարարական աշխատանքների վարումը ..... 48
- 4.2. Որոնման ռազմավարությունը ..... 50

4.3.	Մեծամասշտաբ գործողություններում որոնողական աշխատանքների գերակայությունը .....	50
4.4.	Որոնման և հետախուզման ստորաբաժանումները .....	51
4.5.	Որոնողական աշխատանքներին գերակայությունը անմիջականորեն աշխատանքային գոտում .....	55
4.6.	Փրկարարական աշխատանքների անցկացման և կազմակերպման տակտիկան .....	57
4.7.	Որոնում շների միջոցով .....	59
4.8.	Որոնում էլեկտրոնային միջոցների կիրառմամբ .....	61
4.9.	Որոնում էլեկտրոնային դիտարկման սարքերի կիրառմամբ .....	63
4.10.	Ֆիզիկական որոնում .....	64

**ԳԼՈՒԽ 5. ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ**

<b>ԱՌԱՆՁՆԱԶՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ</b> .....	66
5.1. Փրկարարական աշխատանքների անցկացումը .....	66
5.1.1. Ռազմավարության հարցեր .....	69
5.1.2. Փրկարարական ստորաբաժանումների կազմը .....	69
5.1.3. Փրկարարական ստորաբաժանման ծավալումը .....	70
5.1.4. Սարքավորումների պահեստի կառավարումը: Աշխատատեղերը գործիքներով, սարքավորումներով ապահովումը և պահուստներով համալրումը .....	72
5.1.5. Օգնությունը փրկարարական գործողություններում .....	74
5.1.6. Կառավարումը և համաձայնեցումը փրկարարական աշխատանքների անցկացման տարածքներում .....	75

**ԳԼՈՒԽ 6. ՏԱԿՏԻԿԱՅԻՆ ԿԵՐԱԲԵՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԸ** .....
 79 |

6.1.	Որոնման գնահատման հավանականությունները .....	79
6.2.	Փրկարարական ռեսուրսների ներգրավումը որոնողական աշխատանքներում .....	83
6.3.	Փրկարարական աշխատանքների անցկացման տարածքի կազմակերպումը .....	86
6.4.	Տեղամասում փրկարարական աշխատանքներ	

կատարող անձնակազմը .....	90
6.5. Ջոկատի ծառայության փոխգործողությունները .....	93
6.6. Աշխատանքային տեղամասում անձնակազմի անվտանգությունը .....	95

**ԳԼՈՒԽ 7. ՈՐՈՆՈՂԱՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ  
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ**

<b>ԲԱՇԽՈՒՄԸ ԵՎ ՆՇԱԳԾՈՒՄԸ .....</b>	<b>99</b>
7.1. Իրավիճակի առաջնային գնահատումը .....	100
7.2. Նշագծման/маркировка/ համակարգը .....	101
7.3. Օբյեկտների բաշխումը ըստ կատարվող աշխատանքների հերթականության .....	107

**ԳԼՈՒԽ 8. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ .....**

<b>ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>128</b>
<b>ԱՇԽԱՏԱՆՔՈՒՄ ԿԻՐԱՌՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ</b>	
<b>ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ .....</b>	<b>130</b>
<b>ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>131</b>

## Ս. Բ. Դ Ա Ն Ի Ե Լ Յ Ա Ն

Մ Ի Զ Ա Չ Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Ն Ո Ղ Ա Փ Ր Կ Ա Ր Ա Ր Ա Կ Ա Ն  
Ա Շ Խ Ա Տ Ա Ն Զ Ն Ե Ր Ի Մ Ա Ր Տ Ա Կ Ա Ր Ո Ւ Թ Յ Ա Ն  
Հ Ի Մ Ն Ա Հ Ա Ր Ց Ե Ր Ը

Ուսումնամեթոդական ձեռնարկ

*Խմբագիր՝ Ս. Բ. Խաչատրյան*  
*Տեխ. խմբագիր՝ Ս. Բ. Խաչատրյանի*  
*Համակարգչային ձևավորումը՝ Ս. Բ. Խաչատրյանի*



Տպագրված է «ԱՍՈԴԻԿ» հրատարակչության տպարանում:  
Ֆորմատ 60x84 1/16, Թուղթ՝ օֆսեթ, Տպաքանակ՝ 165  
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)  
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)  
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63  
Էլ. փոստ՝ [info@asoghik.am](mailto:info@asoghik.am)